




ԵՎՐԱՄԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՄԱԳՈՒԹՅՈՒՆ  
ԵՄՆԱԴՐԱՄ

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արդար դատաքննության իրավունք  
Հայաստան



Հետազոտություն

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔ. ՀԱՅԱՍՏԱՆ

Երևան, 2021



ԵՎՐԱՍԻԱ  
ՆԱՄԱԳՈՐԾԱԿԳՈՒԹՅՈՒՆ  
ԻՆՏԵՆՏԻՎ

ՀՏԴ 341.1/8(042.3)

ԳՄԴ 67.412.1

Մ 356

Ուսումնասիրությունը հայերեն հրատարակություն է, որը պատրաստել է Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը «Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում: Այն իրականացնում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը «Հելսինկյան ասոցիացիա» և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ:

Ուսումնասիրության բովանդակությունը և արտահայտված տեսակետները Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամին են և կարող են չհամընկնել Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կամ «Հելսինկյան ասոցիացիա» և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունների տեսակետներին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վերլուծություն. արդար դատաքննության իրավունք. Հայաստան: Չեկոյց.- Եր.: Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, 2021 - 149 էջ:

ՀՏԴ 341.1/8(042.3)

ԳՄԴ 67.412.1

ISBN 978-9939-1-1258-9

© Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, 2021

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ.....</b>	<b>4</b>
<b>ԲԱԺԻՆ 1</b>	
<b>ՔՐԵԱՂԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻՆ ԱՈՆԶՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ ..... 6</b>	<b>6</b>
<b>ԲԱԺԻՆ 2</b>	
<b>ՈՂԶԱՄԻՏ ԺԱՍԿԵՏԻ ՊԱՇՏՊԱՆՄԱՆԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՈՆԶՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ .....</b>	<b>46</b>
<b>ԲԱԺԻՆ 3</b>	
<b>ԱՈՆԱԶԻՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՊԱՏՃԱՈՒՄԱՆ ՊԱՇՏՊԱՆՄԱՆ ԱՈՆԶՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ .....</b>	<b>93</b>
<b>ԲԱԺԻՆ 4</b>	
<b>ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՍՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԳՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՏԳԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ. ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՆՁԱՆՑ՝ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՏԳԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ .....</b>	<b>126</b>
<b>ABSTRACT .....</b>	<b>147</b>
<b>ՀԱՄԱՈՐՏԱԳԻՐ .....</b>	<b>148</b>

# ՆԱԽԱԲԱՆ

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները պարտավորվում են կատարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերջնական վճիռները յուրաքանչյուր գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են: Կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Նախարարների կոմիտեն: Այսպիսով, պետությունները պարտավորություն են ստանձնում ձեռնարկել անհատական և ընդհանուր միջոցներ՝ համապատասխանաբար դիմումատուների իրավունքների խախտումները վերացնելու (փորձելով հնարավորինս վերականգնել միևնույն իրավունքի խախտումը եղած դրությունը) և նոր համանման խախտումները կանխարգելելու նպատակով:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիոն համակարգի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման մակարդակով, ինչն իր հերթին ենթադրում է ներպետական օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան Դատարանի կողմից սահմանված չափանիշներին համապատասխանեցնելուն ուղղված մշտական բնույթ կրող գործընթաց:

Մինչդեռ նույնաբովանդակ խախտումների վերաբերյալ կրկնվող գանգատների ներկայացումը Մարդու իրավունքների եվրոպական դատարան վկայում է իրավունքի խախտման պատճառ հանդիսացող համակարգային խնդրի ամկայության մասին և ենթադրում է համարժեք կանխարգելիչ միջոցների ձեռնարկման անհրաժեշտություն:

Սույն հետազոտությունն ուղղված է Մարդու

իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրող վճիռների<sup>1</sup> կատարմանն առնչվող խնդիրների վերհանմանը թե՛ օրենսդրության, թե՛ իրավակիրառ պրակտիկայի մակարդակում փորձելով նպաստել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործմանը, քաղաքացիների արդար դատաքննության իրավունքի պատշաճ իրացմանը և արձանագրված խախտումների կրկնման բացառմանը ապագայում:

Հետազոտության շրջանակներում առանձնացվել են Հայաստանի նկատմամբ կայացված<sup>2</sup> մի շարք վճիռներ, որոնցով արձանագրված խախտումները առավել խնդրահարույց են դիտարկվել դրանց հիմքում ընկած օրենսդրական կամ իրավակիրառ բնույթի խնդիրների տեսանկյունից<sup>3</sup>. դրանց վերլուծության արդյունքում առաջարկվել են նաև մատնանշված խախտումների կանխարգելմանն ուղղված որոշակի լուծումներ:

Հույս ունենք, որ իրականացված հետազոտությունը օգտակար կլինի իրավասու պետական մարմինների համար՝ վեր հանված խնդիրները ուշադրության կենտրոնում պահելու և համակարգային լուծումներ գտնելու տեսանկյունից, ինչպես նաև կնպաստի ՀՀ-ում արդար դատաքննության իրավունքի պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը:

---

1. Հայաստանի Հանրապետության նկատմամբ կայացված:

2. 2020 թ.-ի հոկտեմբերի դրությամբ:

3. Համապատասխան վճիռների ընտրությունը և առանձնացված խնդիրների վերլուծությունը սպառիչ լինելու հավակնություն չունեն. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներից բխող խնդիրների հետազոտությունը կրելու Է շարունակական բնույթ: Առանձին հետազոտության առարկա պետք է դառնա Նանուշյանը և Վարդանյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճիռից բխող դատավորի անկողմնակալությանն առնչվող խնդիրների առկայության գնահատումը դատական պրակտիկայում:

# ԲԱԺԻՆ 1 ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻՆ ԱՌՆԶՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

## ՍՏԵՓԱՆՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ (ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 45081/04)<sup>4</sup>

### ՎԵՐԱՔՆՆԻՅ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Նաև Դատարան, ՄԻԵԴ) ճանաչել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ քրեական դատարանը, հանդիսանալով «փաստի հարցեր» քննող դատարան, չի ապահովել դիմողի և նրա դեմ ցուցմունք տված անձանց հարցաքննության հնարավորությունը:

Դատարանը գտել է, որ դիմողի բողոքը քննած Վերաքննիչ դատարանի Նախագահի որոշման բովանդակությունից, մասնավորապես այն եզրահանգումից, որ «դիմումատուն կատարել է վերը նշված գործողությունները», բխում է, որ Վերաքննիչ դատարանի Նախագահն իրավասու էր քննելու ոչ միայն իրավունքի, այլ նաև փաստի հարցեր: Բացի այդ, Նախագահն իրավասու էր կատարելու դիմումատուի մեղքի կամ անմեղության լրիվ գնահատում և նշանակելու պատիժ, ինչը Նա արել է գործի գրավոր նյութերի հիման վրա:

Դատարանը գտել է, որ գործի որոշակի հանգամանքներում դիմումատուի մեղավորությունը կամ անմեղությունը չէր կարող որպես արդար դատաքննության հարց պատշաճ կերպով որոշվել՝ առանց դիմումատուի և նրա դեմ ցուցմունք տված վկաների (կոնկրետ դեպքում՝ ոստիկանների) անձամբ տված ցուցմունքների ուղղակի գնահատման (դրանք հակասել են միմյանց, և դիմողը վերաքննիչ բողոքում վիճարկել է իր դեմ տված ցուցմունքների ճշմարտացիությունը):

4. Ստեփանյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 45081/04, 2009 թ. հոկտեմբերի 27), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-95288>:

## Կառավարության գործողությունների հաշվետվություն (24.10.2014 թ.)<sup>5</sup> (հիմնական ընդհանուր միջոցներ)

- Դեռևս մինչև վճռի հրապարակումը կատարվել են օրենսդրական փոփոխություններ, և վերացել է վարչական կալանքի ինստիտուտը:
- 2007 թ.-ին ստեղծվել է մասնագիտացած Վարչական դատարանը, իսկ 2010 թ.-ին՝ վերադաս ատյանը՝ վերաքննիչ վարչական դատարանը, որի որոշումներն էլ Վճռաբեկ դատարան բողոքարկելու հնարավորություն է սահմանվել:
- 2013 թ.-ին ընդունվել է համապարփակ Վարչական դատավարության օրենսգրքը, և, նոր դատավարական օրենսդրության համաձայն, կողմերը օգտվում են բոլոր հիմնական դատավարական իրավունքներից, այդ թվում՝
  - իրենց գործի լաման իրավունք,
  - ի պաշտպանություն իրենց ապացույցներ ներկայացնելու իրավունք,
  - ինքնաբացարկի միջնորդություններ ներկայացնելու իրավունք,
  - ապացույցներ ներկայացնելու և դրանց հետազոտմանը ներկա լինելու իրավունք,
  - միմյանց, վկաներին, փորձագետներին հարցաքննելու, միջնորդություններ ներկայացնելու և դատարանին բացատրություններ տալու իրավունք և այլն:

### Բանավոր դատաքննության իրավունքի մասով

Կառավարությունը նշում է, որ ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու դրա օրենսդրական երաշխիքը: Մասնավորապես, Վարչական դատավարության օրենսգրքի համաձայն, գործի քննությունն իրականացվում է բանավոր, միակ բացառությունը կողմերի երկուստեք համաձայնությունն է՝ գործը քննել գրա-

---

5. Մանրամասն տե՛ս [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2014\)1324E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2014)1324E):



վոր կարգով: Հատուկ շեշտվում է, որ, համաձայն Վարչական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի, Վերաքննիչ դատարանում գործի քննությունն իրականացվում է Վարչական դատարանում քննության կանոններին համապատասխան՝ նույն հոդվածի առանձնահատկությունների հաշվառմամբ, ինչը նշանակում է, որ բոլոր երաշխիքները, սահմանված առաջին ատյանի քննության համար, գործում են նաև այստեղ: Ըստ Կառավարության՝ վերը նշված դրույթները բացառում են ապագայում նման խախտման կրկնության ռիսկը, քանի որ դրանք հստակորեն երաշխավորում են վարչական վարույթում բանավոր լուսմների և մրցակցային դատավարության իրավունքները:

### **Վերաքննիչ դատարանի իրավասության մասով**

Կառավարությունը ներկայացնում է, որ Վերաքննիչ քրեական և զինվորական դատարանը լուծարվել է, և դրա փոխարեն ստեղծվում է Վերաքննիչ քրեական դատարան, իսկ բոլոր վարչական գործերն այժմ քննում է Վերաքննիչ վարչական դատարանը: Համաձայն Վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի՝ Վերաքննիչ վարչական դատարանը վերաքննիչ բողոքարկման շրջանակներում վերանայում է առաջին ատյանի վարչական դատարանի դատական ակտը բողոքի պահանջի սահմաններում, ձեռնարկում է համապատասխան միջոցներ գործն ըստ Էության քննելու համար: Բացի այդ, նույն դրույթի համաձայն, Վերաքննիչ վարչական դատարանը իրավասու է ընդունելու առաջին ատյանի դատարանում վարույթի ընթացքում չներկայացված և չհետազոտված ապացույցները: Դա նշանակում է, որ Վերաքննիչ վարչական դատարանը ուսումնասիրում է ինչպես իրավունքի, այնպես էլ փաստի հարցեր:

### **Օրենսդրական կարգավորումներ/խնդիրներ**

#### **Վարչական դատավարության մասով**

Վերաքննիչ վարչական դատարանում գործի դատաքննության կարգը սահմանում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի

142-րդ հոդվածը: Ըստ այդմ, Վերաքննիչ դատարանում գործի դատաքննությունն իրականացվում է Վարչական դատարանում դատաքննության իրականացման կանոններին համապատասխան՝ Նույն հոդվածի առանձնահատկությունների հաշվառմամբ: Հոդվածի 3-րդ մասը սահմանում է այդ առանձնահատկությունները, և, ըստ այդմ, դատաքննությունը Վերաքննիչ դատարանում սկսվում է նախագահող դատավորի զեկուցմամբ. նա շարադրում է բողոքի և պատասխանի ամփոփ բովանդակությունը, այնուհետև կոլեգիալ կազմի դատավորներն իրավունք ունեն հարցեր տալու նախագահող դատավորին, դատավարության մասնակիցներին, որից հետո գործի դատաքննությունը ավարտվում է, և հայտարարվում են դատական ակտը հրապարակելու վայրն ու ժամանակը:

Վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի (Վերաքննիչ դատարանում վերաքննության սահմանները) 1-ին մասը սահմանում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ Էության քննելու համար: Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

«2. Վերաքննիչ դատարանն ընդունում է սույն օրենսգրքով կամ վարչական դատարանի սահմանած ժամկետում դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված ապացույցները, բացառությամբ այն դեպքի, երբ համարում է, որ դրանք գործի լուծման համար էական նշանակություն չունեն (...):

3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ վարչական դատարանում հաստատված փաստն ընդունվում է որպես հիմք, եթե բողոքում այդ փաստը չի վիճարկվում, կամ վերաքննիչ դատարանն անհրաժեշտ չի համարում կրկին հետազոտել այն»:

Մեջբերված դրույթների մեկնաբանության արդյունքում հնարավոր է բխեցնել ստորադաս ատյանում հետազոտված ապացույցները վերաքննիչ դատարանում կրկնակի հետազոտելու հնարավորությունը: Սակայն ամեն դեպքում հնարավոր չէ նույնացնել առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցները կրկին հետազոտելու և հարցաքննված վկաներին կրկին հարցաքննելու հնարավորությունը, քանի որ ապացույց է համարվում վկայի տված ցուցմունքը, իսկ վկային կրկին հարցաքննելու արդ-

յունքում ձևավորվող ապացույցը նոր ցուցմունքն է՝ նոր ապացույց:

Նմանապես թեև 144-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը հստակ սահմանում է հնարավորություն՝ վերաքննիչ դատարան ներկայացնելու և հետազոտելու նաև ստորադաս ատյանում չներկայացված ապացույցները, գործող իրավակարգավորման պայմաններում այն չի կարող նույնացվել առաջին ատյանի դատարանում չհարցաքննված վկաներին հարցաքննելու հնարավորության հետ:

### **Քրեական դատավարության մասով**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի համաձայն՝ Վերաքննիչ քրեական դատարանում գործերի քննությունը կատարվում է 391-րդ հոդվածով սահմանված կանոններով կամ Վճռաբեկ դատարանում գործերի քննության համար ամրագրված կանոններով՝ բացառությամբ Վճռաբեկ դատարանում բողոքի քննության գրավոր ընթացակարգով սահմանված կարգի<sup>6</sup>: Ըստ այդմ, առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցները վերաքննիչ դատարանում հետազոտվում են միայն կողմի միջնորդությամբ, և եթե դատարանը դա համարում է անհրաժեշտ:

Վերոգրյալից բացի՝ օրենսգրքի 382-րդ հոդվածը բացառիկ դեպքերում կողմերին իրավունք է ընձեռում իրենց բողոքի, ինչպես նաև մյուս կողմի բողոքի կապակցությամբ տրված պատասխանների հիմքերը հաստատելու համար դատարան ներկայացնելու նոր նյութեր կամ միջնորդելու դատարան կանչել իրենց նշած վկային կամ փորձագետին, նշանակելու փորձաքննություն, եթե նրանք հիմնավորում են, որ օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել դա անելու, կամ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է անհիմն:

Այսպիսով, ըստ Եուրոյան, Վերաքննիչ քրեական դատարանն ունի օրենսդրական հնարավորություն գործի քննության շրջանակում հետազոտելու նախկինում հետազոտված ապացույցները, ավելին, ընդունելու և ձեռք բերելու նոր ապացույցներ և հարցաքննելու նախկինում չհարցաքննված վկաներին, սակայն, ինչպես և Վե-

6. Վճռաբեկ դատարանում բողոքի քննության կարգն ըստ Եուրոյան չի ենթադրում ապացույցների հետազոտում (Քրեական դատավարության օրենսգրք, հոդված 418):

րաքննիչ վարչական դատարանը, չունի հնարավորություն՝ հարցաքննելու արդեն իսկ հարցաքննված վկաներին:

Նույն խնդիրները պահպանված են նաև նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագծում՝ հոդված 365, հոդված 369, 4-րդ մաս:

## Իրավակիրառ պրակտիկա/խնդիրներ

Գործնականում ևս վերաքննիչ վարչական դատարանը չի ստեղծում հնարավորություն՝ հարցաքննելու թե՛ առաջին ատյանի դատարանում հարցաքննված, թե՛ չհարցաքննված վկաներին, ինչը Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի (այսուհետ՝ նաև *Հիմնադրամ*) հարցմանն ի պատասխան հաստատել է դատարանի աշխատակազմի ղեկավարը, ըստ որի՝ նման դատական պրակտիկա գոյություն չունի:

Ինչ վերաբերում է նույն հարցի կապակցությամբ վերաքննիչ քրեական դատարանի ձևավորած դատական պրակտիկային, ապա դատական տեղեկատվական համակարգից ([www.datalex.am](http://www.datalex.am)) տեղեկանում ենք, որ կան բազմաթիվ քրեական գործեր, որոնցով դատարանը հետազոտել է թե՛ ստորադաս ատյանում հետազոտված, թե՛ նոր ձեռք բերված ապացույցներ, հարցաքննել նախկինում չհարցաքննված վկաներին, տուժողին կամ փորձագետներին<sup>7</sup>, սակայն չեն արձանագրվել գործեր, որոնցով դատարանը հարցաքննել է առաջին ատյանում արդեն իսկ հարցաքննված վկաներին:

5-20 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող շուրջ 10 փաստաբանների (այսուհետ՝ նաև *փաստաբաններ*) հետ վարած հարցազրույցների արդյունքներով ևս փաստվել է նմանօրինակ պրակտիկայի գրեթե բացակայությունը: Մասնավորապես հարցվածներից երկուսն են միայն Նշել, որ գործնականում ունեցել են մեկական դեպք, երբ վերաքննիչ քրեական դատարանը բավարարել է առաջին ատյանում հարցաքննված վկային/փորձագետին հարցաքննելու միջնորդությունը:

---

7. Մանրամասն տե՛ս ԱՐԴ1/0006/01/19, ԱՐԱԴ/0043/01/17, ԱԿԴ/0076/01/17, ՍԴ3/0070/01/17, ԱՐԴ/0076/01/16, ԵԱԶԴ/0123/01/16, ԵԿԴ/0145/01/16:

## Եզրակացություն

Հետազոտության արդյունքում փաստում ենք, որ *Ստեփանյանն ընդդեմ Հայաստանի* գործով ՄԻԵԴ կայացրած վճռից բխող ընդհանուր միջոցների կիրառման խնդիր առկա է թե՛ օրենսդրական մակարդակում, թե՛ իրավակիրառ պրակտիկայում: Մասնավորապես ո՛չ վարչական, ո՛չ քրեական դատավարության օրենսդրությունը չի սահմանում առաջին ատյանի դատարանում հարցաքննված վկային անհրաժեշտության դեպքում վերաքննիչ դատարանում հարցաքննելու և նրա ցուցմունքներն ուղղակի գնահատելու հնարավորություն: Միաժամանակ դատարանները որպես կանոն ևս այս հարցի շուրջ չեն առաջնորդվում անմիջականորեն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև *Կոնվենցիա*) պահանջներով:

## ԳԱՔՐԻԵԼՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆՈՒՄ ԹԻՎ 8088/05)<sup>8</sup>

## ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆՈՒՄ ԹԻՎ 27866/10)<sup>9</sup>

## ԱՎԵՏԻՍՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆՈՒՄ ԹԻՎ 13479/11)<sup>10</sup>

## ՄԱՆՈՋԱՐՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆՈՒՄ ԹԻՎ 35688/11)<sup>11</sup>

## ՍԱՍՐՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆՈՒՄ ԹԻՎ 3571/09)<sup>12</sup>

## «ԶԱՎՊ» ՍՊԸ-Ն ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆՈՒՄ ԹԻՎ 15485/09)<sup>13</sup>

## ՂԱՂԱՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆՈՒՄ ԹԻՎ 14078/12)<sup>14</sup>

## ԱՎԱԳՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆՈՒՄ ԹԻՎ 1837/10)<sup>15</sup>

## ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆՈՒՄ ԹԻՎ 18550/13)<sup>16</sup>

---

8. Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 8088/05, 2012 թ. ապրիլի 10), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-110266>:

9. Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 27866/10, 2016 թ. հոկտեմբերի 27), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-167762>:

10. Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 13479/11, 2016 թ. նոյեմբերի 10), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-168390>:

11. Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 35688/11, 2016 թ. նոյեմբերի 24), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-168860>:

12. Սաստրյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 3571/09, 2017 թ. ապրիլի 27), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-173089>:

13. «Զավպ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 15485/09, 2017 թ. մայիսի 4), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-173366>:

14. Ղաղայանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 14078/12, 2018 թ. սեպտեմբերի 6), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-186037>:

15. Ավագյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 1837/10, 2018 թ. նոյեմբերի 22), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-187688>:

16. Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 18550/13, 2018 թ. դեկտեմբերի 6), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-187941>:

## ԽՆԴԻՐ<sup>17</sup>

Նշված խումբ գործերով (*Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի*<sup>17</sup>՝ առաջատար, մյուսները՝ կրկնվող) Դատարանը ճանաչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի Դ կետի և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտումներ մի շարք հիմքերով՝ առնչվող ինչպես այն վկաներին, որոնց նախաքննական ցուցմունքները որոշիչ նշանակություն են ունեցել գործի ելքի համար (անձի մեղավորությունը հաստատելու առումով), այնպես էլ փորձագետներին հարցաքննելու հնարավորությունը չապահովելուն ու դատաքննության ժամանակ նրանց բացակայությանը հակակշռող երաշխիքների անբավարարությանը:

## ՉԱԿԱՅԻՆ ԵՆԴՊԵՆ ՀԱՅՄԱՏԱՆԻ<sup>18</sup>

Դատարանն արձանագրել է, որ թե՛ առաջին ատյանի, թե՛ վերաքննիչ դատարանի ջանքերը՝ պարզելու բնակության վայրից բացակայող վկաների գտնվելու վայրը և ապահովելու նրանց հարցաքննելու հնարավորությունը, չեն կարող բավարար համարվել և երաշխավորել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավունքը: Մասնավորապես դատարանները նշված վկաների ներկայությունն ապահովելու համար դիմել են Ոստիկանության օգնությանը, սակայն վերջինս, վկաների՝ բնակության վայրից բացակայելու մասին տեղեկանալուց բացի, որևէ այլ ջանք չի գործադրել նրանց գտնվելու վայրը պարզելու համար, այդ թվում՝ չկար որևէ ապացույց առ այն, որ Ոստիկանությունը փորձել է գտնել նրանց բնակության նոր հասցեները կամ տեղեկանալ նրանց բա-

17. Ալ-Խավաջան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության [Մեծ պալատ] [Al-Khawaja and Tahery v. the United Kingdom [GC]], թիվ 26766/05 և 22228/06 գործի 119-147-րդ պարբերություններում Մեծ պալատը հստակեցրել է այն սկզբունքները, որոնք պետք է կիրառվեն այն դեպքում, երբ վկան դռնբաց դատական քննությանը չի ներկայանում: Այդ սկզբունքները մանրամասն պարզաբանվել են Շաչաշվիլին ընդդեմ Գերմանիայի [Մեծ պալատ] [Schatschaschwili v. Germany [GC]] գործում (թիվ 9154/10, §§ 111-131): Ըստ այդմ, դատարանը նախ պետք է քննի այն հարցը, թե արդյոք հիմնավոր պատճառ կա չներկայացած վկայի տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելու համար, արդյոք այդ ցուցմունքը վճռորոշ կամ միակ ապացույցն է, թե ոչ, և արդյոք առկա են դատական քննության ժամանակ վկայի բացակայությանը հակակշռող ընթացակարգային երաշխիքներ:

18. Զենարկվող խնդրի վերաբերյալ հիմնական դիրքորոշումները Դատարանը հայտնել է *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով, և դրանք մեծապես կրկնվում են մյուս գործերով, ուստի դրանց նվիրված բաժնում ներկայացվում են Դատարանի լրացուցիչ դիրքորոշումները:

ցակայության՝ ժամանակավոր կամ մշտական լինելու մասին: Բացի դրանից՝ Վերաքննիչ քրեական դատարանը, ինչպես Ոստիկանությունը, պարզելով, որ վկաներից մեկը մեկնել է Ռուսաստան, իսկ երկրորդը մեկնել է Հայաստանից, որևէ լրացուցիչ ջանք չի գործադրել՝ հայտնաբերելու նրանց գտնվելու վայրը, այդ թվում Ռուսաստան մեկնած վկայի գտնվելու վայրը հաստատելու համար փորձ չի արվել դիմելու նաև միջազգային իրավական օգնության:

Դատարանը գտել է, որ Նույնիսկ այն փաստը, որ վկան բացակայում է երկրից, ինքնին բավարար չէ նրան չհարցաքննելու համար, այլ պետությունից պահանջում է դրական քայլեր՝ մեղադրյալին ընձեռնելով հնարավորություն՝ հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված վկաներին:

Դատարանը արձանագրել է նաև, որ բացակայող վկայի կողմից ներկայացված ապացույցները ընդունելու համար լավ պատճառաբանման պահանջն առաջնային քննարկման խնդիր է, որը պետք է ուսումնասիրվի մինչ այդ ապացույցը միակը կամ որոշիչը համարելը, և Նույնիսկ երբ այն այդպիսին չէ, տեղի է ունենում Կոնվենցիայի խախտում, եթե վկային չհարցաքննելու համար հիմնավոր պատճառաբանություն չի ներկայացվում:

## **ՏԵՐ-ՍԱՐԳՅԱՆԸ ԸՆԴՊԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

Այս գործով Դատարանը համոզիչ չի համարել, որ վկաների՝ դատական քննությանը չներկայանալու պատճառները, այդ թվում՝ ֆինանսական միջոցների բացակայությունը, ընտանեկան և աշխատանքային հանգամանքները, կարող էին հիմնավոր համարվել նրանց չհարցաքննելու և նրանց՝ դիմողի դատապարտման համար որոշիչ նախաքննական ցուցմունքները որպես ապացույց ճանաչելու համար:

Դատարանը գտել է, որ ազգային դատարանները կարող էին հիմնվել միջազգային իրավական օգնության վրա՝ 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիային<sup>19</sup> համապատասխան, որի մասնակից են և՛ Հայաստանը, և՛ Ղազախստանը, այնինչ հեշտու-

---

19. Մանրամասն տե՛ս Կոնվենցիա քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին, ՀՀԱԳՆԴՊՏ 2004.12.20/3(11), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=79371>:



թյամբ ընդունել են վկաների կողմից ներկայացված նշված պատճառները՝ առանց նույնիսկ քննելու նրանց ճանապարհի և կեցության ծախսերը հատուցելու հնարավորությունը, որը նախատեսվում է նշված կոնվենցիայով:

## **ԱՎԵՏԻՍՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

Դատարանն արձանագրել է, որ վկաներից մեկի հետ նախաքննության ժամանակ կատարված առերեսումը բավարար չի եղել դատական քննության ժամանակ վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը լրացնելու համար, քանի որ ազգային դատարանը գնահատական չի տվել դիմողի և վկայի միջև առերեսման արդյունքներին վկայի ցուցմունքների հավաստիությունը գնահատելու տեսանկյունից:

Դատարանը նշել է նաև՝ այն, որ դիմումատուն համաձայնել է (ըստ Էության՝ ստիպված) դատական քննությունը շարունակել տվյալ վկաների բացակայության պայմաններում, չի նշանակում, որ նա հրաժարվել է իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու իրավունքից:

## **ՍԱՆՈՒԳԱՐՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

Ինչպես Գաբրիելյանի կամ Տեր-Սարգսյանի գործերով, այս դեպքում ևս Դատարանն արձանագրել է, որ վկայի բացակայությունը դատավարության երկրից ինքնին բավարար հիմք չէ դատաքննությունից նրա բացակայությունը արդարացնելու համար, և իշխանությունները պետք է «ակտիվորեն փնտրեն վկային» և ձեռնարկեն «բոլոր ողջամիտ միջոցները վկայի ներկայությունն ապահովելու համար»: Դատարանը բավարար չի համարել այն, որ ոստիկանությունը մի քանի անգամ այցելել է վկայի տուն և, տեղեկանալով, որ նա գտնվում է արտասահմանում, ո՛չ ստուգել է այդ տեղեկատվության հավաստիությունը, ո՛չ էլ փորձել պարզել վերջինիս գտնվելու վայրը:

## **ԱՍՏՏՐՅԱՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

Նշված գործով Վերաքննիչ քրեական դատարանն իր որոշման մեջ, հիմնավորելու համար դիմողի՝ տուժողին սպանելու շարժառիթ ունենալու հանգամանքը, հիմնվել է մի շարք վկաների նախաքննական ցուցմունքների վրա, որոնք չեն հետազոտվել ո՛չ առաջին ատյանի, ո՛չ վերաքննիչ դատարանի կողմից: Նշված վկաները դատարաններում ևս չեն հարցաքննվել:

Դատարանը գտել է, որ այդ ցուցմունքները նշանակալի դեր են ունեցել, և հնարավոր է, որ դրանք որպես ապացույց ճանաչելը նկարագրված պայմաններում սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները, ուստի Վերաքննիչ քրեական դատարանը պարտավոր էր դիմողին պաշտպանությունը պատշաճ կազմակերպելու և իր բոլոր փաստարկները ներկայացնելու հնարավորությունն ընձեռել: Նման հանգամանքներում փաստը, որ Վերաքննիչ դատարանն անձամբ չի քննել այն վկաներին, որոնց ցուցմունքները հետագայում օգտագործվել են դիմումատուի դեմ, կարող էր մեծապես ազդել դիմողի պաշտպանության իրավունքի վրա: Վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանում կամ իր վարույթում չհարցաքննված վկաների ցուցմունքները հիմք ընդունելու մասով Դատարանը արձանագրել է նաև ներպետական օրենսդրության խախտում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդված):

## **«ԳՎՊ» ՍՊԸ-Ն ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

Դատարանը 6-րդ հոդվածը կիրառելի է համարել նաև դիմումատու ընկերության նկատմամբ տուգանքներ, տույժեր սահմանելու վարույթների մասով (վարչական դատավարություն):

Դատարանը արձանագրել է, որ Վարչական դատարանը հրաժարվել է բավարարել մի շարք վկաների կանչելու վերաբերյալ դիմողի միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ Նրանց ցուցմունքները վերաբերելի չեն, հետևաբար Նրանց չներկայանալու հարգելի պատճառների հարցն անգամ չի բարձրացվել, այնինչ Վճիռ կայացնելիս դատարանը հիմնվել է հենց այդ վկաների տրամադրած փաստաթղթերի ու արած հայտարարությունների վրա (դրանք

ուևեցել են որոշիչ նշանակություն): Միաժամանակ այդ վկաներին հարցաքննելու՝ դիմումատու ընկերության հնարավորությունների սահմանափակումը հավասարակշռելու համար որևէ դատավարական երաշխիք չի եղել, մասնավորապես ՀՀ Վարչական դատարանը մերժել է դիմումատու ընկերության՝ այն ընկերությունների հարկային փաստաթղթերն ուսումնասիրելու պահանջը, որոնք պնդել են, թե դիմումատու ընկերության կողմից չեն ստացել պատշաճ ձևով փաստաթղթավորված ծառայություններ, ինչը հնարավորություն կարող էր տալ գնահատելու նրանց հայտարարությունների արժանահավատությունը:

## ԴԱՊԱՅՄԱՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այս գործով վկաները, որոնց ցուցմունքները որոշիչ նշանակություն են ունեցել դիմողի մեղավորության հարցը որոշելիս, դատապարտվել են Վրաստանի Հանրապետությունում, որի իշխանությունները մերժել են նրանց փոխադրումը Հայաստան՝ պատճառաբանելով, որ նրանց դատավճիռները դեռ օրինական ուժի մեջ չեն մտել և դեռևս ենթակա են վճռաբեկ կարգով բողոքարկման:

Դատարանը, այդուհանդերձ, այս հանգամանքը չի համարել վկաներին չհարցաքննելու հարգելի պատճառ՝ նշելով, որ առաջին ատյանի դատարանը չի ձեռնարկել որևէ այլ փորձ, օրինակ՝ պարզելու համար, թե երբ նրանց մեղադրական դատավճիռները կդառնան վերջնական, և արդյոք նրանք կարող են, համաձայն Ստրասբուրգի «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի կոնվենցիայի<sup>20</sup>, ավելի ուշ փուլում փոխադրվել Հայաստան: Չեն դիտարկվել նաև դիմումատուին՝ վկաներին հարցաքննելու հնարավորություն տալու այլ միջոցներ, օրինակ՝ Վրաստանում նրանցից բանավոր ցուցմունք վերցնելը կամ տեսակապը:

## ՍՎԱԳՅԱՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Դիմողի մեղավորությունը նշված գործով որոշվել է մի շարք փորձաքննությունների արդյունքների հիման վրա: Փորձագիտական

20. Մանրամասն տե՛ս ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/5(13), <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81172>:

եզրակացությունները ունեցել են Էական հակասություններ, ուստի Դիմողն առաջին ատյանի դատարանին խնդրել է հարցաքննության կանչել որոշ փորձագետների՝ հարցաքննելու նրանց կողմից տրված հակասական եզրակացությունների առնչությամբ, սակայն նրա խնդրանքը մերժվել է: Դիմումատուն չի ունեցել հնարավորություն՝ այդ փորձագետ-վկաներին առերես հարցաքննելու նաև գործի նախնական քննության փուլում:

Դատարանը գտել է, որ դիմողի միջնորդությունն անհիմն չէր, քանի որ քննարկվող փորձագիտական եզրակացությունները գործի համար որոշիչ նշանակություն ունեին: Հղում անելով իր նախադեպային իրավունքին՝ Դատարանն արձանագրել է, որ պաշտպանության կողմը պետք է ունենա ոչ միայն փորձագիտական եզրակացությունն ուսումնասիրելու և վիճարկելու իրավունք, այլ նաև այն նախապատրաստողների վստահելիությունն ուղիղ հարցաքննության միջոցով վիճարկելու իրավունք<sup>21</sup>:

## ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այս գործով Դատարանը կրկին արձանագրել է ազգային դատարանի կողմից հարցաքննության ենթակա անձանց դատարան ներկայացնելու համար լրացուցիչ միջոցներ չձեռնարկելու և նրանց նախաքննական ցուցմունքները հիմք ընդունելու խնդիրը (նրանցից երկուսին Հայաստանի տարածքում չփնտրելու, իսկ մյուսների գտնվելու վայրը պարզելու համար միջազգային իրավական օգնության չդիմելու առումով):

Դատարանը նշել է, որ արդար դատաքննության պահանջներից մեկն այն է, որ մեղադրյալին տրվի հնարավորություն՝ վկայի՝ իր դեմ տված ցուցմունքի թույլատրելիությունը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու այն դատավորի ներկայությամբ, որը վերջնական որոշում է կայացնելու գործի վերաբերյալ, քանի որ վերջինիս դիտարկումները տվյալ վկայի վարքագծի վերաբերյալ և այն մասին, թե որքանով կարելի է վստահել նրան, կարող են հետևանքներ ունենալ մեղադրյալի համար<sup>22</sup>:

21. Մանրամասն տե՛ս Kashlev v. Estonia, թիվ 22574/08, § 47:

22. Մանրամասն տե՛ս Hanu v. Romania, թիվ 10890/04, § 40:

Դատարանը ուշադրություն է դարձրել նաև այն հանգամանքին, որ առաջին ատյանի դատարանը դատավճռում չի մատնանշում չստուգված ապացույցների նկատմամբ առանձնահատուկ զգուշավորություն դրսևորելու կամ նման ցուցմունքներին ավելի նվազ նշանակություն տալու մասին:

### **Կառավարության գործողությունների ծրագիր (11.07.2018 թ.)<sup>23</sup> (հիմնական ընդհանուր միջոցներ)**

- 2015 թ.-ին փոփոխված Սահմանադրության 67-րդ հոդվածը ավելի մանրամասն կարգավորում է անձի իրավունքը՝ հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող անձանց:
- Գործող Քրեական դատավարության օրենսգիրքը երաշխավորում է մեղադրյալի իրավունքը՝ հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված անձին ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության փուլերում, ամրագրում է քննիչի պարտականությունը՝ առերեսում իրականացնելու մեղադրյալի և այլ անձանց միջև նրանց ցուցմունքներում հակասություններ լինելու դեպքում:
- Գործող Քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է վկային ներկայանալ պարտադրելու հնարավորություն անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում, բացի այդ, վկան պարտավոր է քննչական մարմնին տեղեկացնել իր բնակության վայրի փոփոխության մասին և կանչող մարմնին տեղեկացնել ծանուցագրով սահմանված ժամկետում իր չներկայանալու պատճառների մասին:
- Նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը սահմանում է քրեական դատավարության բոլորովին նոր սկզբունք, ըստ որի՝ անձի մեղավորությունը չի կարող հաստատված համարվել՝ բացառապես կամ առավելապես հիմնված այն անձի ցուցմունքի վրա, որին մեղադրյալը կամ նրա պաշտպանը հակընդդեմ հարցման ելթարկելու հնարավորություն չի ունեցել. բացի այդ, այն սահմանում է, որ

23. Մանրամասն տե՛ս [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2018\)764E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2018)764E):

կողմերը պետք է ունենան հավասար հնարավորություններ իրենց դիրքորոշումը ներկայացնելու և պաշտպանելու համար, և դատական ակտը կարող է հիմնված լինել միայն այնպիսի ապացույցների վրա, որոնք ուսումնասիրվել են բոլոր կողմերի համար հավասար պայմաններում. նախագծով նախատեսվել է նաև վկային հեռավար հարցաքննելու հնարավորություն:

- Վճռաբեկ դատարանը զարգացրել է դատական պրակտիկան՝ համապատասխանեցնելով ՄԻԵԴ-ի ամրագրած չափանիշներին և սահմանել, որ.
  - դատարանը չի կարող դատավճռի հիմքում դնել «չստուգված» ապացույցներ,
  - քրեական դատավարության օրենսդրության խախտում կհամարվի, եթե անձի դատապարտումը հիմնված լինի բացառապես կամ որոշիչ աստիճանով այն անձի վկայությունների վրա, որին մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննելու կամ որոնք չի կարողացել ուսումնասիրել,
  - առերես հարցաքննություն պետք է իրականացվի նույնիսկ այն դեպքում, երբ մեղադրյալը օգտվել է իր լռելու իրավունքից և ցուցմունք չի տվել. նա պետք է ունենա հնարավորություն՝ հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված անձին:
- Դատախազության կոլեգիան որոշել է, որ կասկածյալի կամ մեղադրյալի նախաձեռնության դեպքում խաչաձև հարցաքննությունը պետք է ապահովվի հետևողականորեն և առանց բացառությունների: Ավելին, պետք է երաշխավորել, որ յուրաքանչյուր վկա, որը որևէ որոշիչ տեղեկություն է հայտնել, պետք է խաչաձև հարցաքննվի: Այն դեպքում, երբ այդպիսի վկաները Հայաստանից բացակայում են, պետք է միջոցներ ձեռնարկվեն՝ պարզելու նրանց գտնվելու վայրը միջազգային իրավական օգնության գործիքների միջոցով՝ նրանց ներկայությունը կամ գոնե հեռահաղորդակցության միջոցներով հարցաքննությունն ապահովելու նպատակով:

## «ԳԱՊ» ՄՊԸ-Ն ԸՆԴՂԵՄ ԸՆՅԱՍՏԱՆԻ

- Կառավարությունը նշել է, որ 2018 թ.-ին ուժի մեջ է մտել ՀՀ հարկային օրենսգիրքը, որը երաշխավորում է հարկային ծառայողի գործողությունների կամ անգործության բողոքարկման նոր համակարգ (բողոքարկում հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով), որն ապահովում է հարկ վճարողի՝ այդպիսի վարույթների ընթացքում վկաների հարցաքննելու իրավունքը և ապահովում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի բոլոր երաշխիքները հարկ վճարողների իրավունքների արտադատական պաշտպանության ընթացքում: Ընդունվել է նաև նոր Վարչական դատավարության օրենսգիրք, որը երաշխավորում է կողմերի հիմնական դատավարական իրավունքները, ինչպես նաև սահմանում դատարանի լիազորությունը՝ ex officio կողմերից պահանջելու տալ բացատրություններ, ներկայացնելու ապացույցներ և այլն:

## Օրենսդրական կարգավորումներ/խնդիրներ

### Վկայի՝ դատարանի կանչով չներկայանալը կամ այլ վայր մեկնելը

Քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածը սահմանում է վկայի՝ վարույթ իրականացնող մարմնի կանչով ներկայանալու և առանց դատարանի թույլտվության այլ վայր չմեկնելու պարտականությունը, սակայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ որևէ պատասխանատվության միջոց այն չկատարելու համար:

### Վկային դատարան հարկադրաբար ներկայացնելը

Վկային հարկադրաբար ներկայացնելու մեխանիզմը չափազանց թերի է: Մասնավորապես թեև Քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածը սահմանում է առանց հարգելի պատճառի քննությանը չներկայացած անձանց բերման ենթարկելու մասին որոշում կայացնելու հնարավորություն և դրա կատարման պարտականությունը դնում է Ոստիկանության վրա, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը, կրկին ամրագրելով այդ պարտա-

կանությունը, չի սահմանում դրա իրագործման ընթացակարգը (հարցը չի կարգավորվում նաև նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագծով): Այլ կերպ ասած՝ առկա օրենսդրությունը որևէ կերպ չի մասնավորեցնում անձին բերման ենթարկելու որոշման կատարման շրջանակում համապատասխան ծառայողի կողմից ձեռնարկվելիք գործողությունները (առնվազն նվազագույն շրջանակը): Միաժամանակ ՀՀ Կառավարության՝ 22.06.2006 թ.-ի թիվ 884-Ն որոշմամբ Ոստիկանությանը տրված է հնարավորություն՝ օգտվելու սահմանային Էլեկտրոնային տեղեկատվական համակարգից (ՍԷԿՏ), հետևապես այն ունի հնարավորություն՝ ճշտելու վկայի՝ արտասահման մեկնելու հանգամանքը:

### **Բացակայող վկային հեռավար հարցաքննելու հնարավորությունը**

Գործող Քրեական դատավարության օրենսգրքում 2020 թ.-ին սահմանվել է բացակայող վկային և տուժողին հեռավար (տեսակապի միջոցով) հարցաքննելու հնարավորությունը, սակայն միայն գործի նախնական քննության փուլում, եթե նրանք հարցաքննության չեն կարող ներկայանալ առողջական վիճակի կամ տարիքի պատճառով կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս են: Նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, ի տարբերություն գործող օրենքի, նախատեսում է հարցաքննության ենթակա անձանց հեռավար հարցաքննության հնարավորություն նաև գործի դատաքննության փուլում (հոդված 327):

### **Արտասահմանում գտնվող վկայի ներկայության ապահովումը**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 481-րդ հոդվածը հստակ ամրագրում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող քրեական գործով որպես վկա հանդես եկող և հանրապետության սահմաններից դուրս գտնվող անձանց՝ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով անհրաժեշտ քննչական կամ դատական գործողություններ կատարելու համար Հայաստանի Հանրապետություն կանչելու հնա-



րավորությունը: Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է նման միջազգային պայմանագրեր, այդ թվում՝ 1) 1993 թ.-ի «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի կոնվենցիան, 2) 1959 թ.-ի «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» Ստրասբուրգի կոնվենցիան: Ընդ որում, երկուսն էլ սահմանում են վկայի ներկայությունն ապահովելու համար անհրաժեշտ ճանապարհաձախսերի և կեցության ծախսերի փոխհատուցման մեխանիզմը, առաջինը նույնիսկ ամրագրում է հրավիրվող անձի չաշխատած օրերի աշխատավարձի հատուցման՝ հայցող պետության պարտականությունը:

### **Դատարանում չհարցաքննված վկայի ցուցմունքի օգտագործումը**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածը սահմանում է հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակման (ըստ այդմ, դրանց՝ որպես ապացույց օգտագործման), ինչպես նաև նրա ցուցմունքների տեսաձայնագրառման և ձայնագրառման վերարտադրման հնարավորությունը դատական քննության ժամանակ, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա՝ դատարան ներկայանալու հնարավորությունը: Չի սահմանվում որևէ երաշխիք այդպիսի ցուցմունքների օգտագործման չարաշահման դեմ: Նման երաշխիք սահմանվում է նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագծով, ըստ այդմ, մեղադրյալի դատապարտումը չի կարող միայն կամ առավելապես հիմնվել այնպիսի անձի ցուցմունքի վրա, որին հակընդդեմ հարցման ենթարկելու հնարավորություն տվյալ մեղադրյալը կամ նրա պաշտպանը կամ ներկայացուցիչը չի ունեցել (հոդված 22, մաս 7)<sup>24</sup>:

24. Հարկ է նշել նաև, որ մինչդատական վարույթում անձին հակընդդեմ հարցման ենթարկելու մեղադրյալի իրավունքն ապահովվում է միայն ցուցմունքի դեպոնացման դեպքում (հոդված 330), որն իրականացվում է դատական կարգով, մեղադրյալի մասնակցությամբ և տեսաձայնագրառվում է (հոդվածներ 306-309):

## **Իր դեմ ցուցմունք տվող վկաներին հարցաքննելու այլ երաշխիքներ**

Գործող Քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը սահմանում է մեղադրյալի իրավունքը՝ առերես հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված անձանց: Սակայն նույն օրենսգիրքը վարույթ իրականացնող մարմնի համար պարտականություն է սահմանում կատարելու առերեսում միայն այն դեպքում, երբ առկա են Էական հակասություններ մեղադրյալի և այլ անձի ցուցմունքներում (հոդված 216, 1-ին մաս): Նույն կարգավորումն է նախատեսված նաև նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագծով (հոդված 224): Այսինքն՝ նույն իրավունքը օրենսդրորեն երաշխավորված չէ այն դեպքերում, երբ մեղադրյալը ցուցմունք առհասարակ չի տվել կամ տվել է, սակայն այլ առարկայի շուրջ, և դրանք չեն հակասում իր դեմ վկայություն տված անձի ցուցմունքներին: Այս խնդիրը, սակայն, մեծապես լուծվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից, որը սահմանել է իրավակիրառ պրակտիկայում մեղադրյալի՝ իր դեմ ցուցմունք տված անձին առերես հարցաքննելու հնարավորության ապահովման պարտադիրությունը՝ անկախ որևէ նախապայմանից:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով ՀՀ-ում քրեական դատավարության, այդ թվում՝ առերես հարցաքննության ընթացակարգի առանձնահատկությունները, այն միշտ չէ, որ կարող է գնահատվել որպես դատարանում վկային չհարցաքննելու պարագայում համարժեք երաշխիք: Մասնավորապես մինչև առերեսվող անձին հարցեր ուղղելը մեղադրյալն ունի սահմանափակ տեղեկատվություն թե՛ ինքնին այդ վկայի՝ նախկինում տված ցուցմունքների վերաբերյալ, թե՛ գործի մյուս կյութերի, ինչից հենց շատ դեպքերում ուղղակիորեն կախված է հարցաքննության արդյունավետությունը:

## **Վերաքննիչ դատարանի՝ առաջին ատյանի դատարանում չհարցաքննված վկաների ցուցմունքների վրա հիմնվելու արգելք**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 10-րդ մասը հստակ ամրագրում է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ կարող է հիմնվել Վերաքննիչ դատարանի նիստին չկանչված (դատարան վկաներ կանչելու դեպքերն էլ սահմանվում են օրենսգրքի 382-րդ հոդվածով<sup>25</sup>), սակայն առաջին ատյանի դատարանում հարցաքննված անձանց ցուցմունքների վրա:

## **Փորձագետի հարցաքննությունը դատարանում**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 346-րդ հոդվածը սահմանում է դատարանում փորձագետին հարցաքննելու նպատակը (ըստ այդմ հիմքը) և կարգը: Ըստ դրա՝ փորձագետի կողմից եզրակացությունը հրապարակելուց հետո նրան կարող են տրվել հարցեր՝ եզրակացությունը պարզելու կամ լրացնելու համար: Այլ կերպ ասած՝ դատարանում փորձագետի հարցաքննությունը կարող է պայմանավորվել միայն նրա կողմից տրված եզրակացության պարզաբանման և լրացման անհրաժեշտությամբ, ինչը չի երաշխավորում մեղադրյալի՝ գործի համար հիմնարար նշանակություն ունեցող եզրակացություն տված փորձագետին հարցաքննելու իրավունքը:

Նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, ըստ Էության, այս երաշխիքն ապահովում է՝ սահմանելով. «Այն դեպքում, երբ կողմը միջնորդել է կատարել եզրակացությունը կամ

25. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Բացառիկ դեպքերում կողմերն իրավունք ունեն իրենց բողոքի, ինչպես նաև մյուս կողմի բողոքի կապակցությամբ տրված պատասխանների հիմքերը հաստատելու համար դատարան ներկայացնելու նոր նյութեր կամ միջնորդելու դատարան կանչել իրենց նշած վկային կամ փորձագետին, նշանակելու փորձաքննություն, եթե նրանք հիմնավորում են, որ օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու այդ նյութերը, կանչելու վկային կամ փորձագետին, ինչպես նաև առաջին ատյանի դատարանում միջնորդելու նշանակել փորձաքննություն, կամ հիմնավորում են, որ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է անհիմա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «(...) վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է գործում եղած, իսկ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասով նախատեսված բացառիկ դեպքերում նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով»:

կարծիքը տված փորձագետի հարցաքննություն, այդ ապացույցը չի կարող օգտագործվել առանց տվյալ փորձագետի հարցաքննության» (հոդված 332, մաս 3):

## Իրավակիրառ պրակտիկա/խնդիրներ

### Վկային դատարան հարկադրաբար ներկայացնելը

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներից է նաև վկաների հայտնաբերումը (հոդված 4): Գործնականում, սակայն, Ոստիկանությունն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու հնարավորություն տեսնում է միայն վարույթ իրականացնող մարմնի, այդ թվում դատարանի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ որոշման առկայության պայմաններում, ինչը բխում է ՀՀ Ոստիկանության կողմից մեր հարցմանը տրված պատասխանից: Գործնականում սա նշանակում է, որ Ոստիկանությունը, բնակության կամ աշխատանքի վայրից բացակայող վկային հայտնաբերելու և դատարան ներկայացնելու համար հնարավոր չի համարում օպերատիվ-հետախուզական միջոցառումների կիրառումը, քանի որ բերման ենթարկելու մասին որոշումն ինքնին բավարար չէ դա անելու համար, մինևույն ժամանակ դատարանն իր հերթին գործող օրենսդրությամբ չունի իրավասություն՝ նման միջոցառումներ իրականացնելու որոշում կայացնելու վկային հայտնաբերելու անհրաժեշտության հիմքով:

Դրա հետ միասին Ոստիկանությունից ստացված մեկ այլ պատասխանի համաձայն՝ վերջին տարվա ընթացքում շուրջ 42,5 % դեպքերում (1546 դեպք) դատարանների կողմից կայացված՝ հարցաքննության ենթակա անձանց բերման ենթարկելու մասին որոշումները մնացել են անկատար, 1373 դեպքում անձանց բնակության վայրից կամ աշխատավայրից բացակայելու պատճառով: Նշված 1373-ից միայն 85-ի դեպքում է Ոստիկանությունը կատարել «օպերատիվ հարցում» և «օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում»: 85-ից միայն 14-ի դեպքում են հայտնաբերվել փնտրվող անձինք:

## **Բացակայող վկային հեռավար հարցաքննելու հնարավորությունը**

Թերի օրենսդրական կարգավորման (տե՛ս *օրենսդրական խնդիրներ*ի բաժինը) հետ մեկտեղ գործնականում նույնպես վկաների հեռավար հարցաքննության մեխանիզմը գրեթե չի կիրառվում: Այդ մասին են վկայում թե՛ դատական տեղեկատվական համակարգի ուսումնասիրության տվյալները, թե՛ ՀՀ Գլխավոր դատախազության հայտնած տվյալները:

Վերջինի համաձայն՝ 2012-2020 թթ.-ի ընթացքում գրանցվել է ընդամենը 6 դեպք, երբ, երկրից բացակայությամբ պայմանավորված, դատախազները դատարանին միջնորդել են անձին հարցաքննել տեսակապի միջոցով: Դատարանները բավարարել են 6 միջնորդություններից 5-ը, մեկը չի բավարարվել ՀՀ օրենսդրությամբ հարցաքննության հեռավար կարգ սահմանված չլինելու պատճառաբանությամբ: Հենց նշված պատճառաբանությունն են որպես կանոն դատարանները բերում նաև պաշտպանական կողմի միջնորդությունները մերժելիս<sup>26</sup>:

Դատական տեղեկատվական համակարգի ուսումնասիրության արդյունքներով ևս արձանագրում ենք եզակի դեպքեր, երբ դատարանները անտեսել են օրենսդրական բացը և մեղադրյալի կոնֆրոնտացիայի իրավունքի ապահովման համար դիմել են/փորձել են դիմել հեռահաղորդակցման միջոցների կիրառմանը վկաներին հարցաքննելու համար<sup>27</sup>:

Միաժամանակ հարցված փաստաբաններից ոչ ոք նման փորձառություն չի ունեցել, ինչը ևս փաստում է այդպիսի պրակտիկայի ծայրահեղ սակավությունը:

## **Արտասահմանում գտնվող վկայի ներկայության ապահովումը**

Չնայած Հայաստանի դեմ կայացված՝ վերը նշված մի քանի վճիռներով Դատարանը ճանաչել է խախտում այն հիմքով, որ դատարանները բավարար ջանքեր չեն գործադրել դատական քննության

26. Որպես օրինակ տե՛ս թիվ ՏԴ1/0020/01/16 գործը:

27. Որպես օրինակ տե՛ս թիվ ԱՐԱԴ1/0010/01/14, ՇԴ/0030/01/17 գործերը:

նը վկաների ներկայությունն ապահովելու ուղղությամբ և, որպես այդպիսին, դիտարկել է նաև արտասահմանում գտնվող վկաների մասով միջազգային իրավական օգնության մեխանիզմներին չդիմելը, դատական պրակտիկայում, այնուամենայնիվ, այս մեխանիզմի կիրառումը լայն տարածում չի գտել:

Դատական տեղեկատվական համակարգի ուսումնասիրության արդյունքներով արձանագրում ենք եզակի դեպքեր, երբ դատարանները դիմել են միջազգային իրավական օգնության մեխանիզմներին՝ հարցաքննության ելթակա անձանց Հայաստանի Հանրապետություն հարցաքննության իրավիրելու կապակցությամբ<sup>28</sup>: Որոշ դեպքերում դատարանները այլ պետության իրավասու մարմիններին ուղարկել են իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ հանձնարարականներ՝ խնդրելով ինքնուրույն հարցաքննել վկաներին/տուժողներին<sup>29</sup>: Որոշ գործերով դատարանները առանց բավարար պատճառաբանության (ՄԻԵԴ-ի սահմանած չափանիշներին չհամապատասխանող) չեն կիրառել կամ մերժել են միջազգային իրավական օգնության մեխանիզմների կիրառումը<sup>30</sup>, այդ թվում այնպիսի պատճառաբանություններով, որոնք ողջամիտ կասկածներ են հարուցում առանձին դատավորների՝ այդ մեխանիզմների մասին տեղեկացված լինելու վերաբերյալ<sup>31</sup>: Որոշ գործերով ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը և ՀՀ Վճռաբեկ դատարանը արտասահմանում գտնվող վկաներին միջազգային իրավական օգնության մեխանիզմների կիրառմամբ քննությանը ներկայացնելու փորձ չկատարելու հիմքով արձանագրել են ստորադաս դատարանների կողմից թույլ տրված խախտումները<sup>32</sup>:

Արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2015-2019 թթ.-ի<sup>33</sup> ընթացքում ՀՀ դատա-

28. Տե՛ս թիվ ԼԴ/0027/01/15, ԵԴ/0773/01/18, ԱՐԱԴ1/0010/01/14 , ԱՐԱԴ1/0010/01/14 գործերը:

29. Տե՛ս թիվ ԿԴ3/0046/01/14, ԼԴ/0135/01/11, ԵԿԴ/0067/01/13, ԼԴ/0108/01/10 գործերը:

30. Տե՛ս թիվ ԵԱԶԴ/0021/01/16, ԵԴ/0060/01/19, ՏԴ/0018/01/19, ԵԿԴ/0018/01/12, ՏԴ1/0020/01/16, ԵԴ/0853/01/18, ԵԴ/0264/01/18 գործերը:

31. Թիվ ՏԴ1/0020/01/16 գործով դատարանը մերժել է միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ ՀՀ տարածքից դուրս գտնվող անձանց դատարան իրավիրելու կարգ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում:

32. Թիվ ՏԴ1/0020/01/16 գործով ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը, իսկ թիվ ՏԴ2/0037/01/15 և ՏԴ2/0043/01/17 գործերով ՀՀ Վճռաբեկ դատարանը արձանագրում են նշված կոնվենցիաները չկիրառելու խնդիրը:

33. 2012-2015 թթ.-ի տվյալները նախարարությունում չեն պահպանվել:

րանները 1959 թ.-ի «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» Ստրասբուրգի կոնվենցիայի շրջանակում որևէ հարցում այլ պետության՝ հարցաքննության ենթակա անձանց ՀՀ հրավիրելու կապակցությամբ չեն կատարել: Այդ տեսակի թվով 6 հարցում կատարվել է միայն 2020 թ.-ին: Իսկ 1993 թ.-ի «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի կոնվենցիայի շրջանակում այդ տեսակի որևէ հարցում մինչ օրս չի կատարվել:

Հարցված փաստաբաններից նման փորձառություն ունեցել է միայն մեկը, ով փորձել է դատարանին միջնորդել դիմել միջազգային իրավական օգնության մեխանիզմներին (կիրառել Մինսկի կոնվենցիան)՝ դատարան հրավիրելու վկային, որի ցուցմունքը վճռորոշ նշանակություն է ունեցել անձի դատապարտման համար, սակայն նշված միջնորդության քննությունը հետաձգվել է մինչև դատաքննության ավարտը, իսկ այնուհետև դատարանը դրան չի անդրադարձել: Հարցված փաստաբանների գնահատմամբ՝ դատարանները խուսափում են այս մեխանիզմների կիրառմանը դիմելուց:

## **Դատարանում չհարցաքննված վկայի ցուցմունքի օգտագործումը**

Դատական տեղեկատվական համակարգի ուսումնասիրության արդյունքներով արձանագրում ենք, որ մեծաթիվ դեպքերում դատարանները թույլատրելի ապացույց են համարում և դատավճիռների հիմքում դնում դատարանում չստուգված նախաքննական ցուցմունքները՝ առանց անձին դատարանում հարցաքննելու անհնարինությունը փաստող բավարար հիմքերի (այդ թվում, օրինակ, բնակության վայրից<sup>34</sup> կամ հանրապետությունից<sup>35</sup> վկայի բացակայության դեպքերում) կամ առհասարակ առանց նման անհնարինության վերաբերյալ հիմնավորման<sup>36</sup>: Որոշ դեպքերում այս

34. Որպես օրինակ տե՛ս թիվ ԵԱԴԴ/0001/01/12, ԵԱԴԴ/0041/01/13, ԵԱԴԴ/0022/01/14, ԵԿԴ/0172/01/14, ԼԴ/0056/01/15, ՏԴ/0018/01/19 գործերը:

35. Որպես օրինակ տե՛ս թիվ ԿԴ1/0023/01/13, ԵԱԶԴ/0268/01/15, ԱԿԴ2/0016/01/16, ԵԱԶԴ/0153/01/16, ԵԴ/0264/01/18, ԵԴ/0222/01/18 գործերը:

36. Որպես օրինակ տե՛ս թիվ ԿԴ3/0042/01/13, ԱԴԴ/0016/01/14, ԵԿԴ/0098/01/15, ԵՇԴ/0032/01/16, ԵԿԴ/0010/01/17, ԼԴ4/0020/01/18, ԼԴ/0013/01/19, ԼԴ/0090/01/19, ԼԴ3/0011/01/20, ԼԴ1/0020/01/20 գործերը:

խախտումը վերացնում է Վերաքննիչ քրեական դատարանը: Օրինակ՝ ՏԴ/0018/01/19 գործով Վերաքննիչ դատարանն արձանագրել է՝ առաջին ատյանի դատարանն ընդամենը պարզել է, որ վկան չի գտնվում ՀՀ-ում և, հնարավոր է, մեկնել է ՌԴ, ինչը հնարավոր չէ բավարար համարել և վկայի ցուցմունքի օգտագործման իրավաչափության մասով ողջամիտ հետևության հանգել: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև՝ այն, որ նախաքննության ընթացքում մեղադրյալը հրաժարվել է իր դեմ վկայած անձանց հարցաքննելու իրավունքից, ինքնին բավարար չէ՝ գնահատելու, որ ամբաստանյալը քրեական գործի որևէ փուլում ողջամիտ և բավարար հնարավորություն է ունեցել օգտվելու իր դեմ վկայած անձին հրապարակային հարցաքննելու իր իրավունքից, քանի որ նրան այդ հնարավորությունն ընձեռվել է այն պայմաններում, երբ նախաքննությունն ավարտված չի եղել, և քրեական գործի նյութերին ծանոթանալու հնարավորություն նա չի ունեցել, չի իմացել և չէր էլ կարող իմանալ, թե ով է իր դեմ ցուցմունք տվել և ինչ բովանդակությամբ<sup>37</sup>:

Արձանագրվել են, սակայն, նաև դեպքեր, երբ դատարաններն այս հարցում դրսևորել են առաջադիմական մոտեցումներ: Մասնավորապես որոշ դեպքերում դատարանները, նույնիսկ ողջամտորեն սպառնալից համարելով հարցաքննության ենթակա անձանց հայտնաբերելու և/կամ հարցաքննելու հնարավորությունը և այն հակակշռելու համար դատավարական միջոցների բացակայությունը, նրանց նախաքննական ցուցմունքների օգտագործումը համարել են անթույլատրելի և դրանք հանել մեղադրանքը հաստատող՝ մեղադրանքի կողմի ներկայացրած ապացույցների շարքից<sup>38</sup>:

Հարցված փաստաբանների մեծամասնությունը հաստատում է, որ դատարան չներկայացած անձանց նախաքննական ցուցմունքների հրապարակումը և այնուհետև դատավճռի հիմքում դնելը լայնորեն կիրառվող դատական պրակտիկա է: Ոմանց պնդմամբ՝

---

37. Տե՛ս նաև թիվ ՏԴ1/0081/01/17 գործով Վերաքննիչ քրեական դատարանի որոշումը:

38. ԵՄԴ/0126/01/15, ԱՐԱԴ1/0010/01/14, ԱՐԱԴ7/0029/01/16 (այս գործերով առաջին ատյանի դատարանի դիրքորոշումը պաշտպանել է նաև Վերաքննիչ քրեական դատարանը՝ արձանագրելով, որ հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքով չապահովված ապացույցը դատավճռի հիմքում դնելը կհանգեցնի քրեադատավարական օրենքի Էական խախտման):



դատավորների մեծամասնությունը չի քննարկում, թե որքանով էր չներկայացած վկայի ցուցմունքը միակը կամ վճռորոշը մեղադրանքի հաստատման համատեքստում: Դատավորների մյուս մասը քննարկում է հարցը և, ըստ այդմ, հանում նշված ցուցմունքը ապացույցների զանգվածից:

### **Փորձագետի հարցաքննությունը Հայաստանում**

Ինչպես դատարանում վկաների չստուգված նախաքննական ցուցմունքները, այնպես և դատարանում չհարցաքննված փորձագետների եզրակացությունների՝ դատավճիռների հիմքում դնելը տարածված դատական պրակտիկա է Հայաստանում: Հաճախ են դեպքերը, երբ դատարանները մերժում են պաշտպանական կողմի՝ մեղադրանքի հիմքում դրվող եզրակացությունները պարզաբանելու կամ դրանց արժանահավատությունը ստուգելու համար փորձագետներին դատարան հրավիրելու միջնորդությունները, այնուամենայնիվ, մեծ մասամբ նման միջնորդությունները բավարարվում են, ինչը հաստատվում է նաև հարցված փաստաբանների հայտնած տվյալներով:

### **Եզրակացություն**

Հետազոտության արդյունքում փաստում ենք, որ *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* և կրկնվող գործով ՄԻԵԴ կայացրած վճիռներից բխող ընդհանուր միջոցների կիրառման խնդիր առկա է թե՛ օրենսդրական մակարդակում, թե՛ իրավակիրառ պրակտիկայում:

Մասնավորապես գործող օրենսդրությունը չի նախատեսում բավարար դատավարական և այլ<sup>39</sup> երաշխիքներ՝ կապված. 1) հարցաքննության ելթակա անձանց՝ մեղադրյալի կոնֆրոնտացիայի իրավունքն ապահովելու նպատակով դատական քննությանը ներկայացնելու, 2) դրա անհնարիության դեպքում վերջիններիս հեռավար կարգով հարցաքննելու, 3) դատարանում չստուգված ցուցմունքների օգտագործման չարաշահման, 4) ինչպես նաև ամ-

39. Օրինակ՝ վկայի՝ դատարան չներկայանալու դեպքում պատասխանատվության ինստիտուտի առումով:

բաստանյալի միջնորդության պարագայում փորձագետ-վկային հարցաքննելու պարտադիրության հետ: Միաժամանակ վերջին երեք խնդիրները կարծես լուծվում են նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծով:

Գործնական խնդիրները հանգում են. 1) չներկայացող վկաներին բերման ենթարկելու ինստիտուտի ոչ բավարար կանոնակարգվածության պայմաններում Ոստիկանության կողմից բավարար ջանասիրություն չդրսևորելուն, 2) իրավունքի գերակայության հիմքով վկաներին հեռավար հարցաքննելու պրակտիկայի գրեթե բացակայությանը, 3) արտասահմանում գտնվող վկաների ներկայության ապահովման համար միջազգային իրավական օգնության մեխանիզմների լայն կիրառության բացակայությանը, 4) դատարանում չհարցաքննված վկաների ցուցմունքների՝ որպես ապացույց լայն օգտագործմանը և 5) փորձագետ-վկաներին հարցաքննելու՝ մեղադրյալի իրավունքի լիարժեք չապահովմանը:

## ՉԱՊԱՐԻՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

[ԳԱՆՈՒՄ ԹԻՎ 6822/10]<sup>40</sup>

## ՄԱԹԵՎՈՍՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

[ԳԱՆՈՒՄ ԹԻՎ 61730/08]<sup>41</sup>



Նշված գործերով Դատարանը ճանաչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում այն հիմնավորմամբ, որ ներպետական դատարանները մեղադրանքի հիմքում ընկած հիմնական փաստերը վիճարկելու պայմաններում (որոնք նաև հիմնված են եղել հակասական ապացույցների վրա) չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանների մեղադրական ցուցմունքները, որոնք մեղադրանքի միակ վկաներն էին և ակտիվ դեր էին ունեցել վիճարկվող իրադարձություններում:

Հղում անելով նախկինում մի շարք գործերով արտահայտած իր դիրքորոշմանը՝ Դատարանն արձանագրել է, որ, ինչպես և այդ գործերով<sup>42</sup>, դիմողների դեմ հարուցված քրեական գործերով վերջիններիս մեղադրանք է առաջադրվել հանրային միջոցառման ժամանակ (քննարկվող դեպքերում հավաքի) որոշ գործողություններ ենթադրաբար կատարելու համար, և այն հիմնված է եղել բացառապես Ոստիկանության այն ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ավելին, նրանց հայտարարությունները պարունակել են անհամապատասխանություններ:

Դատարանն արձանագրել է, որ չնայած նրան, որ սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկա հրավիրելու անհրաժեշտության կամ նպատակահարմարության վերաբերյալ,

40. Գասպարին ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 6822/10, 2020 թ. մարտի 26), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-201888>:  
41. Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 61730/08, 2013 թ. փետրվարի 12), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-196375>:  
42. Kasparov and Others v. Russia, թիվ 21613/07, § 64, Navalnyy and Yashin v. Russia, թիվ 76204/11, § 83, Frumkin v. Russia, թիվ 74568/12, § 165:

հնարավոր է՝ լինեն բացառիկ հանգամանքներ, որոնք կարող են դատարանին ստիպել եզրակացնել, որ դա չանելն անհամատեղելի է եղել 6-րդ հոդվածի հետ:

Մասնավորապես եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի առարկային և հնարավոր է, որ ամրապնդի պաշտպանական կողմի դիրքերը կամ նույնիսկ հանգեցնի արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է ներկայացնեն համապատասխան հիմնավորումներ<sup>43</sup>: Այնինչ քննարկվող դեպքերում ազգային դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու Ռստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք քրեական հետապնդման համար միակ վկաներն էին և ակտիվ դեր էին ունեցել վիճարկվող իրադարձություններում, ինչը նման դեպքերում պետք է անեին:

Դատարանն արձանագրել է, որ իրադարձությունների վերաբերյալ Ռստիկանության կողմից ներկայացված տարբերակն անվերապահորեն հաստատելը, դիմումատուի փաստարկներին պատշաճ կերպով չանդրադառնալը և պաշտպանության կողմի վկաներին հարցաքննել մերժելը՝ առանց պատշաճ կերպով ուսումնասիրելու նրանց ցուցմունքների վերաբերելիությունը, հանգեցրել են պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակման, ինչը հակասում է արդարացի լսումների երաշխիքներին:

### **Կառավարության գործողությունների ծրագիր (02.04.2020 թ.)<sup>44</sup> (հիմնական ընդհանուր միջոցներ)**

- Սահմանադրության՝ 2015 թ.-ի փոփոխությունները, որոնց արդյունքում ավելի մանրամասն է կարգավորվում արդար դատաքննության իրավունքը:

43. Saghatelian v. Armenia, թիվ 23086/08, §§ 202-204, Murtazaliyeva v. Russia, թիվ 36658/05, §§ 139-159:

44. Մանրամասն տե՛ս [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2020\)301E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2020)301E):

- Նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, որն ամրագրում է կողմերի իրավունքը՝ ունենալու հավասար հնարավորություններ իրենց դիրքորոշումը պաշտպանելու համար, և դատական ակտի՝ միայն հավասար պայմաններում ուսումնասիրված ապացույցների վրա հիմնված լինելու պարտադիրությունը:
- ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից նախադեպային իրավունքի զարգացումը, որով հատուկ ուշադրություն է դարձվել զենքերի հավասարության սկզբունքին և ամբաստանյալի իրավունքին՝ ունենալու յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր դիրքորոշումը այնպիսի պայմաններում, որոնք չեն կարող նրան անբարենպաստ դիրքում դնել իր հակառակորդի նկատմամբ և այլն:

## Օրենսդրական կարգավորումներ/խնդիրներ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածը (Նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 21-րդ հոդվածը) ամրագրում է մրցակցության հիմնարար սկզբունքը: Ըստ այդմ, դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման համար անհրաժեշտ պայմաններ, իսկ կողմերը օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով և դրա եղանակներն ու միջոցներն օրենքի շրջանակներում ընտրում են ինքնուրույն: Դատարանը, կողմի միջնորդությամբ, աջակցում է նրան ձեռք բերել անհրաժեշտ նյութեր:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի (Նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 43-րդ հոդվածի 1-ին մասի) համաձայն՝ մեղադրյալը, ի թիվս այլ գործողությունների, իրավունք ունի հարուցելու միջնորդություններ, քրեական գործին կցելու և հետազոտելու համար ներկայացնելու նյութեր: Վկայի հարցաքննության կարգը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 340-րդ հոդվածի 3-րդ մասը (Նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 326-րդ հոդվածի 3-րդ

մասը) իր հերթին սահմանում է, որ կողմի միջնորդությամբ դատական քննության կանչված կամ նրա կողմից ներկայացված վկային առաջին հերթին հարցաքննում է միջնորդություն հարուցած կամ վկային ներկայացրած անձը:

Քրեադատավարական օրենսդրության վերը նշված դրույթներից է բխում դատավարության կողմերի, այդ թվում՝ ամբաստանյալի իրավունքը՝ դատարան կանչելու/ներկայացնելու վկաներ և ներկայացնելու նյութեր/ապացույցներ: Միաժամանակ դատարանի հայեցողությունը՝ կողմի, այդ թվում՝ մեղադրյալի՝ վկա հրավիրելու միջնորդությունը քննելու՝ բավարարելու կամ մերժելու առումով գործող օրենսդրությամբ բավականին լայն է. այդ հարցի լուծման համար օրենքով նախատեսված չեն չափորոշիչներ:

Ինչ վերաբերում է նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագծին, ապա դրա 319-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են, որ նախնական դատալսումների ընթացքում քննարկվում է հետազոտման ենթակա ապացույցների ծավալի հարցը, որտեղ կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է հիմնավորել, թե իր առաջարկած՝ հետազոտման ենթակա յուրաքանչյուր ապացույց վերդիկտ կայացնելու համար նշանակություն ունեցող ինչ փաստական հանգամանք է հաստատում կամ հերքում, և որևէ ապացույց հետազոտելու վերաբերյալ կողմի առաջարկը մերժելու դեպքում դատարանը պետք է կայացնի որոշում: Ըստ Էության, ստացվում է հենց նշված՝ ապացույցի նշանակությունը հիմնավորելու/չհիմնավորելու հանգամանքն էլ դատարանի համար հանդիսանում է այդ ապացույցը հետազոտելու հարցը լուծելու չափորոշիչը:

## **Իրավակիրառ պրակտիկա/խնդիրներ**

Դատական տեղեկատվական համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միայն Ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների հիման վրա մեղադրական դատավճիռ կայացնելու դատական պրակտիկան թեև լայնորեն տարածված չէ, այնուամենայնիվ առկա է թե՛ խնդրո առարկա դատավճիռների կայացումից հետո, թե՛ ՄԻԵԴ-ի կողմից *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գոր-

ծով կայացված վճռից հետո<sup>45</sup>:

Հարցված փաստաբաններից նման փորձառություն ունեցել է միայն մեկը, սակայն շուրջ 6 տարի առաջ:

## Եզրակացություն

Հետազոտության արդյունքում փաստում ենք, որ *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* և *Գասպարին ընդդեմ Հայաստանի* գործերով ՄԻԵԴ կայացրած վճիռներից բխող ընդհանուր միջոցների կիրառման խնդիր առկա է հիմնականում իրավակիրառ պրակտիկայում: Մասնավորապես դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ դատարանը մեղադրական դատավճիռ կայացնելիս (անձի մեղավորությունը, նրա գործողություններում հանցակազմը հաստատելու համար որոշիչ փաստական հանգամանքները ապացուցված լինել-չլինելը գնահատելիս) հիմնվում է բացառապես Ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա:

---

45. Որպես օրինակ տե՛ս թիվ ԵԿԴ/0084/01/16, ՏԴ/0037/01/20 գործերը:

# ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԸՊՆԸՊՏ ԹԻՎ 36549/03<sup>46</sup>

## ՎԵՂԻՐ

Նշված գործով Դատարանը ճանաչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում այն հիմնավորմամբ, որ ներպետական դատարանները դիմողի դատապարտման համար օգտագործել են նրա և երկու վկաների՝ բռնության ազդեցության տակ ձեռք բերված ցուցմունքները՝ առանց դրանց արժանահավատության վերաբերյալ որևէ կասկած արտահայտելու, ավելին՝ անտեսելով այն փաստը, որ վատ վերաբերմունքի ցուցաբերման փաստն արդեն հաստատված էր զուգահեռ ընթացող վարույթում, որը հարուցվել էր Ոստիկանության աշխատակիցների նկատմամբ:

Դատարանի կարծիքով՝ առկա էին համոզիչ ապացույցներ այն մասին, որ անձը ենթարկվել է վատ վերաբերմունքի, ինչպես նաև հոգեբանական ճնշումների և սպառնալիքների, և այն փաստը, որ դիմումատուն խոստովանել կամ իր հետագա ցուցմունքներում հաստատել է ճշման տակ տրված իր խոստովանությունը ոչ թե նշված վատ վերաբերմունքի ցուցաբերման համար պատասխանատու, այլ մեկ ուրիշ մարմնի, չպետք է մեխանիկորեն հանգեցնի այն եզրակացության, որ նման խոստովանությունը կամ հետագա ցուցմունքները չեն հանդիսացել հետևանք՝ նրա նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքի և նրա հետագա ապրումների վերաբերյալ հնարավոր վախի: Իսկ այն հանգամանքը, որ վկաները հետագայում ենթարկվել են խոշտանգումների և իրենցից վրեժ լուծելու վերաբերյալ շարունակական սպառնալիքների և դեռևս զինվորական ծառայության մեջ էին, անկասկած կարող էր իրենց ավելի վախեցնել և ազդեցություն ունենալ ցուցմունքների վրա: Հետևաբար այդ շրջանում տրված ցուցմունքների արժանահավատությունը պետք է կասկածի տակ առնվի, և դրանք չպետք է վկա-

46. Հարությունյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 36549/03, 2007 թ. հունիսի 28), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-81352>:



յակոչվեին խոշտանգումների ազդեցության հետևանքով տրված ցուցմունքների արժանահավատության հիմնավորման համար:

Դատարանը գտել է, որ անկախ նրանից, թե ինչ ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները դիմումատուի քրեական վարույթի արդյունքի վրա, նման ապացույցի օգտագործումը ամբողջ դատավարությունը դարձնում է անարդար: Այսպիսով, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

**Կառավարության ներկայացրած հաղորդում  
(համաձայն գործի կատարման վերաբերյալ Նախարարների  
կոմիտեի՝ 07.06.2011 թ.-ի բանաձևի)<sup>47</sup>  
(հիմնական ընդհանուր միջոցներ )**

Քննարկվող գործի կատարման վերաբերյալ բանաձևում, որով Նախարարների կոմիտեն որոշել է փակել գործի նկատմամբ վերահսկողությունը, որպես Կառավարության կողմից ներկայացված հիմնական միջոցներ են նշվում.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (հոդված 105) բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով ձեռք բերված ապացույցներն օգտագործելու անթույլատրելիության երաշխիքների ամկայությունը,

Հարությունյանի գործից հետո ՀՀ դատական պրակտիկայում նմանատիպ որևէ դեպք արձանագրված չլինելու հանգամանքը:

**Օրենսդրական կարգավորումներ/խնդիրներ**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածը սահմանում է անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության սկզբունքը՝ ըստ այդմ երաշխավորելով, որ քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների,

47. Մանրամասն տե՛ս <http://hudoc.exec.coe.int/eng?i=001-105615>:

անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով:

Նշված սկզբունքին համապատասխան՝ օրենսգրքի 105-րդ հոդվածը արգելում է նշված եղանակներով ձեռք բերված նյութերը դնել մեղադրանքի հիմքում և օգտագործել որպես ապացույց: Փաստական տվյալների՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը, ինչպես նաև վարույթում դրանց սահմանափակ օգտագործման հնարավորությունը հաստատում է վարույթն իրականացնող մարմինը՝ սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ (հոդված 106):

Օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրները ստուգելու միջոցով, իսկ 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման այդ թվում թույլատրելիության տեսանկյունից:

Այսպիսով, օրենսդրությունը սահմանում է վարույթ իրականացնող մարմինների, այդ թվում դատարանների պարտականությունը՝ ստուգելու ապացույցներն ու որոշելու դրանց օգտագործման թույլատրելիությունը: Վերոգրյալի հետ մեկտեղ, սակայն, արգելվում է տվյալ քրեական գործի հետ կապված որպես վկա հարցաքննել քննիչին և հետաքննության մարմնի աշխատակցին, որոնք այդ քրեական գործի հետ կապված իրականացրել են իրենց դատավարական լիազորությունները<sup>48</sup>: Այլ կերպ ասած՝ նախնական քննության փուլում ցուցմունքներ «կորզելու» մասին տեղեկություններ ձեռք բերելիս դատարանը չունի հնարավորություն՝ դրանք (ապացույցները) ստուգելու և գնահատելու ինքնուրույն, անմիջականորեն այդ գործի դատական քննության ընթացքում դեպքի բոլոր

---

48. Նրանք կարող են հարցաքննվել տվյալ գործի վարույթի ընթացքում թույլ տրված սխալների և չարաշահումների վերաբերյալ քննության շրջանակում (86-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ):

ենթադրյալ դերակատարներին լսելու միջոցով: Միևնույն ժամանակ, եթե նույնիսկ ցուցմունք տվող անձի նման հայտարարության հիման վրա հարուցվում է քրեական գործ, ապա դա ինքնին այդ հայտարարությունը ստուգելու և համապատասխան ցուցմունքները որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու համար բավարար երաշխիքներ չի ստեղծում մի շարք պատճառներով.

1. խոշտանգման մասին հայտարարությունների հիման վրա նախաձեռնված քրեական վարույթների ճնշող մեծամասնությունը գործնականում ավարտվում է քրեական գործը կարճելու մասին որոշմամբ, օրինակ՝ պաշտոնատար անձի գործողություններում հանցակազմի ամկայության հանգամանքը հաստատելու համար ապացույցների անբավարարության հիմքով<sup>49</sup>,
2. գոյություն չունի նաև որևէ իրավական կարգավորում, որի համաձայն՝ դատարանը պարտավոր է դատաքննությունը հետաձգել կամ կասեցնել այնքան ժամանակով, որ առանձին քրեական վարույթի շրջանակում ստուգվի ցուցմունք տվող անձի հայտարարությունը,
3. վերջապես, եթե նույնիսկ անտեսենք վերը նշված խնդիրները, նույնիսկ եթե քրեական վարույթ իրականացնող մարմինը բավարար ապացույցներ ունենա պաշտոնատար անձին մեղադրանք առաջադրելու համար, ապա հնարավոր է, որ սկզբնական գործը քննող դատարանը տարիներով սպասի ցուցմունքներ կորզելու գործով դատավճռի կայացմանը և ուժի մեջ մտնելուն, ինչը կխաթարի սկզբնական դատական գործով արդարադատության իրացման գործընթացը, այդ թվում կողմերի՝ ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքը: Միաժամանակ կարող են լինել իրավիճակներ, երբ մեղադրյալը կամ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը թաքնվի քննությունից, կամ անցած լինեն դեպքի առթիվ քրեական գործ հարուցելու համար սահմանված վաղեմության ժամկետները:

---

49. Այս պնդման համար հիմք են ծառայել դատական տեղեկատվական համակարգի տվյալները, որոնց համաձայն՝ հատկապես ՀՀ քրեական օրենսգրքի 309.1 հոդվածով մինչ օրս որևէ պաշտոնատար անձ չի դատապարտվել:

Հարկ է նշել, սակայն, որ օրենսդրական այս խնդրին ըստ էության լուծում տրվում է նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագծով, որը չի սահմանում հետաքննության մարմնի ներկայացուցչին հարցաքննելու արգելք, իսկ քննիչի մասով թեև ընդհանուր արգելք սահմանում է<sup>50</sup>, սակայն բացառությամբ այն դեպքերի, երբ կողմը վիճարկում է ապացույցի թույլատրելիությունը, կամ դատարանի մոտ հիմնավոր կասկածներ են առաջանում դրա հավաստիության վերաբերյալ<sup>51</sup>:

## Իրավակիրառ պրակտիկա/խնդիրներ

Դատական տեղեկատվական համակարգի ուսումնասիրությամբ պարզվել է, որ քննարկվող ՄԻԵԴ վճռից հետո ՀՀ դատարանների կողմից այնուամենայնիվ կայացվել են մեղադրական դատավճիռներ, որոնց հիմքում, ի թիվս այլ ապացույցների, դրվել են նաև ամբաստանյալների և/կամ վկաների՝ նախաքննության ժամանակ տրված ցուցմունքները այն պարագայում, երբ նրանք հայտարարել են, որ դրանք իրենցից ստացվել են խոշտանգումների կամ այլ տեսակի վատ վերաբերմունքի, սպառնալիքների, ճնշումների կիրառման արդյունքում, և այդ հայտարարությունները դատաքննության շրջանակում չեն արժանացել համակողմանի գնահատման<sup>52</sup>: Արձանագրվել է նույնիսկ դեպք, երբ այդ ապացույցը եղել է միակը կամ ամսվազն որոշիչը<sup>53</sup>:

Հարցված փաստաբանների մեծամասնությունը ևս ունեցել է նման փորձառություն: Ըստ այդմ, դատարանները մեծապես փորձում են ինքնուրույն գնահատական չտալ վատ վերաբերմունքի պայմաններում ցուցմունք տալու վերաբերյալ հայտարարություններին՝ հարցը շրջանցելով կամ հիմնվելով նշված հայտարարության հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործ չհարուցվելու կամ նշված հանգամանքները հարուցված քրեական

---

50. Տե՛ս նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 57-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը:

51. Տե՛ս նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 331-րդ հոդվածի 4-րդ մասը:

52. Որպես օրինակ տե՛ս թիվ ԱՎԴ/0059/01/16, ԵԿԴ/0353/01/16, ԼԴԴ/0031/01/17, ԼԴԴ/0006/01/18 գործերը:

53. Որպես օրինակ տե՛ս թիվ ԵԴ/0016/01/19 գործը:

գործի շրջանակում չհաստատվելու հանգամանքների վրա: Փաստաբաններից միայն մեկն է ունեցել փորձառություն, երբ դատարանը ինքնուրույն է գնահատական տվել նշված ապացույցին՝ այն համարելով օրենքի էական խախտմամբ ձեռք բերված ապացույց և հանելով այն ապացույցների զանգվածից:

## Եզրակացություն

Հետազոտության արդյունքում փաստում ենք, որ *Հարույթուկյանն ընդդեմ Հայաստանի* գործով ՄԻԵԴ-ի կայացրած վճռից բխող ընդհանուր միջոցների կիրառման խնդիր առկա է թե՛ գործող օրենսդրության թերությունների մակարդակում, թե՛ իրավակիրառ պրակտիկայում:

Մասնավորապես դատարանները գործնականում որոշ դեպքերում օգտագործում են ամբաստանյալների՝ նախաքննության ընթացքում տված խոստովանական ցուցմունքները՝ չունենալով օրենսդրական հնարավորություն՝ պատշաճ, համակողմանի (հետաքննիչի կամ քննիչի բացատրությունների հետ համադրելով) գնահատման արժանացնելու նշված ցուցմունքները խոշտանգումների և ճնշումների արդյունքում տրված լինելու վերաբերյալ նրանց հայտարարությունները: Ինչ վերաբերում է օրենսդրական խնդիրներին, ապա դրանք ամենայն հավանականությամբ իրենց լուծումը կստանան նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի համապատասխան դրույթների՝ ուժի մեջ մտնելով:

## Առաջարկություններ

1. Վարչական և Քրեական դատավարության օրենսգրքերում կատարել լրացումներ՝ նախատեսելով հնարավորություն՝ անհրաժեշտության դեպքում վերաքննիչ դատարանում բողոքի քննության շրջանակում հրավիրելու և հարցաքննելու առաջին ատյանի դատարանում արդեն իսկ հարցաքննված վկային:
2. Քրեական դատավարության օրենսգրքում և/կամ «Ոստիկա-

նության մասին» ՀՀ օրենքում կատարել լրացումներ՝ որոշակիացնելով այն գործողությունների շրջանակը, որոնք Ոստիկանությունը պարտավոր է կատարել հարցաքննության ենթակա անձի ներկայությունը դատարանում ապահովելու ուղղությամբ:

3. Կատարել լրացում ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում սահմանելով վարչական պատասխանատվություն վկայի, տուժողի կամ փորձագետի կողմից առանց հարգելի պատճառի դատարանի կանչով չներկայանալու համար:
4. Ոստիկանության պետին՝ արձակել հանձնարարական, որով Ոստիկանության աշխատակիցներին կհանձնարարվի դատարանի կողմից անձին բերման ենթարկելու մասին որոշումն ի կատար ածելիս ցուցաբերել հետևողականություն՝ չսահմանափակվելով բացառապես բնակության վայր կամ աշխատավայր այցելությամբ, հետամուտ լինել այդ թվում օպերատիվ-հետախուզական միջոցառումների կիրառմամբ նրա գտնվելու վայրը պարզելու և դատարան ներկայացնելու ուղղությամբ:
5. Արդարադատության ակադեմիայի ուսուցման և դատավորների վերապատրաստման ծրագրերի լրացման միջոցով զարգացնել դատավորի թեկնածուի հավակնորդների և գործող դատավորների՝ արտասահմանում գտնվող վկաների ներկայության ապահովման համար միջազգային իրավական օգնության մեխանիզմների կիրառման հմտությունները:
6. Արդարադատության ակադեմիայի ուսուցման և դատավորների վերապատրաստման ծրագրերի լրացման միջոցով զարգացնել դատավորի թեկնածուի հավակնորդների և գործող դատավորների հմտությունները՝ կապված *Մաթևոսյանս ընդդեմ Հայաստանի* և *Գասպարին ընդդեմ Հայաստանի* գործերի փաստերի համանման փաստերով գործերի քննության հետ՝ բացառապես ոստիկանների ցուցմունքների հիման վրա անձին դատապարտելու պրակտիկայի շտկման ուղղությամբ:

# ԲԱԺԻՆ 2 ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌՆԳՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

## ԱԳԱՆԻԿՅԱՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

[ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 21791/12]<sup>54</sup>

## ԳՐԻԳՈՐՅԱՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

[ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 3627/06]<sup>55</sup>



Նշված գործերով կայացված վճիռներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտման հիմքով:

## ԱԳԱՆԻԿՅԱՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Սույն գործով Դատարանն արձանագրել է, որ դիտարկվող ժամանակահատվածի հաշվարկը սկսվել է 2004 թվականի դեկտեմբերի 30-ից, երբ քննիչը քրեական գործով վարույթ է հարուցել դիմումատուի դեմ, և ավարտվել 2011 թվականի նոյեմբերի 21-ին, երբ Վճռաբեկ դատարանը տվյալ գործով վերջնական որոշում է կայացրել: Տևողությունը կազմել է գրեթե վեց տարի և տասնմեկ ամիս՝ երեք ատյանների մակարդակով, ու թեև Կառավարությունը պնդել է, որ գործը բարդ է եղել առաջադրվող մեղադրանքների բնույթի, ինչպես նաև հարցաքննվող տուժողների և վկաների

54. Ագանիկյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 21791/12, 2018 թ. ապրիլի 5), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-181859>:

55. Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 3627/06, 2012 թ. հուլիսի 10), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-112103>:

թվի պատճառով<sup>56</sup>, և չի եղել անգործության ժամանակահատված, ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ սույն գործով մինչդատական վարույթի, ինչպես նաև բողոքարկման փուլերը միանգամայն արագ են ավարտվել, սակայն Վարչական շրջանի դատարանում դատական քննության փուլը տևել է մոտավորապես չորսուկես տարի: Չնայած Վարչական շրջանի դատարանում դատական քննության փուլում իշխանության կողմից չեն եղել ակտիվության բացակայության հատկապես երկար ժամանակահատվածներ, խնդիրն այն է, որ գործի քննությունը հետաձգվել է 136 անգամ, մեկ տարի և երեք ամիս տևողությամբ դատական քննությունից հետո վարույթը վերսկսվել է, մեղադրանքները փոփոխվել են, կամ նորերն են առաջադրվել վարույթի այդ փուլում: Դատարանը գտել է, որ վարույթի ամբողջ տևողությունը արդարացված չի եղել:

## **ԳՐԻԳՈՐՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

Սույն գործով Դատարանը, անդրադառնալով քրեական վարույթի տևողության ժամանակահատվածի հաշվարկման հարցին, որպես դիտարկվող ժամանակահատվածի սկիզբ է համարել ոչ թե անձի ձերբակալության օրը՝ 07.10.2005 թ., այլ քրեական գործ հարուցելու օրը՝ 10.06.2005 թ.: հաշվի առնելով այն, որ չնայած քրեական գործ հարուցելուց հետո մինչև ձերբակալությունը դիմողը պաշտոնապես ներգրավված է եղել որպես վկա, այնուամենայնիվ, ակնհայտորեն հանդես է եկել կասկածյալի կարգավիճակում: Այնուհետև Դատարանը, հաշվի առնելով, որ վարույթը կասեցվել է 10.08.2006 թ.-ին և դեռևս քննության փուլում է եղել 10.09.2010 թ.-ին՝ այն օրը, երբ սույն գործով ներկայացվել է Կառավարության վերջին առարկությունը, գտել է, որ վարույթն ընթացքի մեջ է եղել առնվազն հինգ տարի և երեք ամիս, ու հնարավոր է, որ յոթ տարի անց էլ դեռ չարունակվում է: Գործի բարդությանը անդրադառնալիս ՄԻԵԴ-ը

---

56. Առկա են եղել ութ տուժողներ, և որպես վկա հարցաքննվել են երեսուներու անհատներ և՛ մինչդատական վարույթի, և՛ դատական քննության ընթացքում: Ըստ Կառավարության՝ դատական քննությանը մեծ թվով տուժողների և վկաների մասնակցությունը հնարավոր է եղել միայն Վարչական շրջանի դատարանի կողմից նշանակված հարկադրանքի միջոցներ կիրառելուց հետո, ավելին, հարցի քննության համար պահանջվել է մի քանի դատաբժշկական փորձաքննություն, և հավաքված ապացույցների ծավալը չափազանց մեծ է եղել:



արձանագրել է, որ առնվազն հինգ տարի և երեք ամիս տևողությամբ ժամանակահատվածը, որի ընթացքում գործը մնացել է նախաքննության փուլում, չի կարող բացատրվել բացառապես գործի բարդությամբ, նաև նշել է, որ գործի նյութերում ոչինչ թույլ չի տալիս ենթադրել, որ վարույթը կասեցնելուց հետո, այսինքն՝ առնվազն չորս տարվա ընթացքում, իրականացվել է որևէ դատավարական գործողություն:

## Կառավարության գործողությունների հաշվետվություն

(24.07.2019 թ.)<sup>57</sup>

### (հիմնական ընդհանուր միջոցներ)

- Դեռևս 2006 թ.-ին ընդունվել է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշումը գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման մասին, որով հանձնարարվել է դատարանների նախագահներին հետևել դատավորների կողմից գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանմանը, դատական գործընթացի կազմակերպվածությանը, կատարողական կարգապահությանը և խախտումներ հայտնաբերելու դեպքում այդ մասին տեղեկացնել ՀՀ դատարանների նախագահների խորհրդին:
- Առանձին դեպքերում Արդարադատության խորհուրդը կայացրել է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումներ, երբ խախտվել է գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջը (այդ թվում դիմումատուի գործի վերաբերյալ):
- «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ նախագահի կարգադրությամբ սահմանվում էր գործի քննության ողջամիտ ժամկետների խախտումների դեպքում նախատեսել արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ:

57. Մանրամասն տե՛ս [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2019\)829E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2019)829E):

- 2018 թ.-ին ընդունվել է Նոր Դատական օրենսգիրքը, որտեղ ամրագրվել են վարույթի տևողության ողջամտությունը գնահատելու չափանիշները, իսկ ՀՀ Վճռաբեկ դատարանն ավելի հստակեցրել է դրանք իր որոշումներով՝ Եվրոպական դատարանի պահանջներին համապատասխան:
- Ողջամիտ ժամկետներում գործի քննությունն ու դատական ակտերի կայացումը հաշվի են առնվում նաև դատավորի գործունեության արդյունավետության գնահատման ժամանակ:
- Նոր Դատական օրենսգրքով դատավորին հնարավորություն է ընձեռվել առանձնակի բարդության գործ ունենալու դեպքում դիմել Բարձրագույն դատական խորհուրդ՝ իր անունը բաշխման ցանկից ժամանակավորապես հանելու կամ իր համար բաշխվելիք գործերի տոկոսաչափ սահմանելու առաջարկով:
- «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշմամբ նախատեսվել է Էլեկտրոնային արդարադատության համակարգի ներդրում, որը թույլ կտա արդարադատության ոլորտի մարմինների միջև իրականացնել թվային հաղորդակցություն:
- Նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը նախատեսում է պահեստային դատավոր նշանակելու հնարավորություն, պարունակում է նիստերը հետաձգելու հիմքերի սպառնիչ ցանկ և բարելավում է դատական սանկցիաների մեխանիզմները դատական վարույթը խոչընդոտելու կամ սահմանված իրավունքների չարաշահման դեպքում:
- Ձեռնարկվել են միջոցառումներ նախաքննության ժամկետների նկատմամբ դատախազական հսկողության սահմանման, ինչպես նաև դատարանում մեղադրանքի պաշտպանության որակի և արդյունավետության բարելավման ուղղությամբ:
- 2016 թվականից Հայաստանի քաղաքացիական օրենսգրքով սահմանվել է ոչ նյութական վնասի հատուցման հնարավորությունը հիմնարար իրավունքների և ազատությունների

խախտումների, ներառյալ արդար դատաքննության իրավունքի խախտման դեպքում: Վկայակոչվել է թիվ ԵԱԲԴ/0008/02/14 քաղաքացիական գործը, որի քննությունն իրականացվել է ողջամիտ ժամկետի խախտմամբ, Նշված հիմքով ճանաչվել է արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի հիմնարար իրավունքների խախտման փաստը, և որոշում է կայացվել Հայաստանի Հանրապետությունից բռնագանձել 500.000 ՀՀ դրամ և այլն:

## **Կառավարության գործողությունների հաշվետվություն (03.05.2016 թ.)<sup>58</sup> (հիմնական ընդհանուր միջոցներ)**

Նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը սահմանում է մի շարք մեխանիզմներ, որոնք կարող են կանխել նմանատիպ խախտումները ապագայում՝ այդ թվում՝ հանրային քրեական հետապնդման ժամկետներ սահմանելով (հոդվածներ 12, 194 և 196) և այլն:

- Դեռևս 2006 թ.-ին ընդունվել է «Գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման մասին» ՀՀ դատարանների և խազահների խորհրդի որոշումը:
- Հայաստանի Հանրապետության Դատախազությանը վերապահված է նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությունը, որի շրջանակում պարբերաբար Դատախազության համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարվում է ուսումնասիրել նախաքննության ժամկետների ձգձգման պատճառները, միջոցներ ձեռնարկել կյուրերի նախապատրաստման ցանկացած անհիմն ձգձգում բացառելու, նախաքննության ժամկետների նկատմամբ հսկողության ուժեղացման ուղղությամբ:

58. Մանրամասն տե՛ս [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2016\)609E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2016)609E):

## Օրենսդրական կարգավորումներ/խնդիրներ

Դատական օրենսգրքի 9-րդ հոդվածով ամրագրվել է գործի քննությունը և լուծումը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջը, ինչպես նաև սահմանվել են դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելու չափանիշները, այն է՝

1. գործի հանգամանքները, ներառյալ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները,
2. հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը,
3. գործի քննության ընդհանուր տևողությունը,
4. Բարձրագույն դատական խորհրդի սահմանած՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը:

Թեև ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի՝ 09.04.2018 թ.-ի թիվ ԲԴԽ-1-Ո-1 որոշմամբ<sup>59</sup> հաստատված ժամանակացույցի համաձայն՝ գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները սահմանող որոշումը նախատեսվում էր ընդունել մինչ 2020 թվականի նոյեմբերի 1-ը, սակայն այն մինչ օրս չի ընդունվել: Արձանագրենք նաև, որ ՀՀ Սահմանադրական դատարանը 16.03.2021 թ.-ի թիվ ՍԴՈ-1585 որոշմամբ, ի թիվս այլ գործոնների, Բարձրագույն դատական խորհրդի կողմից գործերի քննության միջին ուղենիշային տևողության սահմանմամբ պայմանավորել է նաև գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման արդյունավետության մակարդակի բարձրացումը<sup>60</sup>:

ՀՀ դատական օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանվում են դատական վիճակագրությանը ներկայացվող պահանջները, մասնավորապես գործի քննության ժամկետների մասով նախատեսված

59. Մանրամասն տե՛ս <http://www.irtek.am/views/act.aspx?aid=98353>:

60. Մանրամասն տե՛ս <https://www.concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1585.pdf>:

են հետևյալ ցուցիչները՝

- հաշվետու ժամանակահատվածում ավարտված գործերի քննության միջին տևողությունը՝ ըստ նիստերի քանակի,
- հաշվետու ժամանակահատվածում ավարտված գործերի քննության միջին տևողությունը՝ ըստ ժամանակի (հաշվարկի միավոր՝ ժամ):

Վկայակոչված վիճակագրական տվյալները հնարավորություն չեն տալիս իրական պատկեր ստանալու գործերի քննության միջին տևողության վերաբերյալ, քանի որ չեն ներառում նիստերի միջակայքում ընկած ժամանակահատվածը: Ակնհայտ է, որ միայն նիստերի քանակի և նիստերի տևողության<sup>61</sup> վերաբերյալ տվյալները բավարար չեն գործի քննության տևողության ողջամտությունը գնահատելու համար: Բացի այդ, գործերի քննության **ընդհանուր** ժամկետների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքման անհրաժեշտությունը բխում է նաև միջազգային չափորոշիչներից, մասնավորապես Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) հաստատած *Դատական վիճակագրության վերաբերյալ ուղեկիշներից*<sup>62</sup>:

Օրենսդրական ոչ լիարժեք կարգավորման հետևանք է նաև այն հանգամանքը, որ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված չէ մինչդատական ակտի վիճարկման վարույթի *առավելագույն և սեղմ որևէ ժամկետ*: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Կառավարությանը Հիմնադրամի կողմից առաջարկվել է նոր Քրեական դատավարության օրենսգրքի նախագծով սահմանել նշված վարույթի իրականացման սեղմ ժամկետներ, քանի որ

61. Որպես հաշվարկի միավոր՝ ժամ:

62. «Յուրաքանչյուր դատարան պետք է տվյալներ հավաքի դատարանում ընթացող դատավարության ժամկետների վերաբերյալ: Առկա ժամանակահատվածում (օրինակ՝ օրացուցային տարի) պետք է դիտարկվեն ընթացիկ և ավարտված գործերը, և դրանց տևողության վերաբերյալ տվյալները բաժանվեն խմբերի՝ ըստ դրանց տևողության ժամանակահատվածների, այսինքն՝ գործերը, որոնք գտնվում են կամ ավարտվում են մեկ ամսից պակաս ժամանակահատվածում, 1-3 ամիս, 4-5 ամիս, 7-12 ամիս, 1-2 տարի, 2-3 տարի, 3-5 տարի և ավելի քան 5 տարի: Բացի գործերի տևողության ժամանակահատվածների բաշխվածությունից՝ պետք է հաշվարկվի դատավարության միջին տևողությունը, ինչպես նաև պետք է նշվեն նվազագույն և առավելագույն ժամկետները...»: Մանրամասն տե՛ս CEPEJ GUIDELINES ON JUDICIAL STATISTICS (GOJUST) adopted by the CEPEJ at its 12th plenary meeting (Strasbourg, 10 – 11 December 2008), [https://rm.coe.int/1680747678#\\_ftnref5](https://rm.coe.int/1680747678#_ftnref5):

այն դեպքերի մեծամասնությունում կապված է անձանց և հատկապես դատավարության մասնավոր մասնակիցների իրավունքների, այդ թվում՝ հիմնական իրավունքների իրացման սահմանափակումների կամ նույնչափ հրատապ միջամտություն պահանջող հարցերի հետ: Ներկայումս նշված հարցերով գործնականում ընդհուպ միևնույն մեկ տարի տևող քննությունները հաճախ իմաստազրկում են համապատասխան գործերով հետագա քննությունը նույնիսկ այն դեպքում, երբ դատարանը բավարարում է դիմողի բողոքը: Նման նախաքննությունն այլևս դառնում է անարդյունավետ և ժամանակավրեպ: ՀՀ Նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծի լրամշակված տարբերակում սահմանվել է միևնույն պահանջի ակտի վիճարկման վարույթի իրականացման առավելագույն ժամկետ՝ մեկ ամիս<sup>63</sup>:

Խնդրահարույց է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի խախտման դեպքում ոչ նյութական վնասի փոխհատուցման իրավունքն ապահովող օրենսդրական կարգավորման արդյունավետությունը ողջամիտ ժամկետի խախտման բաղադրիչի համատեքստում<sup>64</sup>: Այսպես, ոչ նյութական վնասի հատուցման պահանջը դատարան կարող է ներկայացվել ինչպես արդար դատաքննության իրավունքի խախտումը հաստատելու պահանջի հետ՝ խախտման մասին անձին հայտնի դառնալու պահից, այնպես էլ այդ իրավունքի խախտումը հաստատող դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում<sup>65</sup>: Հաշվի առնելով այն, որ քաղաքացիական, վարչական և քրեական դատավարությունների օրենսգրքերով սահմանված չէ վերադաս դատարանի կողմից անձի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման ճանաչման ընթացակարգ՝ բողոք ներկայացնելու հիմ-

---

63. Մանրամասն տե՛ս [http://www.parliament.am/reading1\\_docs7/K-637\\_R1.pdf](http://www.parliament.am/reading1_docs7/K-637_R1.pdf):

64. Դատական պրակտիկայի ուսումնասիրությամբ փաստվել է, որ առկա է մեկ գործով կայացված վճիռ (ԵԴ/4961/02/18), որով հայցը բավարարվել է մասնակի՝ հաստատվել է հայցվորի՝ արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի հիմնարար իրավունքների խախտման փաստը, և որոշում է կայացվել Հայաստանի Հանրապետությունից հօգուտ հայցվորի բռնագանձել հինգ հարյուր հազար ՀՀ դրամ գումար՝ որպես հիմնարար իրավունքների խախտմամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցում (ներկայումս նշված վճիռը բեկանվել է վերաքննիչ դատարանի կողմից, և գործն ուղարկվել է Նոր քննության):

65. Քաղաքացիական օրենսգիրք, 1087.2-րդ հոդվածի 9-րդ մաս:

քերի, Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների լիազորությունների համատեքստում, անձի իրավունքի խախտումը կարող է ճանաչվել բացառապես առաջին ատյանի դատարանի կողմից առանձին վարույթի շրջանակներում: Նման պայմաններում առաջին ատյանի դատարանի կողմից քննության է առնվում ողջամիտ ժամկետի պահանջի հիմքով անձի՝ արդար դատաքննության իրավունքի խախտման հարցը այլ՝ նույն ատյանի կամ վերադաս դատարանի կողմից քննված գործի շրջանակում, ինչը, մեր գնահատմամբ, իրավաչափ համարվել չի կարող դատարանների աստիճանակարգի և դատավորի անկախության սկզբունքի համատեքստում: ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ 28.11.2007 թ.-ի թիվ ՍԴՈ-719 որոշմամբ խնդրահարույց է համարել հավասար կամ ցածր պետաիշխանական մակարդակի վրա գտնվող դատավորի կողմից նույն դատարանի նախագահի կամ վերադաս ատյանի դատարանների դատավորների գործողությունների (անգործության) վիճարկման վերաբերյալ դիմումները քննության առնելու հնարավորությունը<sup>66</sup> (նույն ատյանի դատարանի կողմից համապատասխան իրավունքի խախտման քննարկման հնարավորություն չի նախատեսվում նաև այլ երկրների օրենսդրությամբ<sup>67</sup>): Գտնում ենք, որ թե՛ ողջամիտ ժամկետի պահանջի հիմքով արդար դատաքննության

66. Մանրամասն տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 28.11.2007 թ.-ի ՍԴՈ-719 որոշումը, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=40651>:

67. Ռուսաստանի Դաշնության «Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի կամ ողջամիտ ժամկետում դատական ակտի կատարման իրավունքի խախտման համար փոխհատուցման մասին» ֆեդերատիվ օրենքի համաձայն՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման համար փոխհատուցում ստանալու մասին դիմումը ներկայացվում է ընդհանուր իրավասության դատարան կամ արբիտրաժային դատարան: Միաժամանակ սահմանված է, որ ֆեդերատիվ օրենքի կիրառման իմաստով ընդհանուր իրավասության դատարան են համարվում 1) հանրապետության գերագույն դատարանը, շրջանային դատարանը, դաշնային նշանակության քաղաքի դատարանը, ինքնավար շրջանի դատարանը և այլն, 2) Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանը այն դեպքերում, երբ գործը քննել է ֆեդերատիվ դատարանը և այլն, 3) շրջանի արբիտրաժային դատարանը: Մանրամասն տե՛ս Федеральный закон от 30.04.2010 N 68-ФЗ (ред. от 19.12.2016) "О компенсации за нарушение права на судопроизводство в разумный срок или права на исполнение судебного акта в разумный срок", [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_99919/fd96d06d384a6803f937d319155dfc29a26aa8cc/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_99919/fd96d06d384a6803f937d319155dfc29a26aa8cc/), հոդված 3: Տե՛ս նաև Խորվաթիայի, Մոնտենեգրոյի, Լեհաստանի օրենսդրությունը, որին անդրադարձ է կատարվել «Ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջի խախտման դեպքում իրավունքի վերականգնման մեխանիզմների բացակայության վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցում, 2020 թ. <https://ombuds.am/images/files/e722139fe25348c1076dae0df9496c55.pdf?fbclid=IwAR2yGNDGQqEgifcsQKWG9CFZToURqiH1jMd1poR8K6j2uksYa5gstSigis>:

իրավունքի խախտումը ճանաչելու իրավասության և թե՛ համապատասխան վարույթի առանձնահատկությունների կարգավորման բացակայության տեսանկյունից ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման դեպքում ոչ նյութական վնասի փոխհատուցման միջոցը գործնականում արդյունավետ համարվել չի կարող:

Գործի քննության ողջամիտ ժամկետի խախտումները կանխելուն և խախտումների հետևանքները վերացնելուն ուղղված միջոցների վերաբերյալ օրենսդրական իրավակարգավորումների սահմանումը ՀՀ օրենսդրությամբ պետք է լինի խնդրի համակարգային լուծմանն ուղղված կարևոր քայլերից մեկը: Այս օրենսդրական երաշխիքների ապահովման անհրաժեշտությունն ամրագրվել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 16.03.2021 թ.-ի թիվ ՍԴԴ-1585 որոշմամբ՝ պետության պոզիտիվ պարտականությունների համատեքստում<sup>68</sup>, ինչպես նաև ուղղակիորեն բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներից<sup>69</sup>:

---

68. Մանրամասն տե՛ս <https://www.concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1585.pdf>:

69. Ինչ վերաբերում է իրավական պաշտպանության միջոցների «արդյունավետությանը» վարույթի երկար տևողությամբ գործերի դեպքում, Դատարանը գտնում է, որ լավագույն լուծումը, ինչպես շատ ոլորտներում, միանշանակ կանխարգելումն է: 6-րդ հոդվածի 1-ին կետով՝ պայմանավորվող պետությունները պարտավորվում են իրենց դատական համակարգերն այնպես կազմակերպել, որ դրանց դատարանները կարողանան բավարարել դրանով սահմանված պահանջներից յուրաքանչյուրը, այդ թվում՝ գործով լուծման թերի է, ապա ամենաարդյունավետ լուծումը վարույթի չափից ավելի երկարաձգումը կանխարգելելու նպատակով այն արագացնելու համար նախատեսված իրավական պաշտպանության միջոցի նախատեսումն է: Այսպիսի իրավական պաշտպանության միջոցն անհերքելի առավելություն ունի այնպիսի իրավական պաշտպանության միջոցի նկատմամբ, որն ապահովում է միայն փոխհատուցում, քանի որ այն ոչ միայն վերացնում է խախտումը a posteriori (հետագայում), ինչպես փոխհատուցման ձևով իրավական պաշտպանության միջոցի դեպքում, այլև կանխարգելում է նույն տեսակի վարույթների մասով հաջորդական խախտումների հայտնաբերումը: Հետևաբար իրավական պաշտպանության այս տեսակն «արդյունավետ» է այնքանով, որքանով այն արագացնում է համապատասխան դատարանի որոշումը: Միևնույն ժամանակ վարույթի ընթացքն արագացնելուն ուղղված իրավական պաշտպանության միջոցը չի կարող բավարար լինել այնպիսի իրավիճակ կարգավորելու համար, որի դեպքում վարույթն ակնհայտորեն չափազանց երկար է եղել: Նման իրավիճակում խախտումը կարող է պատշաճորեն վերացվել իրավական պաշտպանության միջոցների տարբեր տեսակների տրամադրմամբ, ներառյալ փոխհատուցման ձևով իրավական պաշտպանության միջոցը (տե՛ս Սկորդինոյի ընդդեմ Իտալիայի (թիվ 1) [Մեծ պալատ] [ Scordino v. Italy (no. 1) [GC]], թիվ 36813/97, §§ 183-187, ՄԻԵԴ 2006-V և Կոչիարելլայի ընդդեմ Իտալիայի [Մեծ պալատ] [Cocchiarella v. Italy [GC]], թիվ 64886/01, §§ 74-78, ՄԻԵԴ 2006-V, «Ֆիլ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի [Fil LLC v. Armenia, application no. 18526/13, 31/01/2019]):



Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ողջամիտ ժամկետում գործի քննության ապահովման նպատակով կարող են սահմանվել տարաբնույթ կանխարգելիչ միջոցներ դատաքննության ոչ իրավաչափ ձգձգումները բացառելու նպատակով: Օրինակ՝

- հսկողական բողոք ներկայացնելու և վերադաս դատարանի կողմից վերջնաժամկետ սահմանելու հնարավորությունները<sup>70</sup>,
- վերադաս դատարան դիմում ներկայացնելը՝ դատարանի կողմից դատավարական գործողությունների կատարումն անհիմն հետաձգելու գործողության կամ անգործության դեմ<sup>71</sup>,
- դատական քննության ձգձգման դեպքում դատարանի նախագահին դիմում-բողոք ներկայացնելը՝ դատավարությունն արագացնելու խնդրանքով<sup>72</sup>,
- առանձին վարույթների ժամկետների սահմանումը կամ առանձին դատավարական գործընթացների կրճատումն ու արդյունավետության բարձրացումը<sup>73</sup> և այլն:

---

Տևական քննությունների կապակցությամբ ներպետական իրավական պաշտպանության արդյունավետության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի զեկույցի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ողջամիտ ժամկետի պահանջի կապակցությամբ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներին լիարժեքորեն համապատասխանելու համար Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ապահովեն առաջին հերթին արագացնող միջոցներ, որոնք նախատեսված են ցանկացած (հետագա) անհարկի ձգձգում ցանկացած պահի՝ մինչև գործի քննության ավարտը կանխելու համար: Բացի այդ, նրանք պետք է ապահովեն փոխհատուցող միջոցներ ողջամիտ ժամկետի պահանջի ցանկացած խախտման համար, որն արդեն առաջացել է գործի քննության ընթացքում (նախքան արագացնող արդյունավետ միջոցների գործադրումը), մանրամասն տե՛ս CDL-AD(2006)036rev, 03/04/2007, հասանելի է՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/CDL-AD\(2006\)036rev-e.aspx](https://www.venice.coe.int/webforms/documents/CDL-AD(2006)036rev-e.aspx):

70. Մանրամասն տե՛ս Սլովենիայի Հանրապետության՝ 2006 թվականի մայիսի 27-ին ուժի մեջ մտած «Առանց ոչ իրավաչափ ձգձգումների դատաքննության իրավունքի պաշտպանության մասին» օրենքը, հասանելի է՝ <http://www.pisrs.si/Pis.web/pregledPredpisa?id=ZAKO4726>:

71. Մանրամասն տե՛ս Ավստրիայի Հանրապետության «Դատական համակարգի կազմակերպման մասին» թիվ 217/1896 օրենքի 91-րդ հոդվածի դրույթները, հասանելի է՝ <https://www.ris.bka.gv.at/GeltendeFassung.wxe?Abfrage=Bundesnormen&Gesetzesnummer=10000009>:

72. Մանրամասն տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6.1 հոդվածը, հասանելի է՝ [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_39570/8fd248bf68414ef74042e4f3ff0e46e249f78047/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_39570/8fd248bf68414ef74042e4f3ff0e46e249f78047/):

73. Մանրամասն տե՛ս Չեխիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և «Երեխաների սոցիալական և իրավական պաշտպանության մասին» օրենքը, հասանելի են համապատասխանաբար՝ <https://www.zakonyprolidi.cz/cs/2012-89>, <https://www.zakonyprolidi.cz/cs/1999-359>:

Արձանագրենք, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն գործի քննության ողջամիտ ժամկետի խախտումները կանխելուն, այդ թվում՝ վարույթի արագացմանն ուղղված արդուևսավետ միջոցներ:

## Իրավակիրառ պրակտիկա/խնդիրներ

Թեև ՀՀ Սահմանադրությամբ, Դատական և դատավարական բուրի օրենսգրքերով ամրագրված է յուրաքանչյուր անձի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը, այնուամենայնիվ, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործերի քննության ողջամիտ ժամկետի խախտումները ունեն համատարած բնույթ<sup>74</sup>:

Բարձրագույն դատական խորհրդի տարեկան հաղորդմամբ (2019 թ.) արձանագրվել են քրեական, քաղաքացիական, վարչական գործերով տարիներ շարունակ քննությունների հետաձգման, առանձին դատավորների մոտ 50 տոկոս և ավելի նշանակված ու չկայացած նիստերի, ինչպես նաև Երևան քաղաքում 155 քրեական և 1628 քաղաքացիական գործերով երկու և ավելի տարի քննությունների ձգձգման փաստերը (ըստ հաղորդման՝ կան գործեր, որոնց քննությունը չի ավարտվում 10 և ավելի տարիներ)<sup>75</sup>:

Սույն հետազոտության շրջանակներում «Դատալեքս» դատական տեղեկատվական առցանց համակարգում գետնեղված տվյալների հիման վրա վեր են հանվել Վերաքննիչ վարչական դատարանում առաջին դատական նիստի նշանակման ժամանակահատվածին վերաբերող վիճակագրական տվյալներ: Այսպես, 2018-2020 թվականներին Վարչական դատարան ներկայացված գործերից 7730 գործով ներկայացվել են վերաքննիչ բողոքներ: Այս գործե-

---

74. Ի թիվս սույն հետազոտությամբ ներկայացված վիճակագրական տվյալների՝ տե՛ս «Ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջի խախտման դեպքում իրավունքի վերականգնման մեխանիզմների բացակայության վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ իրապարակային զեկույցը, 2020 թ., հասանելի է՝ <https://ombuds.am/images/files/e722139fe25348c1076dae0df9496c55.pdf?fbclid=IwAR2yGNDGQqkEgifcsQKwG9CFZToURqiH1jMd1poR8K6j2uksYa5gstSigs>:

75. Մանրամասն տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի տարեկան հաղորդումը, Երևան, 2019 թ., <http://new.court.am/storage/uploads/files/service-page/T63G7RkVdVgDqUNjPVOM5ddAQiTGmCyoJhrhWaXm.pdf>, Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունը՝ <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1057>:

րից առանձնացվել են 5294-ը, որոնցով իրականացվել է Վարչական դատարանի՝ գործն ըստ Էուբյան լուծող դատական ակտի դեմ բերված բողոքներով գործերի քննություն: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ վերաքննիչ բողոք ներկայացնելու պահից մինչև Վերաքննիչ վարչական դատարանում առաջին դատական նիստը նշանակելու միջինացված տևողությունը կազմում է շուրջ 12 ամիս:

Ինչպես ցուցադրված է ստորև ներկայացված գրաֆիկում, 265 վարչական գործերով վերաքննիչ բողոքը ներկայացնելու պահից մինչև առաջին դատական նիստի նշանակումը ընկած ժամանակահատվածը տատանվել է 16,5-ից մինչև 27 ամիս: Այդ գործերից ընդամենը 20-ով որպես նիստերի հետաձգման կամ ուշ նշանակման պատճառ նշված չէր կորոնավիրուսային նոր համավարակը, մնացած դեպքերով հետաձգումները կապված են եղել հիշատակված վարակի տարածման հետ՝ թե՛ դատավորների ինքնամեկուսացմամբ, թե՛ արտակարգ դրությամբ պայմանավորված:


Կատարված վերլուծության հիման վրա արձանագրում ենք, որ ուսումնասիրված 5294 վարչական գործերից 4250-ով վերաքննիչ բողոքի ներկայացման պահից մինչև առաջին դատական նիստի նշանակումը տևել է 10-16 ամիս:

Այսպես,

- 901 գործով՝ 11-12 ամիս,
- 742 գործով՝ 13-14 ամիս,
- 710 գործով՝ 12-13 ամիս,
- 630 գործով՝ 10-11 ամիս,
- 596 գործով՝ 14-15 ամիս,
- 450 գործով՝ 10 ամիս,
- 221 գործով՝ 15-16 ամիս,
- 211 գործով՝ 8-9 ամիս,
- 126 գործով՝ 6-7 ամիս,
- 112 գործով՝ 7-8 ամիս,
- 99 գործով՝ 5-6 ամիս,
- 86 գործով՝ 16-17 ամիս,
- 82 գործով՝ 4-5 ամիս,

- 63 գործով՝ 3-4 ամիս,
- 48 գործով՝ 17-18 ամիս,
- 44 գործով՝ 2-3 ամիս,
- 31 գործով՝ 18-19 ամիս,
- 30 գործով՝ 19-20 ամիս,
- 28 գործով՝ 1-2 ամիս,
- 17 գործով՝ 22-23 ամիս,
- 16 գործով՝ 23-24 ամիս,
- 15 գործով՝ 21-22 ամիս,
- 14 գործով՝ 0-1 ամիս,
- 13 գործով՝ 20-21 ամիս,
- 6 գործով՝ 24-25 ամիս,
- 2 գործով՝ 25-26 ամիս,
- 1 գործով՝ 27 ամիս:

## Բողոք ներկայացնելու պահից մինչև առաջին դատական նիստը



Արձանագրենք նաև, որ թեև ՀՀ դատական օրենսգրքի 19-րդ հոդվածը սահմանում է դատական վիճակագրության վարմանը առաջադրվող պահանջները, գործնականում, ըստ նիստերի քանակի և ժամանակի, հաշվետու ժամանակահատվածում ավարտված գործերի քննության միջին տևողության<sup>76</sup> վերաբերյալ տվյալներ չեն հրապարակվում, և այդ մասով վիճակագրություն չի վարվում տեխնիկաձրագրային հնարավորություն չլինելու պատճառաբանությամբ<sup>77</sup>: Մինչդեռ գործերի քննության տևողությանն առնչվող վիճակագրության վարումը Եական նշանակություն ունի գործնականում քննության ողջամիտ ժամկետների պահպանման և համարժեք կանխարգելիչ միջոցների ապահովման տեսանկյունից:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը<sup>78</sup> ցույց է տալիս նաև, որ տեղեկատվության տրամադրման մերժումը դատական կարգով վիճարկելու դեպքում դատական գործերի մի մասի քննությունը միայն Վարչական դատարանում տևել է 1-4 տարի, իսկ բողոքարկման պարագայում առանձին դեպքերում նույնիսկ գերազանցել է այդ ժամանակահատվածը<sup>79</sup>: Ակնհայտ է, որ նման իրավակիրառ պրակտիկան բովանդակագրկում է տեղեկատվության ազատության իրավունքը և անձին զրկում տեղեկատվության ազատության իրավունքի խախտման դեպքում արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի հնարավորությունից, քանի որ տեղեկատվության մատչելիության իրավունքի արդյունավետ իրականացումը պայմանավորված է առաջին հերթին տեղեկատվության տրամադրման սեղմ ժամկետներով: 2009 թ.-ի հունիսի 18-ին Եվրոպայի խորհրդի ընդունած Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիայի<sup>80</sup> 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև դրա բացատրական զեկույցի 64-րդ և 66-րդ կետերի համաձայն՝ անձը, որի հարցումը մերժվել է ամբողջու-

76. ՀՀ դատական օրենսգրքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի 6-րդ և 7-րդ կետեր:

77. Նշված փաստը վերահաստատվել է հարցմանն ի պատասխան՝ Դատական դեպարտամենտի՝ 26.01.2021 թ.-ի թիվ Ե-266 գրությամբ:

78. Վերլուծությունն իրականացվել է [www.datalex.am](http://www.datalex.am) կայքում հրապարակված դատական գործերի տվյալների հիման վրա:

79. Մանրամասն տե՛ս «Տեղեկատվության ազատությանն առնչվող խնդիրները Հայաստանի Հանրապետությունում» զեկույցը, 2020 թ., հասանելի է՝ <https://bit.ly/2PSZgjQ>:

80. 24.06.2020 թ.-ին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան:

թյամբ կամ մասնակի, պետք է ունենա **դատարանի** կամ արտադատական կարգով՝ անկողմնակալ և անկախ մարմնի կողմից այդ որոշման վերանայման հնարավորություն՝ **արագ** և ոչ թանկարժեք ընթացակարգով:

## Եզրակացություն

Հետազոտության արդյունքում կարող ենք փաստել, որ գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտմանն առնչվող գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռներից բխող ընդհանուր միջոցների կիրառման խնդիր առկա է թե՛ օրենսդրական մակարդակում, թե՛ իրավակիրառ պրակտիկայում: Այսպես, ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովմանն ուղղված անհրաժեշտ կանխարգելիչ և փոխհատուցման արդյունավետ միջոցների համակարգ՝ դրանից բխող իրավական պաշտպանության ընթացակարգերով: Բարձրագույն դատական խորհրդի կողմից դեռևս սահմանված չեն գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները, ինչը ևս կարող է նպաստել գործնականում ողջամիտ ժամկետի պահանջի պահպանմանը: ՀՀ դատական օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանված՝ դատական վիճակագրությանը ներկայացվող պահանջները հնարավորություն չեն տալիս իրական պատկեր կազմելու գործերի քննության միջին տևողության վերաբերյալ, քանի որ չեն ներառում դատական նիստերի միջակայքում ընկած ժամանակահատվածը, իսկ սահմանված ցուցիչների մասով գործնականում վիճակագրություն չի վարվում: Ինչ վերաբերում է իրավակիրառ պրակտիկային, ապա իրականացված ուսումնասիրության արդյունքներով փաստվում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործերի քննության ողջամիտ ժամկետի խախտումները ունեն համատարած բնույթ:

## «ՖԻԼ» ՄՊԸ-Ն ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

[ՉԱՆՉԱՏ ԹԻՎ 18526/13]<sup>81</sup>

## «ՕԼԻՄՊ» ԱՐՏԱԴՐԱՎԱՆ ԿՈՌՊՏԵՐԱՏԻՎԱՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

[ՉԱՆՉԱՏ ԹԻՎ 47012/15]<sup>82</sup>



Նշված գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ճանաչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտման հիմքով (նշանակված փորձաքննությունների համատեքստում):

### «ՖԻԼ» ՄՊԸ-Ն ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Սույն գործով դիտարկվող ժամանակահատվածի հաշվարկը սկսվել է 2008 թվականի հունվարի 18-ից, երբ դիմումատու ընկերությունը Երևանի քաղաքացիական դատարանում հարուցել է փոխհատուցման վարույթ, և ավարտվել է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2017 թվականի մարտի 23-ի որոշման կայացմամբ: Այսպիսով, այն տևել է ինը տարի և երկու ամիս. առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները գործը քննել են երկուական անգամ: ՄԻԵԴ-ը նշել է, որ յոթ տարի և հինգ ամիս տևած ամենաերկարատև ձգձգումը տեղի է ունեցել 2009 թվականի ապրիլի 23-ից մինչև 2016 թվականի հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում, երբ գործն ընթացքի մեջ էր Վարչական շրջանի դատարանում, և կողմերը սպասում էին նշանակված փորձագիտական եզրակացությունը ստանալուն: ՄԻԵԴ-ը շեշտել է, որ գործի երկարաձգումը դիմումատու ընկերությանը վերագրելի չէ, փոխարենը այն վերագրելի էր ներպետական դատարաններին, որոնք

81. «ՖԻԼ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի (զանգատ թիվ 18526/13, 2019 թ. հունվարի 31), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-189589>:

82. «Օլիմպ» արտադրական կորպորատիվն ընդդեմ Հայաստանի (զանգատ թիվ 47012/15, 2020 թ. հուլիսի 30), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-203974>:

ինը տարվա ընթացքում նշանակել էին գործը լուծելու համար անհրաժեշտ հինգ տեխնիկական փորձաքննություն, սակայն չէին ապահովել դրանցից չորսի իրականացումը:

ՄԻԵԴ-ն արձանագրել է նաև, որ գործում առանձնակի բարդություն չի եղել, և Արդարադատության նախարարությունից ստացված՝ 2015 թվականի մայիսի 20-ի գրության մեջ նշվել էր, որ պահանջվող տեխնիկական փորձաքննությունն անցկացնելը կտևեր միայն մեկ օր, իսկ փորձագետի եզրակացությունը կազմելը՝ հինգ օր: Այնուամենայնիվ, ի սկզբանե 2008 թվականի փետրվարի 20-ին նշանակված փորձագիտական եզրակացությունը ամփոփվել և Վարչական շրջանի դատարան էր ներկայացվել միայն 2015 թվականի հունիսի 30-ին:

### **«ՕԼԻՄՊ» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՌՊԵՐԱՏԻՎ ՆԵՂԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ գործով վարույթի տևողությունը չի համապատասխանել *ողջամիտ ժամկետի* պահանջին. ընդհանուր տևողությունը կազմել է 10 տարի, 2 ամիս և 17 օր: Սույն գործով արձանագրված խնդիրները նույնատիպ են եղել «Ֆիլ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով արձանագրված խնդիրներին, որոնց կապակցությամբ Դատարանն արդեն ճանաչել էր խախտում:

### **Կառավարության գործողությունների հաշվետվություն (06.05.2020 թ.)<sup>83</sup> (հիմնական ընդհանուր միջոցներ)**

- Ձեռնարկվել է դատական փորձաքննությունների կատարելագործման գործընթաց: Ներկայումս Հայաստանում դատական փորձաքննություններն իրականացնում են մասնավոր կազմակերպությունները, ինչպես նաև ՀՀ Արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոնը և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Փորձաքննությունների ազգային բյուրոն, որոնք հագեցած են ժամանակակից սարքավորումներով, ունեն փորձառու և հմուտ անձնակազմ: Այժմ

83. Մանրամասն տե՛ս [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2020\)422E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2020)422E):



գործնականում բացառված է տեխնիկական փորձաքննության ոլորտում փորձագետ չունենալու խնդիրը:

- Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությամբ նախատեսվում է պետության կողմից հիմնադրված և պետական մարմինների կամ հաստատության ենթակայությամբ գործող փորձաքննություն կատարող հաստատությունները միավորել մեկ միասնական փորձագիտական հաստատության մեջ:
- Ստեղծվել է աշխատանքային խումբ՝ դատափորձագիտական գործունեության մասին օրենքի նախագիծ մշակելու նպատակով:
- Նոր քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում է դատական փորձաքննության գործընթացի խոչընդոտման վերացման հնարավորություն:

Մնացյալ մասով հիշատակվել են *Ազանիկյանն ընդդեմ Հայաստանի* գործով Կառավարության գործողությունների հաշվետվությունում մատնանշված հիմնական միջոցները:

## Օրենսդրական կարգավորումներ/խնդիրներ

ՀՀ քրեական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերով նախատեսված չէ փորձագետի պարտականությունը՝ փորձաքննությունը խոչընդոտող հանգամանքների առկայության դեպքում անհապաղ դատարանին տեղեկացնելու վերաբերյալ, ամրագրված չէ նաև խոչընդոտների վերացմանն ուղղված անհրաժեշտ ընթացակարգը, այնինչ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածով սահմանված են համապատասխան կարգավորումները: Այսպես, փորձաքննության ընթացքը խոչընդոտող հանգամանքների առկայության, ինչպես նաև փորձաքննության բնականոն ընթացքն ապահովելու անհնարիության այլ դեպքերում փորձագետը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել առաջին ատյանի

դատարանին: Վերջինս առանց դատական նիստ հրավիրելու անհապաղ որոշում է կայացնում փորձաքննության կատարման ընթացքն ապահովելու մասին: Որոշման մեջ նշվում են բոլոր այն միջոցառումները, որոնք պետք է կատարվեն նշված խոչընդոտները վերացնելու, ինչպես նաև փորձաքննության բնականոն ընթացքն ապահովելու համար, և դրանց կատարման ժամկետը: Որոշումը կամովին չկատարելու դեպքում որոշման հիման վրա կազմված կատարողական թերթը անհապաղ ուղարկվում է հարկադիր կատարման: Այն կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով<sup>84</sup>:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված չէ նաև փորձագետի կողմից փորձաքննության/առանձին հարցերի՝ իր մասնագիտական ոլորտին չպատկանելու հիմքով այն կատարելու անհնարինության դեպքում այդ մասին դատարանին անհապաղ տեղեկացնելու պարտականությունը:

Միաժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում փորձագետի եզրակացության ձևի ընտրության հետ կապված ճկուն կարգավորումներ, որոնք հնարավորություն կտային առավել սեղմ ժամկետներում ապահովելու փորձագետի եզրակացության տրամադրումը: Մասնագիտական գրականության մեջ, օրինակ, առաջարկվում է փորձագետի եզրակացության ձևի ընտրությունը դատական քննության փուլում թողնել դատարանին, ինչը հնարավորություն կտա խուսափելու փորձաքննությունն նշանակելու և կատարելու հետ կապված դատավարական և հետազոտական գործընթացի ձգձգումներից այն դեպքերում, երբ հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման համար երկարատև և բարդ հետազոտություններ կատարելու անհրաժեշտություն չկա, և փորձագետը կարող է, դատական քննության ընթացքում նյութերը հետազոտելով, հանգել որոշակի հետևությունների և բանավոր կերպով դրանք արտահայտել դատարանում, որոնք էլ ներառվում են դատական նիստի արձանագրության մեջ և օգտագործվում որպես ապացույցներ (որպես նշված առաջարկը հիմնավորող միջազգային փորձ բերվել է Գերմանիայի, Ֆրանսիայի և

84. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 88-րդ հոդված, 4-րդ մաս:

Հոլանդիայի օրենսդրությունների օրինակը<sup>85</sup>: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն նաև փորձաքննությունների կատարման համար առավելագույն ժամկետ սահմանելու գործիքակազմեր<sup>86</sup>:

## Իրավակիրառ պրակտիկա/խնդիրներ

Սույն հետազոտության շրջանակում առանձին ուսումնասիրության առարկա են դարձել դատական փորձաքննությունների իրականացման ժամկետները՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովման համատեքստում:

Ուսումնասիրվել և վեր են հանվել շուրջ 200 քաղաքացիական գործերով նշանակված դատական փորձաքննությունների տևողության վերաբերյալ տվյալներ, որոնցով փաստվում է, որ թվով 100 գործերով փորձաքննության տևողությունը կազմել է 1-4 ամիս, 49 գործերով՝ 5-8 ամիս, 37 գործերով՝ 9-14 ամիս, 14 գործերով՝ 15-23 ամիս:

Ըստ ՀՀ Դատախազության պաշտոնական տվյալների<sup>87</sup> Հայաստանի Հանրապետության քրեական հետապնդման բոլոր մարմինների վարույթներում գտնվող քրեական գործերով 25.03.2019 թվականի դրությամբ կատարման փուլում է գտնվել 2 ամսից ավելի տևած 146 տեսակի 916 փորձաքննություն, որից 261-ը՝ ՀՀ Ձինվորական դատախազության դատախազների հսկողության տակ գտնվող քրեական գործերով (մնացածը՝ 655): Նշված 146 տեսակներից 25-ը մեկ բնագավառի հատուկ գիտելիքների կիրառմամբ կատարվող, իսկ 121-ը համալիր փորձաքննություններ են: Հիշա-

85. Մանրամասն տե՛ս Վահե Ենգիբարյան, «Դատական փորձաքննությունների ինստիտուցիոնալ կատարելագործման հեռանկարները ՀՀ քրեադատավարական օրենսդրության համատեքստում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 1(1) 2018, Երևան-2018, հասանելի է՝

[http://ysu.am/files/19Vahe\\_Yengibaryan.pdf?fbclid=IwAR2jNkACG7pxWTi2LPYIV\\_WrjMs-RF-uEp3\\_z5Uhn1UKpMRkKb4EIEy\\_pq8](http://ysu.am/files/19Vahe_Yengibaryan.pdf?fbclid=IwAR2jNkACG7pxWTi2LPYIV_WrjMs-RF-uEp3_z5Uhn1UKpMRkKb4EIEy_pq8):

86. Նման գործիքակազմ է նախատեսվում սահմանել, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում, որտեղ առաջարկվել է նախատեսել, որ դատաբժշկական հաստատության ղեկավարը սահմանի դատաբժշկական փորձաքննության իրականացման ժամանակահատվածը 30 օրացուցային օրվա ընթացքում: Նախատեսվում է նաև, որ նշված ժամանակահատվածը կարող է երկարացվել 60 օրից ոչ ավելի ժամկետով, իսկ հանձնաժողովային և համալիր փորձաքննության դեպքում՝ 180 օրից ոչ ավելի ժամկետով: Մանրամասն տե՛ս <https://regulation.gov.ru/projects#npa=112058>:

87. Մանրամասն տե՛ս <http://www.prosecutor.am/am/mn/7455/>:

տակված 146 տեսակների մեջ զգալի մաս են կազմել դատաբժըշկական հանձնաժողովային փորձաքննությունները. եթե 916 փորձաքննություններից մեկ տեսակին (146-ի հաշվառմամբ) բաժին է ընկնում 15,9%, ապա դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննությունները 196-ն են կամ բոլոր 916 փորձաքննությունների 21,4%-ը:

Քանակական առումով երկրորդ եղել են դատաավտոտեխնիկական փորձաքննությունները՝ 78 կամ 8,5%, ապա դատահաշվապահական (51 կամ 5,6%), այնուհետև՝ դատաբժշկական (41 կամ 4,5%), դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր (40 կամ 4,4%):

916 փորձաքննություններից 25.03.2019 թվականի դրությամբ տևել են.

- 2-4 ամիս՝ 110-ը կամ 12%-ը,
- 4-6 ամիս՝ 323-ը կամ 35,6%-ը,
- 6-8 ամիս՝ 199-ը կամ 21,7%-ը,
- 8-12 ամիս՝ 150-ը կամ 16,4%-ը,
- 12 ամիս և ավելի՝ 69-ը կամ 7,5%-ը:

Տևողությունը ամիսներով	-4	-6	-8	-12	12 և ավելի	Պարզ չէ	Ընդհանուր
Քանակը	10	23	99	50	69	65	916
Ընդհանուրի կազմում %-ը	2	5,3	1,7	6,4	7,5	7,1	100

1 տարուց ավել ձգվող փորձաքննությունների կազմում գերակշռող քանակ են կազմում դատահաշվապահական փորձաքննությունները՝ 14 ամիս կամ 1 տարուց ավել ձգվող փորձաքննությունների 20,3%-ը<sup>88</sup>:

88. ՀՀ Գլխավոր դատախազության՝ 22.01.2021 թ.-ի թիվ 20.2/20.2/563-2021 պատասխանը:

1 տարուց ավել ձգվող փորձաքննությունների ցանկը ըստ տեսակների ներկայացված է ստորև բերված աղյուսակով.

Փորձաքննության տեսակ	Ընդհանուր թիվը	1 տարուց ավել
Դատահաշվապահական	51	14
Դատաբժշկական-դատահոգեբուժական-ռազմաբժշկական	11	8
Դատաբժշկական հանձնաժողովային	196	7
Դատաբժշկական-ռազմաբժշկական	11	7
Դատահոգեբանական-դատահոգեբուժական	27	3
Դատաշինարարատեխնիկական	11	3
Դատահաշվապահական, դատատնտեսագիտական	5	3
Դատատեսաձայնագրային	16	2
Դատակենսաբանական-դատաապրանքագիտական	2	2
Դատաավտոտեխնիկական	78	1
Դատաբժշկական	40	1
Դատաձեռագրաբանական	25	1
Դատաշինարարատեխնիկական-դատաապրանքագիտական	13	1
Դատաավտոտեխնիկական-դատահետքաբանական-դատանյութագիտական	7	1
Դատաբժշկական-դատաձգաբանական	5	1

Դատաապրանքագիտական-նյութագիտական	5	1
Դատատեսաձայնագրային-դիմանկարային	5	1
Դատաձեռագրաբանական-փաստաթղթաբանական	5	1
Դատահաշվապահական-դատաապրանքագիտական	4	1
Դատատնտեսագիտական	2	1
Դատահետքաբանական-դատաբժշկական-դատաապրանքագիտական	2	1
Դատաավտոտեխնիկական-դատահետքաբանական-դատաքիմիական-դատաբժշկական	2	1
Դատաշինարարատեխնիկական-դատահաշվապահական-դատաապրանքագիտական	2	1
Տնտեսագիտական-հաշվապահական-ապրանքագիտական-շինարարատեխնիկական	2	1
Դատահաշվապահական-դատափաստաթղթաբանական	1	1
Դատահողագիտական-դատաէկոլոգիական-դատահաշվապահական	1	1
Դատաավտոտեխնիկական-դատաբժշկական-դատամիկրոմասնիկային	1	1
Դատամշակութաբանական-դատաշինարարատեխնիկական-դատաապրանքագիտական	1	1
Դատանյութագիտական-դատահետքաբանական-դատաբժշկական	1	1

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2018 թ.-ին քաղաքացիական գործերով տրվել է 327, վարչական գործերով՝ 29 և քրեական գործերով՝ 2284 եզրակացություն: 2019 թ.-ին քաղաքացիական գործերով տրվել է 209, վարչական գործերով՝ 18 և քրեական գործերով՝ 2120 եզրակացություն, իսկ 2020 թ.-ին քաղաքացիական գործերով տրվել է 98, վարչական գործերով՝ 16 և քրեական գործերով՝ 2019 եզրակացություն: Փորձաքննությունների կատարումը հիմնականում տևել է **1 շաբաթից մինչև 18 ամիս, երբեմն ավելի երկար**՝ կախված արված միջնորդությունների բավարարման ժամկետներից և գործի բարդությունից<sup>89</sup>:

Փորձաքննությունների իրականացման ժամկետների հետ կապված խնդրի համակարգային բնույթի մասին է վկայում նաև ՀՀ Դատախազության նախաձեռնությունը՝ ապօրինի ընդերքօգտագործման հանցագործությունների համար նախատեսվող պատիժները<sup>90</sup> խստացնելու ուղղությամբ: Այն հիմնավորվել է համալիր-հանձնաժողովային փորձաքննությունների երկարատևությամբ (շեշտվել է, որ դատաշինարարական փորձաքննությունը կարող է տևել 7-8 ամիս, նույնիսկ մինչև 1 տարի) և քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները լրանալու խնդրով<sup>91</sup>:

Արձանագրենք, որ խնդիրը հատուկ շեշտվել է նաև ՀՀ Կառավարության՝ 10.10.2019 թվականի N 1441-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությամբ<sup>92</sup>, որում

89. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի՝ 19.02.2021 թ.-ի թիվ 0058-2021 պատասխանը:

90. ՀՀ քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի (Ընդերքի պահպանման և օգտագործման կանոնները խախտելը) 1-ին և 2-րդ մասեր:

91. Մակրամասն տե՛ս <https://www.prosecutor.am/am/mn/7843/>:

92. Մասնավորապես ռազմավարությամբ առաջարկվում է փորձաքննություն կատարող այն հաստատությունները, որոնք հիմնադրվել են պետության կողմից և գործում են այս կամ այն պետական մարմնի կամ հաստատության ենթակայությամբ, միավորել մեկ միասնական փորձագիտական հաստատության մեջ, որպեսզի ապահովվեն մինչդատական վարույթում և դատական քննության ընթացքում փորձաքննության իրականացման արդյունքները և ժամկետները: Առաջարկ է կատարվել նաև դատափորձագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով մշակել «Դատափորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագիծ, որը պետք է կանոնակարգի դատափորձագիտական հաստատությունների և դատական փորձագետների իրավական կարգավիճակը, դատափորձագիտական գործունեության հետ կապված իրավական և

մասնավորապես նշվել է հետևյալը. «Դատական գործերի ժամկետի ձգձգման և արդյունավետության վրա մեծապես ազդում են փորձաքննությունների իրականացման ժամկետները և դրանց արդյունքում տրվող եզրակացությունների ոչ հստակ և արժանահավատ լինելը»:

## Եզրակացություն

Հետազոտության արդյունքում կարող ենք փաստել, որ սույն բաժնում ներառված գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռներից բխող ընդհանուր միջոցների կիրառման խնդիրներն առավելապես առկա են իրավակիրառ պրակտիկայում՝ փորձաքննությունների իրականացման չհիմնավորված երկար ժամկետներով պայմանավորված:

---

կազմակերպչական հարցերը, որոնք գործող օրենսդրությամբ թերի են կարգավորված, իսկ առանձին հարցեր առհասարակ կարգավորված չեն:



## ԱՎԱՔԵՍՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՆՈՒՍ ԹԻՎ (39563/09)<sup>93</sup>

## ՆԻԿՈՂՈՍՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՆՈՒՍ ԹԻՎ (75651/11)<sup>94</sup>

## ԴՆԳԻԿՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՆՈՒՍ ԹԻՎ (66328/12)<sup>95</sup>

## ՖԻԴԱՆՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՆՈՒՍ ԹԻՎ (62904/12)<sup>96</sup>

## ՊԱՊՊՈՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՆՈՒՍ ԹԻՎ (7205/11)<sup>97</sup>

## ԽԱԳՍԱՐՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՆՈՒՍ ԹԻՎ (31761/04)<sup>98</sup>

### ԽՆԴԻՐ

Նշված խումբ գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ դիմումատուների օգտին կայացված դատական ակտերը չկատարելու կամ ձգձգումներով կատարելու հիմքով: *Ավաքեմյանն ընդդեմ Հայաստանի* գործով արձանագրվել է նաև Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում՝ կատարողական վարույթներն արագացնելու կամ դրանց ձգձրգման հետևանքով առաջացած ցանկացած վնասի մասով փոխհատուցում ստանալու համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայության հիմքով:

93. Ավաքեմյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 39563/09, 2017 թ. մարտի 30), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-172361>:

94. Նիկողոսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 75651/11, 2017 թ. մայիսի 18), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-173500>:

95. Դնգիկյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 66328/12, 2017 թ. հուլիսի 15), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-174418>:

96. Ֆիդանյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 62904/12, 2018 թ. հունվարի 11), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-179861>:

97. Պապոյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 7205/11, 2018 թ. հունվարի 11), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-179854>:

98. Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 31761/04, 2009 թ. դեկտեմբերի 1), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-95905>:

## **ԱՎԱՔԵՄՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅՄԱՍՏԱՆԻ**

Դատարանն արձանագրել է, որ 2005 թվականի մայիսի 3-ի, 2007 թվականի հոկտեմբերի 24-ի և 2008 թվականի դեկտեմբերի 1-ի վճիռները եղել են հօգուտ դիմումատուի ու 2007 թվականի հոկտեմբերի 24-ից մինչև 2012 թվականի փետրվարի 13-ը մնացել են անկատար, հետևաբար ներպետական վճիռները չկատարելը տևել է չորս տարի և երեք ամիս:

Կառավարությունը չի ներկայացրել որևէ փաստարկ այդ ուշացումը հիմնավորելու համար, ուստի Դատարանը գտել է, որ Հայաստանի իշխանությունները, վերջնական վճիռները կատարելու համար մի քանի տարի շարունակ անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելով, թույլ չեն տվել, որ 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները սույն գործով իրենց արդյունավետ ողջ ուժով գործեն, հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում: Դատարանը գտել է նաև, որ դիմումատուն չի ունեցել կատարողական վարույթներն արագացնելու կամ այդ վարույթների ձգձգման հետևանքով առաջացած ցանկացած վնասի մասով փոխհատուցում ստանալու համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոց:

## **ԴՆԳԻԿՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅՄԱՍՏԱՆԻ**

Դատարանն արձանագրել է, որ դիմումատուի օգտին կայացված՝ 2003 թվականի օգոստոսի 22-ի և 2006 թվականի դեկտեմբերի 22-ի՝ ուժի մեջ մտած վճիռները, ինչպես նաև 2004 թվականի հոկտեմբերի 22-ի՝ ուժի մեջ մտած որոշումը վճռի կայացման դրությամբ մնում են չկատարված, ուստի այդ ներպետական վճիռները չկատարելը տևել է շուրջ տասներեք տարի և չորս ամիս: Դատարանը գտել է, որ Հայաստանի իշխանությունները, մի քանի տարի չձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ ուժի մեջ մտած վճիռները կատարելու համար, չեն թույլատրել 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների՝ սույն գործով իրենց ողջ արդյունավետ գործողությունը, հետևաբար և տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

## **ՆԻԿՈՂՈՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

Դատարանն արձանագրել է, որ դիմումատուի օգտին կայացված՝ 2009 թվականի օգոստոսի 11-ի վճիռը մնացել է չկատարված 2010 թվականի մարտից մինչև 2015 թվականի հունիսը, այսինքն՝ գրեթե հինգ տարի և չորս ամիս: Կառավարությունը չի ներկայացրել որևէ փաստարկ այդ ուշացումը հիմնավորելու համար, ուստի Դատարանը նույն հիմնավորումներով գտել է, որ Հայաստանի իշխանությունները, մի քանի տարի չձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ վերջնական վճիռը կատարելու համար, գրկել են 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը սույն գործով իրենց արդյունավետ ողջ ուժից:

## **ՊՍՊՈՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ սույն գործով դիմումատուի օգտին կայացված՝ 2008 թվականի հուլիսի 30-ի վճիռը մնացել է չկատարված 2008 թվականի հոկտեմբերից մինչ օրս, այսինքն՝ ավելի քան ութ տարի և տասնմեկ ամիս: Նույն հիմնավորումներով Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

## **ՖԻՂՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

Դատարանն արձանագրել է, որ դիմումատուի օգտին 2009 թվականի սեպտեմբերի 17-ին կայացված վճիռը մնացել է մասնակիորեն չկատարված 2009 թվականի նոյեմբերից մինչ օրս, այսինքն՝ գրեթե յոթ տարի և ութ ամիս: Հիմնավորումները նույնական են եղել Նախորդիվ բերված գործերի հիմնավորումների հետ:

## **ԽԱԳՏՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

Դատարանն արձանագրել է, որ գործն առնչվել է մասնավոր կազմակերպությունից աշխատողների չվճարված աշխատավարձի և այլ վճարների բռնագանձման վճռի կատարմանը: Վճռի կատարումը հնարավոր չի եղել ապահովել մասնավոր կազմակերպության ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում Կառավարություն-

նը ստանձնել էր որոշակի պատասխանատվություն մասնավոր կազմակերպության պարտավորությունների համար, ուստի և ֆինանսական միջոցների բացակայությունը չի կարող վկայակոչվել որպես վճիռը չկատարելու հիմնավորում: Դատարանը նշել է, որ վճիռը մեծ մասամբ մնացել է անկատար (ուրբ տարի և չորս ամիս):

### **Կառավարության գործողությունների ծրագիր (03.10.2017 թ.)<sup>99</sup> (հիմնական ընդհանուր միջոցներ)**

- Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտում Կառավարությունը նախատեսում է միջոցներ ձեռնարկել Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության և Կադաստրի կոմիտեի միջև արդյունավետ համագործակցությունը երաշխավորելու ուղղությամբ՝ բացառելով կատարողական վարույթի շրջանակում հնարավոր հետաձգումները, օրինակ՝ ապահովել ՀՀ Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության անմիջական մուտքը Կադաստրի կոմիտեի տվյալների շտեմարան:
- Սույն խմբի գործերով Հայաստանի վարչապետի հանձնարարությամբ պատրաստվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքին վերաբերող երկու օրենսդրական փաթեթներ. դրանցից մեկը վերաբերում է Դատարանի կողմից արձանագրված խախտումներին (*Ավաքեմյանն ընդդեմ Հայաստանի* գործով), իսկ մյուսը հիմնականում ուղղված է կատարողական վարույթների, այդ թվում՝ արագացման ընթացակարգերի և փոխհատուցման միջոցների արդյունավետության բարելավմանը:
- Քննարկվող վճիռների կատարման գործնական ասպեկտների համապարփակ բացահայտման համար նախատեսվում են աշխատանքային հանդիպումներ քաղաքացիական հասարակության անդամների և դիմումատուների ներկայացուցիչների հետ և այլն:

99. Մանրամասն տե՛ս [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2017\)1129E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2017)1129E):

## Կառավարության գործողությունների հաշվետվություններ (18.11.2014 թ., 16.02.2015 թ.)<sup>100</sup> (հիմնական ընդհանուր միջոցներ)

- 2013 թվականից արդիականացվել է Էլեկտրոնային կառավարման համակարգը, որի արդյունքում դատական համակարգի և հարկադիր կատարման ծառայության Էլեկտրոնային կառավարման համակարգերը կապվել են միմյանց, հետևաբար դատական ակտի կատարման համար կատարողական թերթ ստանալու և հարկադիր կատարման ծառայությանը վճիռ ներկայացնելու անհրաժեշտություն չի լինելու: Նպատակներից են դատական ակտերի կատարման արագացումն ու պարզեցումը:
- Աշխատանքներ են տարվել հանրային աճուրդների թափանցիկության և արդյունավետության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ հնարավորություն ընձեռելով առավել մեծ թվով մարդկանց մասնակցելու դրանց:
- Պետական բյուջեից գումարներ են հատկացվում Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը՝ դատական ակտերի չկատարման հնարավոր ռիսկերը նվազեցնելու նպատակով:
- Իրականացվել են բարեփոխումներ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների, անգործության դեմ դատական պաշտպանության արդյունավետ մեխանիզմ ստեղծելու ուղղությամբ:

## Օրենսդրական կարգավորումներ/խնդիրներ

*Ավաքենյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում կատարողական վարույթներն արագացնելու կամ այդ վարույթների ձգձգման հետևանքով առաջացած ցանկա-

---

100. Մանրամասն տե՛ս [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2014\)1419E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2014)1419E), [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2015\)207E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2015)207E):

ցած վնասի մասով փոխհատուցում ստանալու համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայության հիմքով:

Ներպետական օրենսդրությամբ կատարողական վարույթների ձգձգման կամ դատական ակտի չկատարման դեպքերում ամկա փոխհատուցման մեխանիզմները գնահատելու համար նախ անդրադառնանք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածով սահմանված՝ ոչ նյութական վնասի հատուցմանն ամնչվող կարգավորումներին: Նշված հոդվածով սահմանվում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով անձի հիմնարար իրավունքների (այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքի) խախտման դեպքում ոչ նյութական վնասի հատուցում ստանալու իրավունք: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0441/02/16 գործով 07.04.2018 թ.-ին կայացրած որոշմամբ<sup>101</sup> արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը ոչ նյութական վնասի հատուցման ընթացակարգի վերաբերյալ. «... ընդհանուր կանոնի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցումը տեղի է ունենում դատական կարգով: Այլ կերպ ասած, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջով շահագրգիռ անձը, որպես ընդհանուր կանոն, կարող է անմիջապես դիմել դատարան: Միևնույն ժամանակ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 5-րդ մասում այդ ընդհանուր կանոնից կատարել է բացառություն (...): Եթե ոչ նյութական վնասը պատճառվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով, ապա այդ դեպքում կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝

---

101. Մանրամասն տե՛ս ՀՀՊՏ 2018.07.04/51(1409).1 Հոդ.780.21, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123646>:

վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված վարչական մարմինների և մասնավոր անձանց միջև ծագող հարաբերությունները կարգավորող կանոնները»:

Նույն որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը հղում է կատարել իր ձևավորած կայուն նախադեպային դիրքորոշմանը, որի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որ առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը: Դրանից հետո միայն անձը պարտավոր է ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմնին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադասության կամ դատական կարգով:

Ամփոփելով վերոշարադրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իրավունքը կենսագործվում է հետևյալ ընթացակարգով.

1. նախ և առաջ ոչ նյութական վնաս պատճառած պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ վարչական ակտը պետք է շահագրգիռ անձի դիմումով (վարչական կամ դատական կարգով) ճանաչվի ոչ իրավաչափ,
2. այնուհետև շահագրգիռ անձը պետք է դիմի ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմնին՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջով,
3. ոչ նյութական վնասի հատուցման դիմումի լրիվ կամ մասնակիորեն մերժման դեպքերում շահագրգիռ անձը կարող է վարչական կարգով բողոքարկել այդ դիմումը մերժելու մասին վարչական ակտը կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցառե-

սակի միջոցով դիմել Վարչական դատարան՝ ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմինն ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջով,

4. ոչ նյութական վնասի հատուցման դիմումը չքննարկվելու դեպքում գործում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական ֆիկցիայի ինստիտուտը (դրա համար անհրաժեշտ բոլոր պայմանների առկայության պարագայում), որի շրջանակներում շահագրգիռ անձը կարող է հասնել ոչ նյութական վնասի հատուցման իր իրավունքի գործնական իրացմանը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողության կատարման հայցատեսակով Վարչական դատարան դիմելու միջոցով:

Ինչ վերաբերում է գույքային վնասի փոխհատուցմանը, ապա դատական պրակտիկայում վերոնշյալ ընթացակարգը կիրառելի է համարվում ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված նյութական վնասի հատուցման իրավունքի իրացման նկատմամբ<sup>102</sup>:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի խախտման դեպքում ոչ նյութական վնասի հատուցմանն առնչվող կարգավորումը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթներին համահունչ մեկնաբանելու և կիրառելու պարագայում դատական ակտի չկատարման կամ ձգձգումներով կատարելու հետևանքով հասցրված ոչ նյութական վնասի հատուցման հնարավորությունը պետք է ենթադրվի նշված դրույթի ուժով: Այնուամենայնիվ, դատական պրակտիկայի ուսումնասիրությամբ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեմ նշված հիմքերով ոչ նյութական վնասի հատուցմանն առնչվող գործեր չեն հայտնաբերվել:

---

102. Տե՛ս թիվ ՎԴ/2986/05/20 գործով ՀՀ Վարչական դատարանի որոշումը հայցադիմումը վերադարձնելու մասին:



Ինչ վերաբերում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հասցված գույքային վնասի հատուցմանն առնչվող գործերին, ապա դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ գույքային վնասի հատուցման պահանջով հայցադիմումները ընդունվում են վարույթ բացառապես սահմանված ընթացակարգի սպառումից հետո<sup>103</sup>:

Գտնում ենք, որ դատական ակտերի չկատարման կամ ձգձգումներով կատարման հետևանքով հասցված նյութական և ոչ նյութական վնասի հատուցման<sup>104</sup> ընթացակարգը, որը ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում բացառում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողությունների (անգործության, վարչական ակտի) ոչ իրավաչափ ճանաչման շրջանակներում վնասի հատուցման պահանջի միաժամանակյա ներկայացումը, չի ապահովում անձի՝ արդար դատաքննության, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացումը և չի կարող բավարար համարվել վերոգրյալ խումբ գործերով կայացված ՄԻԵԴ վճիռներից բխող ընդհանուր միջոցների կիրառման արդյունավետության տեսանկյունից: Կոնվենցիայի 6-րդ հոդվածից ուղղակիորեն բխող դատական ակտի՝ առանց չհիմնավորված ձգձգումների կատարման իրավունքի խախտման դեպքում տրամադրվող իրավական պաշտպանության միջոցը չի կարող արդյունավետ համարվել, եթե այն ենթադրում է որևէ իրավաչափ նպատակով չպայմանավորված լրացուցիչ վարչական և դատական ընթացակարգերի սպառման պահանջ, ինչպես նաև հանգեցնում է անորոշ ժամկետով փոխհատուցման տրամադրման հետաձգմանը:

*Ավաքեմյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճռով Դատարանն արձանագրել է նաև, որ դիմումատուն չի ունեցել կատարողական վարույթներն արագացնելու համար իրավական

103. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողության/անգործության ոչ իրավաչափ ճանաչման գործընթաց, դրան հաջորդող գույքային վնասի հատուցման պահանջի ներկայացում և պահանջի մերժում վարչական կարգով: Օրինակ՝ թիվ ՎԴ/0832/05/16, ՎԴ/0587/05/16 վարչական գործեր:

104. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի խախտման դեպքում ոչ նյութական վնասի հատուցմանն առնչվող կարգավորումը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթներին համահունչ մեկնաբանելու և կիրառելու դեպքում:

պաշտպանության արդյունավետ միջոց, ինչը հիմք է հանդիսացել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտման արձանագրման համար: Արձանագրելք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգավորումների շրջանակներում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողությունները, անգործությունը, ինչպես նաև վարչական ակտերը կարող են բողոքարկվել Վարչական դատարան: Այնուամենայնիվ, օրենսգիրքը չի նախատեսում կատարողական վարույթի արագացմանը միտված հատուկ կարգավորումներ Վարչական դատարանում գործի քննության շրջանակներում: Այսինքն՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անգործության դեմ ներկայացված հայցադիմումը կարող է տևական ժամանակահատված քննության առարկա լինել Վարչական դատարանում, այնուհետև կայացված դատական ակտը Ծառայության կողմից կարող է բողոքարկվել վերադաս դատարաններ, ինչն անխուսափելիորեն հանգեցնում է սույն գործընթացի իմաստազրկմանը՝ վերածելով այն իրավունքի պաշտպանության անարդյունավետ միջոցի: Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է Վարչական դատավարության օրենսգրքով սահմանել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անգործության վիճարկմանն առնչվող գործերի քննության հստակ և սեղմ ժամկետներ, ինչպես նաև դրանց քննության արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված այլ կարգավորումներ:

Արձանագրելք նաև, որ *Գերասիմովը և այլք ընդդեմ ՌԴ-ի* գործով կայացված վճռի կատարման վերահսկողության շրջանակներում<sup>105</sup> կատարողական վարույթի արագացմանն ուղղված միջոցների գնահատման համատեքստում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն անդրադարձել է ՌԴ վարչական դատավարության օրենսգրքով (2015 թ.) սահմանված կարգավորումներին, որոնցով ՌԴ Կառավարությունը փորձել է հիմնավորել անհրաժեշտ իրավական պաշտպանության միջոցների առկայությունը, այդ թվում՝ հարկադիր կատարողի գործողությունների վիճարկմանն առնչվող գործերով քննության ժամկետների, դատական ակտը ուժի մեջ մտնելուն առնչվող կարգավորումների և այլ գործիքների վկայա-

---

105. 1288th meeting, 6-7 June 2017 (DH), H46-25 Gerasimov and Others v. Russian Federation (Application No. 29920/05), Supervision of the execution of the European Court's judgments, <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168070eb9e>.

կոչմամբ:

Որպես դատական ակտերի հարկադիր կատարման ժամկետների երկարաձգմանը նպաստող գործոն՝ կարելի է առանձնացնել նաև դատական ակտը դիտավորությամբ չկատարելու կամ հարկադիր կատարողի պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելու համար սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները: Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206<sup>9</sup>-րդ հոդվածը վարչական պատասխանատվություն է սահմանում քաղաքացիների կողմից դատական ակտը դիտավորությամբ չկատարելու համար, իսկ 206<sup>5</sup>-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելու համար: Միևնույն ժամանակ նշված իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունն իրականացնում է Վարչական դատարանը՝ օրենսգրքի 223-րդ հոդվածի ուժով՝ համապատասխան մարմնի հայցադիմումով: Գտնում ենք, որ կատարողական վարույթի արդյունավետությունը բարձրացնելու, դատական ակտերի կատարման ժամկետները կրճատելու նպատակով անհրաժեշտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206<sup>9</sup>-րդ և 206<sup>5</sup>-րդ հոդվածներով սահմանված զանցանքներով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը վերապահել Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը՝ այսպիսով մեկտեղելով իրավախախտումն արձանագրելու և դրա հիման վրա վարչական պատասխանատվության ենթարկելու գործառույթները: Արձանագրենք նաև, որ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 23-ի թիվ ՍԴՈ-1578 որոշմամբ նշվել է, որ ինչպես վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը դատարանին վերապահելը, այնպես էլ համապատասխան օրենսդրական փոփոխություններով դատարանի նման լիազորության դադարեցումը Սահմանադրության 88-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված օրենսդիր իշխանության իրավազորության տիրույթում են: Մասնավորապես Սահմանադրական դատարանը գտել է, որ վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը դատարանին վերապահելը կամ արդեն իսկ գոյություն ունեցող նման լիազորության դադար-

րեցումը չի հանգեցնում սահմանադրական որևէ սկզբունքի կամ իրավունքի խախտման, և այդ ընտրությունը լիովին համատեղելի է Սահմանադրության 88-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված օրենսդիր իշխանության իրականացման համար Ազգային ժողովին վերապահված հայեցողության սահմանների հետ:

## Իրավակիրառ պրակտիկա/խնդիրներ

Իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ մեծ քանակով դատական ակտեր այդպես էլ մնում են չկատարված կամ կատարվում են այնպիսի ուշացումներով, որոնք հանգեցնում են արդար դատաքննության իրավունքի էության խախտման:

Այսպես, հարցմանն ի պատասխան Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հայտնած տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով (*պարտապանը չունի գույք կամ եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել, և հարկադիր կատարողի՝ օրենքի 40-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված կարգով իրականացված հետախուզումը, և (կամ) պահանջատիրոջ կողմից պարտապանի գույքը փնտրելու ուղղությամբ ձեռնարկված՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են սպարոյուն*) ավարտվել է 581.353 կատարողական վարույթ, իսկ 2020 թվականի ընթացքում 440.091 կատարողական վարույթ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով (*անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են սպարոյուն*) 2019 թվականի ընթացքում ավարտվել է 31.005, իսկ 2020 թվականի ընթացքում 40.036 կատարողական վարույթ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (*կատարողական թերթը փաստացի կատարվել է*) 2019 թվականի ընթացքում կարճ-

վել է 427.574, իսկ 2020 թվականի ընթացքում՝ 376.950 կատարողական վարույթ<sup>106</sup>:

2019 թվականի և 2020 թվականի ընթացքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կատարած հիմնական աշխատանքների արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունների<sup>107</sup> համաձայն՝ 2019 թվականի վերջում կատարողական վարույթների մնացորդը կազմել է 5.061, իսկ 2020 թվականին ընթացք տրված կատարողական վարույթներից 15.061-ը փոխանցվել է նախորդ տարիներից:

Սույն հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են նաև «Դատավեքս» դատական տեղեկատվական առցանց համակարգում տեղադրված շուրջ 120 դատական գործերի ընթացքին վերաբերող տվյալներ, որոնցից 118 վարչական գործերով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հայցադիմում է ներկայացվել Վարչական դատարան՝ դատական ակտը դիտավորությամբ չկատարելու համար վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, իսկ 2-ով՝ հարկադիր կատարողի պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելու հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով: Ուսումնասիրության արդյունքներով՝

- 120 դատական գործերից 29-ը գտնվել են քննության փուլում,
- ևս 21-ով վարույթը կասեցվել էր մինչև Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի վարույթում գտնվող՝ 31.03.2020 թ.-ի թիվ ՍԴԱՌ-72 որոշմամբ քննության ընդունված՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 29-րդ գլխի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 223-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի քննության ավարտը<sup>108</sup>,

106. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից 2018 թվականի վերաբերյալ նշված տեղեկատվությունը հնարավոր չի եղել տրամադրել, քանի որ կատարողական վարույթների վարման շտեմարանի հաշվետվության մոդուլում տվյալ գործիքակազմը ներդրվել է ավելի ուշ:

107. Մանրամասն տե՛ս <https://bit.ly/2OFADqj>:

108. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 23-ի թիվ ՍԴՌ-1578

- 1 դատական գործ կասեցվել է այլ հիմքով,
- թվով 7 հայցադիմում վերադարձվել է,
- թվով 3 հայցադիմումների վարույթ ընդունումը մերժվել է<sup>109</sup>,
- թվով 13 վարչական գործերով վարույթը կարճվել է:

Գործի քննության արդյունքներով կայացված 46 որոշումներից միայն թվով 20 որոշումներով է Վարչական դատարանը բավարարել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հայցադիմումները (նշված 20 գործերի քննության ժամկետը տատանվել է 3-11 ամիս՝ առաջին ատյանում)<sup>110</sup>:

Կատարված հարցմանն ի պատասխան Հատուկ քննչական ծառայության հայտնած տվյալների համաձայն՝ 2016 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2020 թվականի հունվարի 14-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի հատկանիշներով ՀՀ Հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթում քննվել է 11 քրեական գործ, որից 10 քրեական գործով վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով, 1 քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Ինչ վերաբերում է 01.01.2016 թ.-ից մինչև 31.12.2020 թ.-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ու 01.01.2018 թ.-ից մինչև 31.12.2020 թ.-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 353.1 հոդվածի հատկանիշներով նախապատրաստված նյութերին և հարուցված քրեական գործերին, ապա տվյալ տեղեկատվությունը ներկայաց-

---

որոշման ընդունումից հետո նշված գործերի վարույթները վերսկսվում են:

109. Նշված երեք վարչական գործերից 2-ը վերաբերել են հարկադիր կատարողի պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելուն (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.5-րդ հոդվածի հիման վրա), և նշված վարչական գործերի վարույթները կարճվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված երկամսյա ժամկետի խախտման հիմքով:

110. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում առկա չէ ճշգրիտ վիճակագրություն հարցադրման վերաբերյալ: Այդուհանդերձ 2016 թվականի հունվարի 1-ից մինչ օրս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.9-րդ հոդվածի հիման վրա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից դատական ակտը դիտավորյալ չկատարելու համար ներկայացվել է մոտավոր թվով 178 հայցադիմում, որից 37-ը բավարարվել է, 14-ը՝ կասեցվել, 22-ը՝ կարճվել, 43-ը՝ մերժվել, իսկ 62-ն ընթացիկ են:

ված է ստորև բերված աղյուսակներում:

**01.01.2016 թ.-ից մինչև 31.12.2020 թ.-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի հատկանիշներով նախապատրաստված նյութերի և հարուցված քրեական գործերի վերաբերյալ**

Սահապատրաստված նյութերի քանակը	Մերժվել է քրեական գործ հարուցելը:		Քրեական գործերի քանակը	Ուղարկվել է դատարան:	Կասեցվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:	Կարճվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:	Կարճվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով:	Կարճվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով:	Կարճվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածի 1-ին մասով:	Ընթացքի մեջ է:
	Մերժվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:	Մերժվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով:								
20	15	5	36	4	1	1	21	1	5	3

01.01.2018 թ.-ից մինչև 31.12.2020 թ.-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 353.1 հոդվածի հատկանիշներով նախապատրաստված նյութերի և հարուցված քրեական գործերի վերաբերյալ

Նախապատրաստված նյութերի քանակը	Մերժվել է քրեական գործ հարուցելը:		Քրեական գործերի քանակը	Ուղարկվել է դատարան:	Կասեցվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով:	Կարճվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով:	Կարճվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով:	Կարճվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով:	Կարճվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածի 1-ին մասով:	Կարճվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածի 2-րդ մասով:	Ընթացքի մեջ է:
	Մերժվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:	Մերժվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով:									
6	1	5	92	42	1	16	1	4	3	2	23

Դատական ակտերի կատարման ցուցանիշների, ինչպես նաև դրանց բարձրացմանն ուղղված պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ վիճակագրական տվյալները ակնհայտորեն վկայում են ձեռնարկված միջոցների անբավարարության և հետևաբար դատական ակտերի պատշաճ կատարումն ապահովելուն ուղղված իրավական պատասխանատվության համակարգի անարդյունավետության մասին: Դատական ակտերի կատարման ցածր ցուցանիշները պայմանավորված են նաև ՀՀ



Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ոչ բավարար գործիքակազմով, այդ թվում անձին փաստացի պատկանող գույքը կամ փաստացի ստացվող եկամուտը/աշխատավարձը հայտնաբերելու նպատակով անհրաժեշտ լիազորությունների, ինչպես նաև իրավասու պետական մարմինների հետ հետադարձ կապի ապահովման համար անհրաժեշտ գործիքակազմի բացակայությամբ:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հայտնած տեղեկատվության համաձայն՝ հարկային մարմինը Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը տեղեկատվություն է տրամադրում համապատասխան հարցման ամկայության դեպքում, և լրացուցիչ տեղեկությունների ստացման նպատակով վարույթն իրականացնող հարկադիր կատարողը կրկին հարցում պետք է կատարի հարկային մարմին: ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկության համաձայն՝ ներկայումս տեղեկատվության փոխանակումը ևս իրականացվում է հարցումների հիման վրա, սակայն մշակվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հետ էլեկտրոնային ծառայության միջոցով տվյալների փոխանակման համար նախատեսված Նոր համակարգ, որը ներդրումից հետո աշխատելու է ժամանակի իրական ռեժիմում, և պարտապանի կողմից Նոր անշարժ գույքի ձեռքբերման դեպքում տեղեկությունները փոխանցվելու են Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը: Արձանագրելք նաև, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կատարողական վարույթն ավարտվում է, եթե պարտապանը չունի գույք կամ եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել, և հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված կարգով իրականացված հետախուզումը և (կամ) պահանջատիրոջ կողմից պարտապանի գույքը փնտրելու ուղղությամբ ձեռնարկված՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն: Հետևաբար կատարողական վարույթն ավարտելուց հետո սեփական նախաձեռնությամբ պարտապանի գույքի և եկամուտների վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով պարբերական հարցումներ կատարելու պարտականություն Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը չունի:

## Եզրակացություն

Հետազոտության արդյունքում փաստում ենք, որ սույն բաժնում ներառված գործերով ՄԻԵԴ կայացրած վճիռներից բխող ընդհանուր միջոցների կիրառման խնդիր առկա է թե՛ օրենսդրական մակարդակում, թե՛ իրավակիրառ պրակտիկայում: Մասնավորապես դատական ակտերի չկատարման կամ ձգձգումներով կատարման արդյունքում հասցված գույքային և ոչ գույքային վնասի հատուցման նպատակով սահմանված ընթացակարգերով ոչ իրավաչափորեն սահմանափակվում են անձի՝ արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները: Բացի այդ, Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված չեն Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անգործության (ինչպես նաև գործողությունների և վարչական ակտերի վիճարկման) վիճարկմանն առնչվող գործերի քննության հստակ և սեղմ ժամկետներ, ինչպես նաև դրանց քննության արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված այլ կարգավորումներ: Դատական ակտը դիտավորությամբ չկատարելու կամ հարկադիր կատարողի պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելու համար սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները արդյունավետ չեն՝ հաշվի առնելով դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջը: Իրավակիրառ պրակտիկայում մեծաքանակ դատական ակտեր մնում են չկատարված կամ կատարվում են Էական ուշացումներով, ինչը, ի թիվս այլ հանգամանքների, պայմանավորված է ձեռնարկվող միջոցների անբավարարության, ՀՀ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության լիազորություններն իրականացնելու համար նախատեսված ոչ բավարար գործիքակազմով:

## Առաջարկություններ

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանել ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովմանն ուղղված անհրաժեշտ կանխարգելիչ (այդ թվում՝ վարույթի արագացմանը

միտված) միջոցների համակարգ, ինչպես նաև ողջամիտ ժամկետի պահանջի հիմքով արդար դատաքննության իրավունքի խախտումը ճանաչելուն և ոչ կյուբական վնասի փոխհատուցմանն ուղղված հատուկ ընթացակարգ՝ նշված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ (ներառյալ քննության սեղմ ժամկետների սահմանմամբ):

2. Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ սահմանել գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները:
3. Դատական վիճակագրությանը ներկայացվող պահանջների շրջանակում ՀՀ դատական օրենսգրքով նախատեսել նաև հաշվետու ժամանակահատվածում ավարտված գործերի քննության միջին տևողությունը ըստ քննության ամբողջական ժամանակահատվածի (դատական նիստերի միջև ընկած ժամանակահատվածի ներառմամբ):
4. Ապահովել գործնականում սահմանված ցուցիչներով վիճակագրական տվյալների հավաքումն ու հրապարակումը:
5. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանել միջդատական ակտի վիճարկման վարույթի առավելագույն և սեղմ ժամկետ:
6. ՀՀ քրեական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերով նախատեսել փորձագետի պարտականությունը՝ փորձաքննությունը խոչընդոտող հանգամանքների առկայության դեպքում այդ մասին դատարանին անհապաղ տեղեկացնելու վերաբերյալ, ինչպես նաև սահմանել դատարանի կողմից համապատասխան խոչընդոտների վերացմանն ուղղված անհրաժեշտ գործիքակազմ:
7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանել փորձագետի կողմից փորձաքննության/առանձին հարցերի՝ իր մասնագիտական ոլորտին չպատկանելու հիմքով կատարելու անհնարինության դեպքում այդ մասին դատարանին անհապաղ տեղեկացնելու պարտականություն:
8. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանել փորձագետի եզրակացության ձևի ընտրության հետ կապված

ճկուն կարգավորումներ, որոնք հնարավորություն կտան առավել սեղմ ժամկետներում ապահովելու փորձագետի եզրակացության տրամադրումը:

9. Ձեռնարկել գործուն և արդյունավետ միջոցներ՝ չհիմնավորված երկար ժամկետներում փորձաքննությունների իրականացումը իրավակիրառ պրակտիկայում բացառելու ուղղությամբ:
10. Վերանայել դատական ակտերի չկատարման կամ ձգձգումներով կատարման հետևանքով հասցված նյութական և ոչ նյութական վնասի հատուցման<sup>111</sup> ընթացակարգը՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողությունների (անգործության, վարչական ակտի) ոչ իրավաչափ ճանաչման պահանջի հետ համատեղ վնասի հատուցման պահանջի ներկայացման հնարավորության սահմանմամբ:
11. Վարչական դատավարության օրենսգրքով սահմանել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անգործության վիճարկմանն առնչվող գործերի քննության հստակ և սեղմ ժամկետներ, ինչպես նաև դրանց քննության արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված այլ կարգավորումներ:
12. Վերանայել դատական ակտը դիտավորությամբ չկատարելու կամ հարկադիր կատարողի պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելու համար սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները՝ նշված զանցանքներով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը վերապահելով Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը:
13. Բարձրացնել դատական ակտերի պատշաճ կատարումն ապահովելուն ուղղված պատասխանատվության միջոցների կիրառման արդյունավետությունը, ինչպես նաև վերանայել ՀՀ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության լիազորությունների շրջանակը և գործիքակազմը, այդ թվում՝ անձին

---

111. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի խախտման դեպքում ոչ նյութական վնասի հատուցմանն առնչվող կարգավորումը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթներին համահունչ մեկնաբանելու և կիրառելու դեպքում:

փաստացի պատկանող գույքը կամ փաստացի ստացվող եկամուտը/աշխատավարձը հայտնաբերելու նպատակով անհրաժեշտ լիազորությունների, ինչպես նաև իրավասու պետական մարմինների հետ հետադարձ կապի ապահովման համար բավարար գործիքակազմի սահմանմամբ:

# ԲԱԺԻՆ 3

## ԱՌԱՆՁԻՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԸՆԹԱՑԱՎԱՐԳԵՐԻՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՊԱՏՃԱՌՈՒՔԱՆՄԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՆՁՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

### ԴՈՒՅՑԱՆՆ ԸՆԴՐԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

[ՉԱՆՉԱՏ ԹԻՎ 35443/13]<sup>112</sup>



Դույանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանը ճանաչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում այն հիմքով, որ կոնկրետ դատավորի մասնակցությունը գործին առաջին ատյանի դատարանի վարույթը դարձրել է կողմնակալ, և այդ թերությունը բողոքարկմամբ չի վերացվել:

### ԴՈՒՅՑԱՆՆ ԸՆԴՐԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Դատարանն արձանագրել է, որ սույն գործով դիմումատուն հայտնվել է մի իրավիճակում, որտեղ այն իրավաբանական ընկերությունը, որը ներկայացրել է հակառակ կողմին, հիմնադրվել և կառավարվում էր տվյալ գործը քննող դատավորի քրոջ և փեսայի կողմից, իսկ նրա երկվորյակ եղբայրը՝ Ար.Մ.-ն, աշխատում էր այնտեղ որպես ավագ մասնագետ: Հայտնի չէ, թե արդյոք քույրը և փեսան ակտիվորեն ներգրավված եղել են գործում, և արդյոք նրանք ունեցել են ֆինանսական շահ գործի արդյունքի հետ կապված, թե ոչ, սակայն պարզ է, որ Ար.Մ.-ն ակտիվորեն մասնակցել է գործի նախապատրաստման գործընթացին: Արդյունքում Դատարանը գտել է, որ ստեղծվել է կողմնակալության արտաքին հատկանիշ:

Դատարանն արձանագրել է նաև, որ սույն գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանն ընդհանրապես չի անդրադարձել Վարչական շրջանի դատարանի վարույթի ժամանակ դատավոր-

112. Դույանն ընդդեմ Հայաստանի (զանգատ թիվ 35443/13, 2019 թ. հունվարի 24), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng/?i=001-189420>:

րի անկողմնակալության ենթադրյալ բացակայության վերաբերյալ դիմումատուի փաստարկներին: Քանի որ չի ուսումնասիրվել բողոքը, բողոքարկման վարույթի արդյունքում առաջին ատյանում կողմնակալության արտաքին հատկանիշը չի վերացվել:

Կարևոր է շեշտել, որ նշված գործով դիմումատուն առաջին ատյանի դատարանի դատավորի կողմնակալության հարցը բարձրացրել է միայն Վերաքննիչ քաղաքացիական դատարանում միայն ապացույցներն ընդունելու համատեքստում<sup>113</sup>: Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները այդ թվում այն պատճառով, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարան ներկայացված իր բողոքում չի անդրադարձել դատավորի անկողմնակալության հարցին՝ վկայակոչելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածը, ըստ որի՝ Վերաքննիչ դատարանն իրավասու չէ դուրս գալու վերաքննիչ բողոքի շրջանակներից և պարտավոր է վերանայել դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակում:

Այնուամենայնիվ, Դատարանը մերժել է Կառավարության առարկությունը այն հիմնավորմամբ, որ Վարչական շրջանի դատարանի վարույթի ընթացքում դիմումատուն չի իմացել որոշում կայացնող դատավորի հնարավոր կողմնակալության մասին, քանի որ այդ մասին իմացել է միայն Վարչական շրջանի դատարանի վճիռը ստանալուց հետո, հետևաբար չէր կարող Վարչական շրջանի դատարանի վարույթի ընթացքում բարձրացնել անկողմնակալության հնարավոր բացակայության խնդիրը: Ինչ վերաբերում է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի վարույթին, ապա Դատարանը համարել է, որ դիմումատուն բավարար կերպով բարձրացրել է անկողմնակալության ենթադրյալ բացակայության խնդիրը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի պահանջներին համապատասխանելու համար:

---

113. Վերաքննիչ բողոքում ևս այս հարցը չի բարձրացվել:

## Կառավարության գործողությունների ծրագիր (06.05.2020 թ.)<sup>114</sup> (հիմնական ընդհանուր միջոցներ)

- Կառավարությունը նախ և առաջ նշել է, որ հիմքեր չկան ենթադրելու, որ սույն գործով արձանագրված խախտումները որևէ կերպ փոխկապակցված են քաղաքականության, օրենսդրական թերությունների կամ լայնորեն տարածված պրակտիկայի հետ:
- Թե՛ 2015 թ.-ի սահմանադրական փոփոխությունները (դատական համակարգին առնչվող), թե՛ դատական բարեփոխումների շրջանակում ընդունված նոր Դատական օրենսգիրքը հիմնված են դատարանների անկախության և դատավորների անկողմնակալության սկզբունքի վրա:
- Դատական օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները պարտավորեցնում են դատավորին լինել անաչառ և գերծմալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն կամ խտրականություն դրսևորելուց կամ ողջամիտ, անկողմնակալ դիտորդի մոտ նման տպավորություն ստեղծելուց:
- 21.12.2018 թ.-ին Դատավորների ընդհանուր ժողովի կողմից սահմանվել են դատավորի էթիկայի կանոնները նոր խմբագրությամբ, որոնք առավել մանրամասն կարգավորել են դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի վարքագիծը՝ անաչառության հատուկ շեշտադրմամբ:
- Կառավարությունը հաստատել է դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը:
- ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԱՎԴ/1405/02/14 գործով 10.06.2019 թ.-ին կայացված որոշմամբ անդրադարձել է դատավորի անկողմնակալության հարցին սուբյեկտիվ և օբյեկտիվ չափանիշների համատեքստում. թեև նշված գործով առկա չեն եղել դատավորի ընտանեկան կապերին առնչվող փաստեր, Վճռաբեկ դատարանը հղում է կատարել *Ղույլանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճռին օբյեկտիվ

114. Մանրամասն տե՛ս [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2020\)423E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2020)423E):



չափանիշի համատեքստում: Տվյալ գործով արձանագրվել է անկողմնակալ դատարանի կողմից գործի քննության իրավունքի խախտում:

## Օրենսդրական կարգավորումներ/խնդիրներ

Որպես *Ղուլյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճռից բխող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությանն առնչվող խնդիր արձանագրում ենք ստորադաս դատարանի դատավորի ինքնաբացարկի հիմքերի առկայության հարցը՝ բողոքի հիմքերից անկախ քննության առնելու վերադաս դատարանի իրավասության բացակայությունը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում բացառությամբ օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի: Նույն օրենսգրքի 404-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկության կարգով բողոքի քննության ժամանակ վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում բացառությամբ սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ դատական ակտը ենթակա է բեկանման, եթե առկա են նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ կետերով սահմանված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը:

Օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե.

1. դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, այդ թվում այնպիսի դատավորի կողմից, որը պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել.
2. դատարանը գործը քննել է բողոք բերած անձի բացակայությամբ:

յամբ, որը, սույն օրենսգրքի իմաստով, չի համարվում ծանուցված դատական նիստի ժամանակի և վայրի մասին.

3. դատական ակտն ստորագրված կամ կնքված չէ.
4. դատական ակտն ստորագրված կամ կնքված չէ այն կայացրած դատավորի կողմից.
5. դատական ակտը կայացրել է այն դատավորը, որը տվյալ գործը քննող դատարանի կազմում ընդգրկված չէ.
6. գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը.
7. դատական նիստի արձանագրումը կատարվել է այնպիսի թերություններով, որոնք անհնար են դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը.
8. գործի քննության ընթացքում չի ապահովվել գործին մասնակցող անձի՝ թարգմանիչ ունենալու իրավունքը.
9. դատական ակտը չունի պատճառաբանական մաս.
10. դատական ակտն ազդում է գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վրա՝ բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը քննվող գործի մասին ծանուցել է տվյալ անձին, սակայն նա չի ցանկացել ներգրավվել գործին.
11. ստորադաս դատարանում առկա է եղել գործի վարույթը կարճելու հիմք.
12. ստորադաս դատարանում առկա է եղել հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու հիմք:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներին համապատասխան, թե՛ վերաքննիչ և թե՛ վճռաբեկ դատարանները իրավասու չեն դուրս գալու բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից նույնիսկ այն դեպքում, երբ գործը ստորադաս դատարանում քննվել է այնպիսի դատավորի կողմից, որը պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել: Նշված հիմքը թեև հանգեցնում է դատական ակտի անվերապահ բեկան-

մանը, սակայն չի կարող քննության առարկա դառնալ՝ բողոքի հիմքերից և հիմնավորումներից անկախ: Մինչդեռ նույն հոդվածի մի շարք այլ հիմքերի առկայության դեպքում դատական ակտը ենթակա է բեկանման՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից:

ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԱԲԴ/3724/02/17 քաղաքացիական գործով 12.05.2020 թ.-ին կայացված որոշմամբ<sup>115</sup>, անդրադառնալով դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերին, վերահաստատել է վերոգրյալ կարգավորումներին անհշվող իր դիրքորոշումը՝ նշելով. «Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ կետերով սահմանված խախտումների արձանագրումը ipso facto հանգեցնում է վերանայվող դատական ակտի բեկանմանը՝ անկախ բողոքում նշված հիմքի վկայակոչումից: Նշված խախտումների բնույթն այնպիսին է, որ դրանք բոլոր դեպքերում հանգեցնում են դատական ակտի բեկանման՝ առանց համապատասխան բողոքի հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալու»:

Հետևաբար *Ղուլյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճռով արձանագրված խախտման կամ համանման խախտման հետագայում ի հայտ գալու դեպքում, եթե դատավորի ինքնաբացարկի հիմքերը հայտնի չեն եղել կողմին առաջին ատյանի դատարանում և բարձրացվել են միայն Վերաքննիչ դատարանում նիստի ժամանակ, առկա է լինելու նույն խնդիրը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորմամբ պայմանավորված:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսդրությանը, ապա դատավճռի անվերապահ բեկանման հիմքերը սահմանված են Քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով, որը ներառում է նաև դատարանի՝ դատավճիռը ոչ օրինական կազմով կայացնելու հիմքը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0211/01/10 քրեական գործով 13.07.2011 թ.-ին կայացված որոշմամբ<sup>116</sup> մեկնաբանել է նշված դրույթը՝ արձանագրելով հետևյալը. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

115. Մանրամասն տե՛ս <http://www.irtek.am/views/act.aspx?aid=106638>:

116. Մանրամասն տե՛ս ՀՀՊՏ 2011.10.21/57(860).1 Հոդ.1465.5, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=71517>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրելով «բոլոր դեպքերում» ձևակերպումը՝ օրենսդիրը արտահայտել է այդ կանոնն իմպերատիվ դարձնելու կամք՝ անկախ վերադաս դատարաններում վարույթի սահմանները որոշող իրավանորմերից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մաս և 415-րդ հոդվածի 1-ին մաս): Այլ կերպ, եթե վերադաս դատարանը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա իրավասու է ուղղելու այդ դատական սխալը՝ կաշկանդված չլինելով դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով»: Նույնաբովանդակ դիրքորոշում է արտահայտվել Վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԵԱԶԴ/0065/01/11 քրեական գործով 08.06.2012 թ.-ին կայացված որոշմամբ: Այսպիսով, ստորադաս դատարանի դատավորի ինքնաբացարկի հիմքերի առկայության հարցը անկախ բողոքի հիմքերից գնահատելու պահանջը բխում է նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից, հետևաբար քրեական դատավարությունում նշված խնդիրը կարելի է համարել լուծված:

Ինչ վերաբերում է վարչական դատավարությանը, ապա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ (վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում) և 152-րդ<sup>117</sup> հոդվածներով սահմանված կարգավորումները հնարավորություն են տալիս եզրահանգելու, որ արձանագրված խնդիրն օրենսդրական մակարդակում առկա չէ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով տարբեր վարչական գործերով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներով արտահայտված դիրքորոշումները, գտնում ենք, որ դրանցով, ըստ Էության, ընդլայնվել է օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների շրջանակը վերաքննության սահմանների մասով: Այսպես, օրինակ, թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով 2018 թվականի նոյեմբերի 30-ին կայացրած որոշմամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Վերաքննիչ դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ Էության քննութ-

---

117. Սահմանված են դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը:

յան առարկա դարձնելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե վերաքննիչ բողոքում վկայակոչված այս կամ այն հիմքը վարչական դատարանում քննարկվել է, թե՛ ոչ: Իսկ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքում վկայակոչված չէ այնպիսի հիմք, որի վերաբերյալ վարչական դատարանում քննություն չի իրականացվել, ապա վերաքննիչ դատարանը չի կարող դուրս գալ վարչական դատարանում գործի քննության շրջանակներից և կայացնել դատական ակտ վերաքննիչ բողոքում չվկայակոչված և վարչական դատարանում քննության առարկա չդարձված հիմքով»:

Հետևաբար արձանագրված խախտման հնարավոր կրկնման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ ենք համարում Վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել 152-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված հիմքը քննության առնելու և դատական ակտը բեկանելու վերադաս դատարանի իրավասությունը՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից:

## Եզրակացություն

Հետազոտության արդյունքում փաստում ենք, որ *Ղուլյանն ընդդեմ Հայաստանի* գործով ՄԻԵԴ կայացրած վճռից բխող ընդհանուր միջոցների կիրառման խնդիր առկա է թե՛ օրենսդրական մակարդակում, թե՛ իրավակիրառ պրակտիկայում: Մասնավորապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերից *գործը ոչ օրինական կազմով դատարանի կողմից քննելու* հիմքի կիրառումը փոխկապակցված է բացառապես բողոքի հիմքերի և հիմնավորումների հետ: Վարչական դատավարությունում, իրավակիրառ պրակտիկան հաշվի առնելով, առկա է նշված հիմքը նույն կերպ մեկնաբանելու և կիրառելու ռիսկ:

## ԹԱՄՐԱԳՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ԸՆՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 42588/10)<sup>118</sup>

ԿԵՂՈՒ

Թամրագյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանը ճանաչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում մի շարք հիմքերով՝ կապված Վճռաբեկ դատարանի կողմից կիրառելի իրավական դրույթը պատշաճ կերպով չնշելու, դիմումատուի կողմից ներկայացված կարևոր փաստարկներին չանդրադառնալու և սեփական նախադեպային իրավունքը չկիրառելու վերաբերյալ պատճառաբանություն չներկայացնելու հետ:

## ԹԱՄՐԱԳՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ԸՆՅԱՍՏԱՆԻ

ՀՀ Վարչական դատարանը բավարարել էր դիմումատուի հայցը՝ հիմք ընդունելով այն, որ վերջինս տասը տարուց ավելի անընդմեջ, բարեխիղճ և բացահայտ, սակայն առանց իր իրավունքների իրավաբանական ձևակերպման տիրապետել է հողամասը, որն այնուհետև մարզպետարանի կողմից աճուրդային կարգով վաճառվել է այլ անձի՝ Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի (գնման նախապատվության իրավունք) պահանջների խախտմամբ: ՀՀ Վճռաբեկ դատարանը, սակայն, բեկանել էր Վարչական դատարանի վճիռը և մերժել Բ. Թամրագյանի հայցը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ եզրակացնելով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը կիրառելի չէ տվյալ գործի համար, քանի որ այն չի վերաբերում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերին, Վճռաբեկ դատարանը չի նշել, թե ի վերջո որ իրավական դրույթն է կիրառելի դիմումատուի գործի համար: Այսպիսով, մի կողմից Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը կիրառելի չէ, մյուս կողմից էլ չի նշել, որ դրա փոխարեն պետք է կիրառվեր Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածը: Հաշվի առնելով այն փաստը, որ տվյալ հողը եղել է պե-

118. Թամրագյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 42588/10, 2020 թ. մարտի 19), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-201738>:

տական սեփականություն, Վճռաբեկ դատարանի ենթադրյալ որոշումն առ այն, որ Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածը կիրառելի չէ դիմումատուի գործի համար, հակասում է 2007 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 3-1835 (Ա) որոշման մեջ իր իսկ կողմից ներկայացված եզրահանգումներին, մինչդեռ չի տրվել որևէ պատճառաբանություն՝ բացատրելու սեփական նախադեպային իրավունքից այդպիսի շեղումը:

ՄԻԵԴ-ը նշել է նաև, որ Վճռաբեկ դատարանի վիճարկվող որոշումը չի պարունակում որևէ հղում իր թիվ 3-1835 (Ա) և թիվ 3-537 (ՎԴ) որոշումներին՝ չհաշված, որ առկա չէ այդ որոշումներում ներկայացված եզրահանգումների լույսի ներքո որևէ վերլուծություն դիմումատուի գործի փաստական հանգամանքների վերաբերյալ, թեպետ վերջինիս գործը հատկապես վերաբերում էր պետության սեփականություն հանդիսացող հողերին: Դատարանը նշել է, որ Վճռաբեկ դատարանն իր՝ 2007 թվականի մարտի 30-ի թիվ 3-537 (ՎԴ) որոշմամբ եկել էր եզրահանգման ձեռքբերման վաղեմության ուժով գույք ձեռք բերելու նախապատվության իրավունքի ծագման հարցը որոշելու սկզբունքի վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը մասնավորապես արձանագրել էր, որ այն փաստը, որ անձը տասը տարի անընդմեջ բացահայտ և բարեխղճորեն տիրապետում է գույքը, գերակայում է այդ գույքի նկատմամբ մեկ այլ անձի սեփականության իրավունքի առկայությունը հաստատող ապացույցներին:

**Դիմումատուի նկատմամբ, այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը որդեգրել է հակառակ մոտեցումը՝** նախապատվություն տալով այն փաստին, որ հողը պետական սեփականություն էր, քանի որ գտնվում էր համայնքի վարչական սահմաններից դուրս, մինչդեռ դիմումատուն վարձավճար էր վճարել համայնքի բյուջե: Այսպիսով, **Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել ստորին աստիճանի դատարանի կողմից ուսումնասիրված բոլոր ապացույցներին և վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկներին առ այն, որ** նա ավելի քան տասը տարի անընդմեջ բացահայտ և բարեխղճորեն տիրապետել է տվյալ հողակտորը. սրանք հարցեր են, որոնք կարևոր էին որոշելու համար, թե արդյոք դիմումատուն կարող էր, համաձայն ներպետական իրա-

վունքի, հավակնել նախապատվության իրավունք ստանալու: Այս հանգամանքներում **Դատարանը գտել է, որ Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել դիմումատուի փաստարկներին, որոնք հատուկ էին, վերաբերելի և կարևոր գործի լուծման համար:**

### **Կառավարության գործողությունների ծրագիր (11.12.2020 թ.)<sup>119</sup>** (հիմնական ընդհանուր միջոցներ)

- Կառավարությունը նախ և առաջ նշել է՝ հիմքեր չկան ենթադրելու, որ սույն գործով արձանագրված խախտումները որևէ կերպ փոխկապակցված են օրենսդրական թերությունների կամ լայնորեն տարածված պրակտիկայի հետ: Ներպետական օրենսդրությունը բավարար չափով կարգավորում է խնդրո առարկա հարաբերությունները: Ձեռքբերման վաղեմության վերաբերյալ առկա դատական պրակտիկան (որը վերլուծվում է նույն փաստաթղթում) վերահաստատում է համապատասխան օրենսդրական դրույթների հաստատուն կիրառումը:
- **Ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման վերաբերյալ դատական պրակտիկայի մասով**

- Մինչև Վճռաբեկ դատարանի կողմից 2010 թ.-ի ապրիլի 2-ի որոշման ընդունումը Վճռաբեկ դատարանն իր՝ 10.10.2007 թ.-ի թիվ 3-1435 (ՎԴ) որոշմամբ քննարկել էր ձեռքբերման վաղեմության պարտադիր վավերապայմանները և, կիրառելով դրանք նշված գործով, ճանաչել ձեռքբերման վաղեմության ուժով անձի՝ սեփականության իրավունքը: Այնուհետև իր՝ 13.02.2009 թ.-ի, 05.04.2013 թ.-ի և 25.03.2019 թ.-ի որոշումներով հաստատուն կերպով զարգացրել և վերահաստատել է իր դիրքորոշումն առ այն, որ բոլոր վավերապայմանների առկայության դեպքում անձինք, որոնք թեև չունեն

---

119. Մանրամասն տե՛ս [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2020\)1184E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2020)1184E):



իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպում, պետք է ճանաչվեն համապատասխան գույքերի սեփականատեր: Ներպետական դատարանների դատական պրակտիկան ցույց է տալիս Վճռաբեկ դատարանի հաստատված պրակտիկայի մշտական կիրառումը:

- 2019-2020 թթ.-ին ներպետական դատարանները քննել են ավելի քան 220 գործ ձեռքբերման վաղեմության վերաբերյալ, որոնցից 174-ի դեպքում դատարանները բավարարել են հայցվորների հայցերը՝ ճանաչելով ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը: Այսպիսով, համապատասխան դատական պրակտիկայի վերլուծությունը վկայում է այն մասին, որ ներպետական դատարանները, կիրառելով վերաբերելի օրենսդրությունը, հետևողականորեն ճանաչել են ձեռքբերման վաղեմությունը՝ որպես գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման օրինական միջոց:

#### ■ **Պատճառաբանված դատական ակտի իրավունքի մասով**

- Դատական օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում վարչական դատավարությունում երկաստիճան դատական համակարգը փոխարինվեց եռաստիճանով:
- Այս օրենսդրական փոփոխություններով սահմանվեց նաև դատարանների պարտականությունը՝ պատճառաբանելու անգամ անընդունելիության վերաբերյալ որոշումները:
- ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 09.04.2007 թ.-ի թիվ ՍԴՈ-690 որոշմամբ սահմանվեց, որ դատական ակտերը պատճառաբանելու նորմատիվ պարտականությունը դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության կարևոր երաշխիք է:
- ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 27.03.2008 թ.-ի 3-54 (ՎԴ) և 27.11.2015 թ.-ի որոշումներով, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի այլ որոշումներով շարունակաբար կարևոր-

վել է դատական ակտերը պատշաճ կարգով պատճառաբանելու պարտականությունը՝ որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի բաղադրիչ:

- 2018 թ.-ին ընդունված Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ընդլայնեց դատական ակտի պատճառաբանման պահանջները՝ սահմանելով դատական ակտի կառուցվածքին վերաբերող առանձին հոդված:
- Բարձրագույն դատական խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորության իրականացման շրջանակներում քննարկել է դատական ակտի չպատճառաբանման հետ կապված մի քանի դեպքեր: Նշված գործերով արձանագրված կարգապահական խախտումներով խորհրդի կողմից կիրառվել են տարբեր կարգապահական պատասխանատվության միջոցներ:

## Օրենսդրական կարգավորումներ/խնդիրներ

### Դատական ակտի պատճառաբանման մասով

Գործն ըստ Էուբյան լուծող դատական ակտերի հիմնավորվածության և պատճառաբանվածության ընդհանուր պահանջները սահմանված են ՀՀ քրեական, քաղաքացիական, վարչական դատավարության օրենսգրքերով, որոնց պատշաճ կիրառման դեպքում լրացուցիչ իրավակարգավորումների անհրաժեշտություն չի առաջանում:

Կառավարության գործողությունների ծրագրով անդրադարձ է կատարվել նաև ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 09.04.2007 թ.-ի թիվ ՍԴՈ-690 որոշմանը, որն առնչվում է Վճռաբեկ դատարանի կողմից բողոքի անընդունելիության վերաբերյալ որոշման պատճառաբանման պահանջին (վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում՝ համապատասխան ժամանակահատվածում գործող իրավակարգավորումների համաձայն): Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման պատճառաբանման

մասով առկա են հատուկ իրավակարգավորումներ դատավարական օրենսգրքերով:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է բավարարի նույն օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված պահանջները: Դրանք ներառում են նաև հետևյալը՝ հիմնավորումներ, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

Մինևույն ժամանակ ՀՀ Սահմանադրական դատարանի դատական կազմի՝ 10.02.2020 թ.-ի թիվ ՍԴԴԿՈ-6 որոշմամբ<sup>120</sup> մերժվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերագրյալ դրույթների սահմանադրականությունը վիճարկելու վերաբերյալ անհատական դիմումով գործի քննությունը: Որոշմամբ մասնավորապես արձանագրվել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան օրենսդրական կարգավորումների և Սահմանադրական դատարանի դիրքորոշման առկայությունը հերքում են իրավական անորոշության վերաբերյալ դիմողի փաստարկները: Անդրադառնալով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի բացակայության վերաբերյալ եզրահանգումը հիմնավորելու կամ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար հիմքերի բացակայությունը առանց հիմնավորումների պարզապես փաստելու կապակցությամբ դիմողի հարցադրմանը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը արձանագրել է, որ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանը համապատասխան իրավական դիրքորոշում է արտահայտել իր՝ 2008 թ.-ի հոկտեմբերի 8-ի ՍԴԴ-765 որոշմամբ՝ մասնավորապես նշելով. «Իր ՍԴԴ-690 որոշման մեջ Սահմանադրական դատարանը պատճառաբանվածության պարտադիր պահանջը կապում է ոչ թե վճռաբեկ բողոքի ընդունելիության այս կամ այն կոնկրետ հիմքի հետ, այլ բացառապես բոլոր հիմքերի հետ»: Որոշմամբ արձանագրվել է, որ անհատական դիմումով իրականում բարձրացվում է դատական ակտի իրավաչափության հարց:

120. Մանրամասն տե՛ս <https://www.concourt.am/armenian/decisions/judicial/2020/pdf/sddkv-6.pdf>:

ՀՀ Սահմանադրական դատարանը 08.10.2008 թ.-ի թիվ ՍԴՌ-765 որոշմամբ արձանագրել է, որ թիվ ՍԴՌ-690 որոշման առկայության պայմաններում ՀՀ Ազգային ժողովն օժտված չէ վճարել բողոքը վերադարձնելու հիմքերից որևէ մեկը «արտոնյալ» վիճակում դնելու հայեցողությամբ և **չի կարող սահմանել, որ այդ հիմքի վկայակոչումն «ինքնաբավ է», ու դրա առկայության հիմնավորման կարիք չկա: Ուստի, անկախ նրանից, թե օրենսդիրը վճարել բողոքի ընդունելիության ինչ հիմքեր կսահմանի, դրանցից բոլորը և յուրաքանչյուրը ենթակա են պատճառաբանման:**

Արձանագրենք, որ ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՌ-690 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1 հոդվածի 2-րդ կետը (2006 թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու մասով ճանաչվել է ՀՀ Սահմանադրության պահանջներին հակասող և անվավեր:

Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության և վարչական դատավարության օրենսգրքերում վճարել բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների պատճառաբանմանն առնչվող կարգավորումները որոշակիորեն հակասում են ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 09.04.2007 թ.-ի թիվ ՍԴՌ-690, 11.04.2007 թ.-ի թիվ ՍԴՌ-691, 08.10.2008 թ.-ի թիվ ՍԴՌ-765, 28.07.2009 թ.-ի թիվ ՍԴՌ-818 որոշումների պահանջներին:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճարել բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Վճարել բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ Վճարել դատարանը **պետք է հիմնավորի վճարել բողոքում վկայակոչված վճարել բողոքը վարույթ ընդունելու՝ օրենսգրքի 414.2 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը:**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճարել բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Վճարել բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ Վճարել դատարանը պետք է հիմնավորի վճարել բողոքում վկայակոչված

## **վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ **օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը:****

Վերոգրյալ իրավակարգավորումներից բխում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի բացակայությունը հիմնավորելու պահանջը ամրագրվել է մասնակիորեն՝ չներառելով հետևյալ երկու ընդունելիության հիմքերը՝

- ամերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում,
- դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր<sup>121</sup>:

Նույն խնդիրն առկա է նաև առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ Նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծում<sup>122</sup>:

Սահմանված բացառությունները ուղղակիորեն հակասում են ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 08.10.2008 թ.-ի թիվ ՍԴՈ-765 որոշման պահանջներին, ըստ որի՝ անկախ նրանից, թե օրենսդիրը վճռաբեկ բողոքի ընդունելիության ինչ հիմքեր կսահմանի, դրանցից բոլորը և յուրաքանչյուրը ենթակա են պատճառաբանման:

## **Իրավակիրառ պրակտիկա/խնդիրներ**

### **Դատական ակտի պատճառաբանման մասով**

Դատական պրակտիկայում որպես համակարգային խնդիր կարող ենք արձանագրել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումները չպատճառաբանելը:

ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 09.04.2007 թ.-ի թիվ ՍԴՈ-690, 11.04.2007 թ.-ի թիվ ՍԴՈ-691, 08.10.2008 թ.-ի թիվ ՍԴՈ-765, 28.07.2009

---

121. Հետևյալ ընդունելիության հիմքի շրջանակներում. բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար:

122. Կ-637-04.06.2020-ՊԻ-011/1, 383-րդ հոդվածի 3-րդ մաս, մանրամասն տե՛ս [http://www.parliament.am/reading1\\_docs7/K-637\\_R1.pdf](http://www.parliament.am/reading1_docs7/K-637_R1.pdf):

թ.-ի թիվ ՍԴՌ-818 որոշումների առկայության պայմաններում, այնուամենայնիվ, որևէ բովանդակային փոփոխություն այս դատական ակտերի պատճառաբանման հարցում չի արձանագրվել, այն դեպքում, երբ ներկայացված բողոքների մեծամասնությունը գործնականում Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ չի ընդունվում<sup>123</sup>:

Թեև ՀՀ քրեական դատավարության և վարչական դատավարության օրենսգրքերում առկա են հատուկ կարգավորումներ, որոնք պարտավորեցնում են ՀՀ Վճռաբեկ դատարանին որոշմամբ հիմնավորել վճռաբեկ բողոքում վկայակոչված բողոքը վարույթ ընդունելու՝ համապատասխան դրույթով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը<sup>124</sup>, գործնականում այս կարգավորումները ևս որևէ բովանդակային ազդեցություն չեն ունեցել իրավակիրառ պրակտիկան փոխելու տեսանկյունից:

Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են քրեական, քաղաքացիական և վարչական գործերով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին բազմաթիվ որոշումներ: Ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ նշված որոշումներում բողոքի ընդունումը մերժելու որևէ բովանդակային պատճառաբանություն չի ներկայացվում, փոխարենը Վճռաբեկ դատարանը նշում է, որ բողոքում ներկայացված հիմնավորումները համարում է ոչ բավարար վճռաբեկ բողոքի ընդունելիության այս կամ այն պայմանի/պայմանների առկայությունը հիմնավորված համարելու համար, կամ որ բողոքաբերի կողմից չի հիմնավորվել բողոքի ընդունելիության պայմանի/պայմանների առկայությունը:

Արձանագրելք նաև, որ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 22.11.2016 թ.-ի թիվ ՍԴՌ-1322 և 27.12.2016 թ.-ի թիվ ՍԴՌ-1334 որոշումներով կարևոր դիրքորոշումներ են արտահայտվել վճռաբեկ բողոքների ընդունելիության նախապայմանների կիրառման վերաբերյալ: Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 22.11.2016 թ.-ի թիվ ՍԴՌ-1322 որոշմամբ՝ ՀՀ վարչական դատավարության

---

123. Մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանում ստացված բողոքների վերաբերյալ հաշվետվությունները՝ ըստ տարիների, հասանելի է՝ <https://court.am/hy/statistic>:

124. ՀՀ վարչական դատավարության և քրեական դատավարության օրենսգրքերում նախատեսված պատճառաբանման տեսանկյունից ընդունելիության հիմքերի ոչ ամբողջական լինելու մասով հիմնավորումները տե՛ս նախորդ բաժնում:

օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի<sup>125</sup> «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ նույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, համաձայն որի՝ բողոքարկվող դատական ակտի և նույնաբնույթ փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծությունը կամ դրանց համադրման արդյունքում անհամապատասխանության փաստումն ինքնին հանդես է գալիս որպես հիմնավորում առ այն, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը, ըստ բողոքաբերի, հակասում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Դիմումը քննության ընդունելու փուլում նման վերլուծության բնույթի ըստ էության գնահատմամբ չի կարող մերժվել՝ արգելափակելով դատարանի մատչելիությունը<sup>126</sup>: Հետևաբար վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցի լուծման փուլում վերոգրյալ վերլուծության բնույթի ըստ էության գնահատմամբ չի կարող մերժվել վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը: Այնուամենայնիվ, դատական պրակտիկայում ՀՀ Սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումները ևս որևէ բովանդակային փոփոխության չեն հանգեցրել, այն դեպքում, երբ թիվ ՍԴՈ-1322 որոշմամբ ուղղակիորեն արձանագրվել է, որ անընդունելի է իրավակիրառ պրակտիկայում այս դրույթի այնպիսի ընկալումը, որի պարագայում ստացվում է, որ հակասող մասերի մեջբերում կատարելը և առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծությունն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններ են:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրական դատարանի վերոնշյալ երկու որոշումներով<sup>127</sup> փաստվել է բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վե-

125. Գործող խմբագրությամբ Վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ:

126. Մանրամասն տե՛ս <https://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1322.pdf>:

127. 22.11.2016 թ.-ի թիվ ՍԴՈ-1322, 27.12.2016 թ.-ի թիվ ՍԴՈ-1334 որոշումներ:

րաբերյալ համեմատական վերլուծության (դրանց համադրման արդյունքում անհամապատասխանության փաստման)՝ Վճռաբեկ դատարանի կողմից ըստ էության գնահատման հանգամանքը բողոքը վարույթ ընդունելու փուլում<sup>128</sup>: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ վճռաբեկ բողոքները ներկայացվում են նշված հակասության վերաբերյալ համեմատական վերլուծության ներառմամբ և համապատասխան հիմքով<sup>129</sup>, բողոքների վարույթ ընդունման մերժումը առանց բովանդակային պատճառաբանության հանգեցնում է բողոք բերող անձի կողմից ներկայացված կարևոր փաստարկներին չանդրադառնալու, սեփական նախադեպային իրավունքից ենթադրյալ շեղման մասով պատճառաբանություն չներկայացնելու վերաբերյալ հետևությանը:

Վերոգրյալի հիմնավորման համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 16.04.2019 թվականի թիվ ՍԴԴ-1453 որոշմանը<sup>130</sup>, որով փաստվել է Վճռաբեկ դատարանի կողմից կամայականորեն, առանց անհրաժեշտ հիմնավորումների իր արտահայտած դիրքորոշումներից շեղվելու հանգամանքը՝ վճռաբեկ բողոքի վարույթ ընդունման ոչ իրավաչափ մերժման արդյունքում: Մասնավորապես որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «Սույն գործով Վճռաբեկ դատարանը, վարույթ չընդունելով դիմողի վճռաբեկ բողոքը, անտեսել է առաջին և վերաքննիչ աստյանների դատարանների որոշումների առերևույթ հակասությունն իր իսկ որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին, **այլ կերպ՝ կամայականորեն, առանց անհրաժեշտ հիմնավորումների շեղվել է իր արտահայտած դիրքորոշումներից**, ինչը հանգեցրել է դիմողի՝ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում, ինչպես նաև 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավունքների խախտմանը»: Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ վճռաբեկ բողոքը վարույթ

---

128. Դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը գնահատվել են որպես նոր հանգամանքների հիմքով վերանայման ենթակա, քանի որ համապատասխան դրույթները նրանց նկատմամբ կիրառվել են որոշումներով բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկաբանությամբ:

129. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 22.11.2016 թ.-ի թիվ ՍԴԴ-1322 և 27.12.2016 թ.-ի թիվ ՍԴԴ-1334 որոշումներով սահմանված չափանիշներին համապատասխան:

130. Մանրամասն տե՛ս ՀՀԴՏ 2019.04.26/27(1480) Հոդ.327, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=129918>:



ընդունելու պարտադիր լիազորության շրջանակներում վճռաբեկ բողոքի գնահատման ազատությունը սահմանափակվում է Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված՝ տվյալ բողոքի քննությանը նախորդող տևական պրակտիկայով, որը կաշկանդում է Վճռաբեկ դատարանին և պահանջում դրանից հրաժարվելու կամ այն փոփոխելու դեպքերում պատշաճ հիմնավորում, ինչպես նաև ենթադրում է, որ այդպիսի դեպքերում Վճռաբեկ դատարանը հետագայում պետք է հետևողականորեն ղեկավարվի իր Նոր իրավական դիրքորոշումներով. **«Ուստի, որևէ չհիմնավորված, կամայական շեղում նախորդող պրակտիկայից անթույլատրելի է»:**

ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 15.11.2016 թ.-ի թիվ ՍԴՈ-1321 որոշմամբ<sup>131</sup> անդրադարձ է կատարվել քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից բողոքի վարույթ ընդունման մերժման իրավաչափության հարցին՝ արձանագրելով, որ դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ տվյալ գործի շրջանակներում ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառումը պայմանավորել է օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկայից տարբերվող մեկնաբանություններով կիրառմամբ:

### **Պետության կամ համայնքի հողերից հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունքի մասով**

Կառավարության գործողությունների ծրագրում մեջբերված դատական ակտերը և դատական պրակտիկան թե՛ Վճռաբեկ դատարանի և թե՛ ստորադաս դատարանների մակարդակով վերաբերում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով սահմանված կարգով՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման գործերին, մինչդեռ *Թամրազյանն ընդդեմ Հայաստանի* գործը վերաբերել է ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածին համապատասխան՝ ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպման պետության կամ համայնքի հողե-

131. Մանրամասն տե՛ս ՀՀՊՏ 2016.11.23/84(1264) Հոդ.1122, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109026>:

րից օգտվելու փաստի ուժով, այդ հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունքին: Այսինքն՝ վկայակոչված դատական պրակտիկան վերաբերելի չի եղել սույն գործով կայացված վճռից բխող միջոցներին, քանի որ այն վերաբերել է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման դեպքերին՝ սեփականության իրավունքով պետության կամ համայնքի սեփականություն հանդիսացող հողամաս ձեռք բերելու նախապատվության իրավունքին վերաբերող գործերի փոխարեն:

Ինչ վերաբերում է սեփականության իրավունքով պետության կամ համայնքի սեփականություն հանդիսացող հողամաս ձեռք բերելու նախապատվության իրավունքի իրացմանն առնչվող դատական պրակտիկային, ապա գտնում ենք, որ դատական պրակտիկայում բավարար չափով չի բացահայտվել ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բարեխղճության վավերապայմանի բովանդակությունը՝ պետության կամ համայնքի հողերից առանց իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպման օգտվելու համատեքստում:

ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԿԴ3/0042/02/13 քաղաքացիական գործով կայացված 27.12.2017 թ.-ի որոշմամբ անդրադարձ է կատարվել բարեխղճության վավերապայմանին, և այն Վճռաբեկ դատարանի կողմից մեկնաբանվել է հետևյալ կերպ. «Պետությանը կամ համայնքին պատկանող հողի օգտագործումը պետք է լինի բարեխիղճ: Օգտագործողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքից օգտվում է օրինական հիմքերով»: Այնուամենայնիվ, նշված մեկնաբանությունն ակնհայտորեն բավարար չէ վկայակոչված դրույթի՝ իրավական որոշակիության պահանջներին համահունչ կիրառումն ապահովելու համար՝ հաշվի առնելով առանց անձանց իրավունքների<sup>132</sup> իրավաբանական ձևակերպման համապատասխան հողամասերից օգտվելու միաժամանակյա պայմանի առկայությունը: Դրան զուգահեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով սահմանված տիրապետման բարեխղճության նախապայմանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի

---

132. Հստակեցված չէ նաև «առանց իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպման» հասկացության բովանդակությունը:

կողմից տրված մեկնաբանությունները կիրառելի չեն կարող լինել պետությանը կամ համայնքին պատկանող հողի օգտագործման բարեխղճության բովանդակությունը բացահայտելու տեսանկյունից: ՎԴ/3691/05/09 գործով կայացված որոշմամբ ոչ բավարար պատճառաբանության հետևանքով ևս չի բացահայտվել բարեխղճության նախապայմանի բովանդակությունը համապատասխան փաստական հանգամանքների համատեքստում, ինչպես նաև չի պատճառաբանվել ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելու հիմքերի բացակայության ենթադրյալ հետևու-թյունը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասը սովյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ համապատասխան հողամասն ուղղակի վաճառքի եղանակով օտարվել է և ոչ թե հանձնվել օգտագործման: Այսինքն՝ հողամասն այլ անձի նույն պայմաններով չի տրամադրվել:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանի որոշման մեջ որևէ պատճառաբանություն չի ներառվել ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով Երևանի քաղաքապետի՝ հողամասի օտարման մասին վարչական ակտի հնարավոր ոչ իրավաչափության մասով, այն դեպքում, երբ հայցվորը հողամասի օտարումը վիճարկել է նաև այդ հիմքով<sup>133</sup>:

## Եզրակացություն

Հետազոտության արդյունքում փաստում ենք, որ *Թամրազյանն ընդդեմ Հայաստանի* գործով ՄԻԵԴ կայացրած վճռից բխող ընդհանուր միջոցների կիրառման խնդիր առկա է թե՛ օրենսդրական մակարդակում, թե՛ իրավակիրառ պրակտիկայում: Մասնավորապես ՀՀ վարչական դատավարության և քրեական դատավարության օրենսգրքերով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների պատճառաբանմանն առնչվող կարգավորումները չեն տարածվում ընդունելիության բոլոր հիմքերի նկատմամբ:

---

133. Ըստ թիվ ՎԴ/3691/05/09 գործով ՀՀ վարչական դատարանի կողմից 15.02.2010 թ.-ին կայացված վճռի, հասանելի է՝ <http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=administrative>:

Մինչդեռ իրավակիրառ պրակտիկայում վճռաբեկ բողոքների վարույթ ընդունումը մերժվում է առանց որևէ բովանդակային պատճառաբանության՝ անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում հանգեցնելով նաև սեփական պրակտիկայից չհիմնավորված շեղվելու հետևանքին<sup>134</sup>:

---

134. Այն գործերով, որոնցով բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Մանրամասն տե՛ս 16.04. 2019 թ.-ի թիվ ՍԴՌ-1453 որոշումը:

## ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 22387/05)<sup>135</sup>

## ԳԱԼՍՏՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 26986/03)<sup>136</sup>

## ԱՇՈՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 33268/03)<sup>137</sup>



Նշված խումբ գործերով Դատարանը ճանաչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում՝ զուգորդված 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ այն հիմքով, որ խախտվել է դիմումատուների՝ արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես պաշտպանությունը նախապատրաստելու նպատակով բավարար ժամանակ և միջոցներ չունենալու հետևանքով:

## ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՄԻԵԴ-ն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում՝ 6-րդ հոդվածի 1-ին մասի զուգակցմամբ հետևյալ հիմնավորմամբ.

Դիմումատուի դեմ հարուցված վարչական գործը (Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածի հիման վրա 10 օր վարչական կալանքի ենթարկելու վերաբերյալ՝ Ոստիկանության աշխատողի օրինական պահանջին չարամտորեն չենթարկվելու համար) քննվել է արագացված դատաքննության կարգով՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 227-րդ հոդվածի: Դիմումատուն սույն գործով տարվել և պահվել է Ոստիկանության բաժնում՝ առանց արտաքին աշխարհի հետ շփման հնարավորության, որտեղ էլ նրան

135. Կարապետյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 22387/05, 2009 թ. հոկտեմբերի 27), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-95283>:

136. Գալստյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 26986/03, 2007 թ. նոյեմբերի 15), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-83297>:

137. Աշուրյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 33268/03, 2008 թ. հուլիսի 17), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-87642>:

մեղադրանք է առաջադրվել, և մի քանի ժամ անց նա տարվել է դատարան և դատապարտվել: Դատարանը գտել է, որ խախտվել է դիմումատուի՝ արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես վերջինիս չի տրամադրվել պատշաճ ժամանակ և հնարավորություն իր պաշտպանությունը նախապատրաստելու համար: Արձանագրենք, որ ՄԻԵԴ-ի կողմից նմանատիպ փաստեր և գանգատներ արդեն իսկ քննվել էին Հայաստանի դեմ ներկայացված այլ գործերով, մասնավորապես, *Գապլոյանն ընդդեմ Հայաստանի*, *Աշուրյանն ընդդեմ Հայաստանի* գործերով, որոնցով առավել մանրամասն է անդրադարձ կատարվել խախտումների բնույթին:

### **ՉԱՆՍՅԱՆ ԸՆԴՊԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

ՄԻԵԴ-ն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում՝ զուգորդված 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ հետևյալ հիմնավորմամբ.

Սույն գործում Դատարանը գտել է, որ դիմումատուի վերաբերյալ գործը քննվել է արագացված ընթացակարգով. համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 277-րդ հոդվածի՝ մանր խուլիգանության վերաբերյալ գործերը քննվում են մեկօրյա ժամկետում: Դատարանն արձանագրել է, որ քրեական գործերով արագացված դատաքննության առկայությունն ու կիրառությունն ինքնին չեն հակասում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին, քանի դեռ նրանք տրամադրում են հոդվածով սահմանված բոլոր անհրաժեշտ երաշխիքները: Դատարանն արձանագրել է նաև, որ Կառավարությունը պնդել է՝ եթե դիմումատուն գտնում էր, որ իրեն տրամադրված ժամանակը բավարար չէր իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, նա ունեցել է դատական նիստը հետաձգելու միջևորդություն ներկայացնելու իրավունք, ինչը չի արել: Դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը չի սահմանում 277-րդ հոդվածի կանոնից որևէ բացառություն: Եվ ոչ էլ նիստը հետաձգելու իրավունքը հստակ թվարկված է եղել վարչական դատավարության ընթացքում մեղադրյալների իրավունքների շարքում: Ո՛չ դիմումատուի վերաբերյալ վարչական գործի նյութերը, ո՛չ էլ Կառավարությունը չհիմնավորեցին, որ դիմումատուն ուստիկա-

նությունում կամ դատարանում տեղեկացվել է նման հնարավորության մասին: Նման պայմաններում Դատարանը գտել է, որ Կառավարությունը չկարողացավ ներկայացնել համոզիչ փաստարկներ, որ դիմումատուն և՛ օրենքով, և՛ գործնականում ունեցել է իր պաշտպանությունը նախապատրաստելու համար գործի քննությունը հետաձգելու միջնորդություն ներկայացնելու իրավունք, և որ նման միջնորդությունը կբավարարվեր, եթե դիմումատուն այն ներկայացներ: Դատարանը նշել է նաև, որ կողմերը համաձայնության չեն եկել մինչդատական վարույթի հստակ ժամկետի հարցում, սակայն բոլոր դեպքերում ակնհայտ է, որ այդ ժամկետը եղել է ոչ ավել, քան մի քանի ժամ: ՄԻԵԴ-ը նշել է, որ անգամ եթե ընդունենք, որ դիմումատուի գործը բարդ չէր, վստահ չէ, որ այն պայմանները, որոնց առկայությամբ դիմումատուի նկատմամբ վարույթ է իրականացվել, սկսած նրան ձերբակալելու պահից մինչև դատապարտումը, եղել են այնպիսին, որ հնարավորություն են տվել նրան պատշաճ կերպով ծանոթանալու իրեն ներկայացված մեղադրանքին և իր դեմ ներկայացված ապացույցներին, գնահատելու դրանք և իր պաշտպանությունը իրականացնելու նպատակով մշակելու կենսունակ իրավաբանական ռազմավարություն: Դատարանը եզրահանգել է, որ դիմումատուին չեն տրամադրվել պատշաճ ժամանակ և հնարավորություններ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար:

## **ԱՇՈՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

ՄԻԵԴ-ն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում՝ զուգորդված 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ: Դատարանը կրկին արձանագրել է, որ նմանատիպ փաստեր և գանգատներ արդեն իսկ քննարկվել են Գալստյանի գործում, որտեղ գտել էր, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ մասի Բ կետի խախտում 6-րդ հոդվածի 1-ին մասի զուգակցմամբ: Սույն գործի հանգամանքները գործնականում նույնական են: Դիմումատուի դեմ երկու վարչական գործերն էլ քննվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 277-րդ հոդվածով նախատեսված արագացված կարգով: Երկու դեպքում էլ դիմումատուն նույնպես տարվել և պահվել է Ռստիկանության բաժնում՝ առանց արտաքին աշխար-

հի հետ որևէ կապի, որտեղ նրան ներկայացվել է մեղադրանքը, և ժամերի ընթացքում նա տարվել է դատարան և ճանաչվել մեղավոր: Ըստ այդմ, Դատարանը սույն գործով այլ որոշում կայացնելու որևէ պատճառ չի տեսել և եզրակացրել է, որ 2003 թ.-ի ապրիլի 7-ի և 9-ի երկու դատավարություններում էլ դիմումատուն չի ունեցել արդար դատաքննություն, մասնավորապես իր պաշտպանությունը նախապատրաստելու նպատակով բավարար ժամանակ և միջոցներ չունենալու հետևանքով:

*Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի* (գանգատ թիվ 22390/05)<sup>138</sup>, *Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի* (գանգատ թիվ 41698/04)<sup>139</sup>, *Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի* (գանգատ թիվ 31237/03)<sup>140</sup>, *Հակոբյանը և այլք ընդդեմ Հայաստանի* (գանգատ թիվ 34320/04)<sup>141</sup>, *Գասպարյանն ընդդեմ Հայաստանի* (թիվ 2) (գանգատ թիվ 22571/05)<sup>142</sup> գործերով կայացված վճիռներով ևս համանման փաստական հանգամանքների պայմաններում ՄԻԵԴ-ն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում՝ զուգորդված 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ՝ նույնաբովանդակ հիմնավորմամբ:

## Կառավարության գործողությունների հաշվետվություն (16.04.2015 թ.<sup>143</sup>, 02.05.2016 թ.<sup>144</sup>, 09.06.2016 թ.<sup>145</sup>)

(հիմնական ընդհանուր միջոցներ)<sup>146</sup>

- 16.12.2005 թ.-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում կատարված փոփոխությունների արդ-

138. Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 22390/05, 2008 թ. դեկտեմբերի 2), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-89966>:

139. Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 41698/04, 2008 թ. դեկտեմբերի 2), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-89969>:

140. Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 31237/03, 2008 թ. դեկտեմբերի 2), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-89959>:

141. Հակոբյանը և այլք ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 34320/04, 2012 թ. ապրիլի 10), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-110263>:

142. Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (թիվ 2) գործով (գանգատ թիվ 22571/05, 2009 թ. հունիսի 16), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-92963>:

143. Մանրամասն տես՝ [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2015\)434E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2015)434E):

144. Մանրամասն տես՝ [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2016\)610E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2016)610E):

145. Մանրամասն տես՝ [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2016\)745E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2016)745E):

146. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի՝ 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ զուգորդված խախտման առնչությամբ:



յունքում վերացվել է վարչական կալանքին վերաբերող խնդրահարույց կարգավորումը:

- 2013 թ.-ի դեկտեմբերի 5-ին ընդունված Վարչական դատավարության օրենսգիրքը ապահովում է արդար դատաքննության բոլոր երաշխիքները, որոնք համահունչ են Կոնվենցիայի պահանջներին:
- Վարչական իրավախախտումների հետ կապված գործերը ներկայումս քննվում են ընդհանուր ընթացակարգով, սակայն գործող օրենսդրությունը սահմանում է բացառություն արագացված դատաքննության տեսքով, որը կարող է իրականացվել բացառապես հետևյալ դեպքերում. 1. դիմում է ներկայացվել ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ, 2. հայցն ակնհայտ հիմնավոր է, 3. հայցն ակնհայտ անհիմն է:
- Եթե գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս ի հայտ են գալիս հանգամանքներ, որոնք պարզելու համար անհրաժեշտ է գործի քննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով, ապա դատարանը որոշում է կայացնում գործի քննությունը վերսկսելու մասին՝ այդ որոշումը եռօրյա ժամկետում ուղարկելով դատավարության մասնակիցներին:
- Դատարանների նախագահների խորհրդի թիվ 9 որոշմամբ արձանագրվել է, որ հայցը համարվում է ակնհայտորեն հիմնավորված, եթե այն հիմնված է անվիճարկելի ապացույցների վրա, իսկ ակնհայտ անհիմն է համարվում այն դեպքում, երբ դատարան ներկայացված հայցը հիմնավորված չէ ապացույցներով և չի կարող հիմնավորվել որևէ այլ ապացույցով:
- Սահմանադրական դատարանի՝ 17.04.2012 թ.-ի թիվ ՍԴՌ-1022 որոշմամբ առավել հստակեցվել է «ակնհայտ» արտահայտությունը՝ կասկածից վեր լինելու պարզաբանմամբ:
- Ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ միջոցները վարչական դատավարությունում բանավոր դատաքննության իրավունքի ապահովման նպատակով օրենսդրական երաշխիքների ստեղծման ուղղությամբ: ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի համաձայն՝ վարչական գործի քննությունը իրականացվում է բանավոր ընթացակարգով: Գրավոր ընթացակարգով գործի քննությունը կարող է իրականացվել բացա-

ռապես օրենսգրքով սահմանված դեպքերում. ամրագրված միակ նման դեպքը կողմերի գրավոր համաձայնությամբ գործի քննությունը գրավոր ընթացակարգով անցկացնել է:

## Օրենսդրական կարգավորումներ/խնդիրներ

Գտնում ենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումները չեն բացառում արձանագրված համանման խախտումների կրկնման ռիսկերը հետևյալ պատճառաբանությամբ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի համաձայն՝ արագացված դատաքննություն կիրառվում է այն դեպքերում, երբ. 1) դիմում է ներկայացվել ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ, 2) հայցն ակնհայտ հիմնավոր է, 3) հայցն ակնհայտ անհիմն է:

Արագացված դատաքննության կիրառման վերոգրյալ հիմքերից երկուսը՝ «1. հայցն ակնհայտ հիմնավոր է. 2. հայցն ակնհայտ անհիմն է», չափազանց գնահատողական են, իսկ հայցադիմումի ներկայացման փուլում հայցադիմումի ակնհայտ հիմնավոր կամ անհիմն լինելու գնահատումը անխուսափելիորեն հանգեցնելու է արդար դատաքննության իրավունքի երաշխիքների խախտման վտանգների: Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարանի՝ 17.04.2012 թ.-ի թիվ ՍԴՌ-1022 որոշմանը, ապա այն, ընդհակառակը, վերահաստատում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վերոգրյալ երկու հիմքերի խնդրահարույց լինելու հանգամանքը: Հիշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը որոշել է, որ Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը («Վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ ... հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը») համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության հարցի քննության փուլում այն չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության փաստը հաստա-

տելու՝ օրենքով նախատեսված պահանջ կամ հայեցողություն: Սահմանադրական դատարանը գտել է, որ «ակնհայտորեն» բառի օգտագործումը հայցադիմումի ընդունելիության փուլում **բացառում է Վարչական դատարան դիմելու իրավունքի առկայությունն ստուգելու համար նյութական իրավունքի խախտման փաստի առկայության կամ բացակայության հարցն առանց համապատասխան դատավարական ընթացակարգերը քննության առարկա դարձնելը**: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառը ենթադրում է, որ առանց նյութական իրավունքի խախտման փաստի բացահայտման՝ **կասկածից վեր է տվյալ իրավունքի՝ հայցվորին չպատկանելը**: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառի ամրագրմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել հայցադիմումի ընդունելիության փուլում ստուգելու **ոչ թե նյութական իրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքի՝ տվյալ անձին պատկանելու հանգամանքը**, այսինքն՝ հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը:

Մինչդեռ հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո առանց դատական նիստ անցկացնելու անմիջապես վճռի կայացումն ինքնին ենթադրում է նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության գնահատում՝ առանց դատավարական ընթացակարգերի և արդար դատաքննության իրավունքի երաշխիքների պահպանման: Ակնհայտ է, որ հայցադիմումը ակնհայտ հիմնավորված գնահատելը, առանց դատական քննություն իրականացնելու, զրկում է անձին ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից, որը կարող է իրականացվել ընդհուպ մինչև դատաքննության ավարտը: Հասկանալի չէ նաև այն, թե ինչպես է գնահատվում հայցի ակնհայտ անհիմն կամ հիմնավորված լինելը դատարանի կողմից այն դեպքում, երբ հայցվորը հայցադիմումի ներկայացման փուլում կարող է առհասարակ որևէ ապացույց չներկայացնել (այս իրավունքը վերապահված է վերջինիս ընդհուպ մինչև դատաքննության ավարտը):

Գտնում ենք, որ հատկապես դատական կարգով վարչական

պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով<sup>147</sup> վերոնշյալ հիմքերով արագացված դատաքննություն իրականացնելու դեպքում անձը կարող է զրկվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի Բ ենթակետով երաշխավորված՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունքից: Հետևաբար անթույլատրելի է նշված երկու հիմքերի կիրառմամբ արագացված դատաքննության իրականացման օրենսդրական հնարավորությունը՝ այդ թվում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքերով:

Խնդրահարույց է նաև այն, որ արագացված դատաքննության թվարկված հիմքերը որևէ կերպ փոխկապակցված չեն փորձագետին լսելու կամ վկաներին հարցաքննելու, զննում կատարելու, դատական հանձնարարություններ տալու անհրաժեշտության գնահատման հետ: Առկա չէ նաև որևէ փոխկապակցվածություն կողմերի՝ գործը արագացված ընթացակարգով քննելու համաձայնություն տալու հետ:

Արձանագրելք, որ արագացված դատաքննության ընթացակարգը անմիջականորեն փոխկապակցված է նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված *հրապարակային դատաքննության* իրավունքի հետ, որը ենթադրում է *բանավոր դատաքննության* իրավունք (Döry-ն ընդդեմ Շվեդիայի, § 37): Ըստ ՄԻԵԴ-ի՝ բանավոր և հրապարակային դատաքննության սկզբունքը կարևոր է հատկապես քրեական համատեքստում, որտեղ քրեական իրավախախտում (արձանագրելք, որ, ըստ Դատարանի նախադեպային իրավունքի, *քրեական իրավախախտում* հասկացությունը հաճախ ներառում է *վարչական իրավախախտումը*) կատարելու մեջ մեղադրվող անձը պետք է ընդհանուր առմամբ կարողանա ներկա գտնվել առաջին ատյանի դատարանում դատաքննությանը (Tierce-ը և այլք ընդդեմ Սան Մարինոյի, § 94, Jussila-ն ընդդեմ Ֆինլանդիայի [Մեծ պալատ], § 40): Առանց ներկա գտնվելու դժվար է ենթադրել, թե ինչպես անձը կարող է իրականացնել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի Գ, Դ և Ե ենթակետերով սահմանված հատուկ իրավունքները, այսինքն՝ իրավունքները՝ «պաշտպանելու իրեն անձամբ», «հարցաքննելու վկաներին կամ

147. Այդ թվում վարչական մարմնի որոշման բողոքարկման շրջանակներում:

իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության» և «օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»։ Միայն բացառիկ հանգամանքները կարող են արդարացնել բանավոր դատաքննության չիրականացումը (Hesse-Anger and Anger v. Germany (dec.): Նման հանգամանքների բացառիկ նշանակությունը բխում է քննարկման ենթակա հարցերի բնույթից (օրինակ՝ այն գործերով, երբ քննությունն առնչվում է **բացառապես իրավական կամ չափազանց տեխնիկական հարցերին** (Koottummel v. Austria, § 19) և ոչ նման հարցերի հաճախականությունից (Miller v. Sweden, § 29; Mirovni Inštitut v. Slovenia, § 37)<sup>148</sup>։

Գտնում ենք, որ վերոգրյալ խմբի գործերով բարձրացված խնդիրները որոշակիորեն արդիական են նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի քննության գրավոր ընթացակարգի համատեքստում, մասնավորապես խնդրահարույց է գրավոր ընթացակարգի կիրառումը որպես ընդհանուր կանոն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթներով։

## Եզրակացություն

Հետազոտության արդյունքում փաստում ենք, որ սույն բաժնում ընդգրկված գործերով ՄԻԵԴ կայացրած վճիռներից բխող ընդհանուր միջոցների կիրառման խնդիրն առկա է առավելապես օրենսդրական մակարդակում։ Մասնավորապես խնդրահարույց է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված՝ արագացված դատաքննության կիրառման երկու հիմքերի առկայությունը, որոնք պայմանավորված են հայցի հիմնավորվածության գնահատմամբ, ինչպես նաև գրավոր ընթացակարգի կիրառումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթներով։

148. Ուղեցույց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ. արդար դատաքննության իրավունք (քաղաքացիաիրավական հայեցակետ), Ուղեցույց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ. արդար դատաքննության իրավունք (քրեաիրավական հայեցակետ)։

## Առաջարկություններ

1. Վերանայել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգավորումները՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերից գործը ոչ օրինական կազմով դատարանի կողմից քննելու հիմքը՝ ներկայացված վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից անկախ կիրառելու հնարավորության ապահովման նպատակով: Քննարկել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նույն երաշխիքները սահմանելու անհրաժեշտության հարցը:
2. Վերանայել ՀՀ վարչական դատավարության և քրեական դատավարության օրենսգրքերով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների պատճառաբանմանն առնչվող կարգավորումները՝ դրանք բողոքի ընդունելիության բոլոր հիմքերի նկատմամբ տարածելու նպատակով:
3. Սեփական նախադեպային դիրքորոշումներից չհիմնավորված շեղումը (անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում) բացառելու նպատակով իրավակիրառ պրակտիկայում ապահովել ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից բողոքների վարույթ ընդունումը մերժելու մասին որոշումները պատշաճ պատճառաբանելը:
4. Վերանայել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված՝ արագացված դատաքննության կիրառման երկու հիմքերը, որոնք պայմանավորված են հայցի հիմնավորվածության գնահատման հետ: Վերանայել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված գրավոր ընթացակարգի կիրառմանն առնչվող կարգավորումը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթներով:

## ԲԱԺԻՆ 4

# ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕՉՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՍԱԴՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՏԳԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ. ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՆՁԱՆՑ՝ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՏԳԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

### ՇԱՄՈՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆՈՒՄ ԹԻՎ 18499/08)<sup>149</sup>

### ՂՈՅՈՒՄԳՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆՈՒՄ ԹԻՎ 53862/07)<sup>150</sup>

### ԹՈՎՄԱՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(ԳԱՆՈՒՄ ԹԻՎ 11578/08)<sup>151</sup>

## ԽՆԴԻՐ

Նշված գործերով կայացված վճիռներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ իրավաբանական օգնության համար դիմելու հնարավորության բացակայության համատեքստում՝ հաշվի առնելով միայն հավատարմագրված փաստաբանների միջոցով վճռաբեկ բողոք ներկայացնելու պահանջը:

149. Շամոյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 18499/08, 2015 թ. հուլիսի 7), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng/?i=001-15581>:

150. Ղոյունյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 53862/07, 2016 թ. հունվարի 21), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng/?i=001-160090>:

151. Թովմասյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 11578/08, 2016 թ. հունվարի 21), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng/?i=001-160091>:

## ՇԱՄՈՅԱՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Դատարանն արձանագրել է, որ, հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի հատուկ դերը, որը սահմանափակվում է օրենքի միատեսակ կիրառության և ճիշտ մեկնաբանման ապահովմամբ, ՄԻԵԴ-ը պատրաստ է ընդունել, որ վճռաբեկ բողոքները հավատարմագրված փաստաբանի միջոցով կերկայացնելու պահանջը ենթադրաբար հետապնդել է այդպիսի բողոքների բարձր որակն ապահովելու իրավաչափ նպատակ: Այնուամենայնիվ, այդպիսի ընթացակարգային պահանջը պահպանելու համար անհրաժեշտ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորության բացակայության պատճառով դիմումատուի՝ Վճռաբեկ դատարանի մատչելիության իրացումը պայմանավորված է եղել նրա ֆինանսական վիճակով:

ՄԻԵԴ-ը համարել է, որ իրավաբանական օգնության համար դիմելու հնարավորության բացակայությունը, հաշվի առնելով ընթացակարգային այն պահանջը, որի համաձայն՝ վճռաբեկ բողոքները կարող են բերվել միայն Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով, անհամաչափորեն սահմանափակել է դիմումատուի՝ դատարանի արդյունավետ մատչելիության իրավունքը:

*Ղույումչյանն ընդդեմ Հայաստանի և Թովմասյանն ընդդեմ Հայաստանի* գործերով Դատարանը նույնական հիմնավորումներով ճանաչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

## Կառավարության գործողությունների հաշվետվություն

(05.04.2016 թ.)<sup>152</sup>

(հիմնական ընդհանուր միջոցներ)

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը 2008 թվականի հոկտեմբերի 8-ին թիվ ՍԴԴ-765 որոշմամբ<sup>153</sup> հակասահմանադրական է ճանաչել Քրեական դա-

152. Մանրամասն տե՛ս [http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD\(2016\)453E](http://hudoc.exec.coe.int/eng?i=DH-DD(2016)453E):

153. ՍԴԴ-765, հասանելի է՝ <https://www.concourt.am/armenian/decisions/common/2008/pdf/sdv-765.pdf>:



տավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածը: Մասնավորապես Սահմանադրական դատարանը գտել է, որ Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անհատույց իրավաբանական օգնություն ցույց տալու որևէ մեխանիզմի բացակայության պայմաններում միայն հավատարմագրված փաստաբանների միջոցով վճռաբեկ բողոք բերելու կանոնն անհամաչափորեն սահմանափակում է Վճռաբեկ դատարանի մատչելիությունը՝ այդ դատարանի մատչելիությունը գործնականում պայմանավորելով բողոք բերած անձանց ֆինանսական վիճակով:

- 2015 թ.-ին ՀՀ Սահմանադրական դատարանը քննության է առել մեկ այլ դատավարական դրույթի սահմանադրականության հարց, ըստ որի՝ անձը կարող էր Վճռաբեկ դատարան դիմել միայն փաստաբանի միջոցով: ՍԴԴ-1192<sup>154</sup>, ՍԴԴ-1196<sup>155</sup> և ՍԴԴ-1220<sup>156</sup> որոշումներով ՀՀ վարչական, քաղաքացիական և քրեական դատավարությունների օրենսգրքերի համապատասխան սահմանափակումներ նախատեսող դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

## Օրենսդրական կարգավորումներ/խնդիրներ

Թեև սույն բաժնում ներառված գործերով կայացված ՄԻԵԴ վճիռներից անմիջականորեն բխող օրենսդրական խնդիրները լուծվել են ՀՀ Սահմանադրական դատարանի վկայակոչված որոշումների ընդունման արդյունքում, հարկ ենք համարում անդրադառնալ անվճար իրավաբանական օգնությանն առնչվող առանձին խնդիրներին, որոնք փոխկապակցված են արդյունավետ դատական պաշտպանության, դատարանի մատչելիության իրավունքներ-

154. ՍԴԴ-1192, հասանելի է՝ <https://www.concourt.am/armenian/decisions/common/2015/pdf/sdv-1192.pdf>:

155. ՍԴԴ-1196, հասանելի է՝ <https://www.concourt.am/armenian/decisions/common/2015/pdf/sdv-1196.pdf>:

156. ՍԴԴ-1220, հասանելի է՝ <https://www.concourt.am/armenian/decisions/common/2015/pdf/sdv-1220.pdf>:

րի ապահովման հետ:

Այսպես, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը՝ բացառությամբ նույն հոդվածով սահմանված դեպքերի: Օրենքի 5-րդ հոդվածը 09.02.2018 թ.-ին լրացվել է հետևյալ դրույթով. «6. Քաղաքացիական դատավարությունում փաստաբան չհանդիսացող անձանց կողմից դատական ներկայացուցչություն իրականացնելու դեպքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով»: Մինևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը սահմանում է միայն փաստաբանների միջոցով դատարանում ներկայացուցչություն իրականացնելու պահանջը: Նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված է այն անձանց շրջանակը, որոնք կարող են դատարանում հանդես գալ որպես ներկայացուցիչ՝ նախորդ իրավակարգավորման պայմաններում առկա «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի մասով արված վերապահման փոխարեն:

Արդյունքում 09.02.2018 թ.-ին ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ քաղաքացիական դատավարությունում բացառվեց ոչ պարբերական և ոչ վճարովի հիմունքներով դատական ներկայացուցչություն իրականացնելու հնարավորությունը: Խնդրահարույց ենք համարում նշված սահմանափակման նախատեսումը՝ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 05.04.2016 թ.-ի թիվ ՍԴՌ-1263 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների, ինչպես նաև արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովման համատեքստում: Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի<sup>157</sup> «բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ որոշման մեջ արտահայտված իրավական

---

157. 17.06.1998 թ.-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ՀՕ-247):

դիրքորոշումների շրջանակներում: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի<sup>158</sup> 3-րդ մասը ևս համապատասխանող է ճանաչվել ՀՀ Սահմանադրությանը՝ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Վերոնշյալ որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալ դիրքորոշումը. «... վեճի առարկա հիմնախնդրի առկա իրավակարգավորման հիմնական նպատակը քաղաքացիական արդարադատության ոլորտում մարդկանց վճարովի իրավաբանական ծառայություն մատուցելու ինստիտուտի հստակ կանոնակարգումն է՝ արգելելով անձանց պարբերաբար և վճարովի հիմունքներով հանդես գալ որպես ներկայացուցիչ դատարանում՝ չունենալով համապատասխան գործունեությամբ զբաղվելու արտոնագիր: Նման իրավակարգավորում առկա է բազմաթիվ երկրներում և բխում է իրավական պետությունում իրավունքի գերակայության երաշխավորման սահմանադրական սկզբունքի էությունից: Այլ խնդիր է, որ արդարադատական պրակտիկայում չպետք է այն աստիճան նեղացվի քաղաքացիական գործերով իրավաբանական օգնություն ցույց տալու շրջանակները, որ բացառվեն ոչ վճարովի հիմունքներով և ոչ պարբերաբար մատուցվող իրավական օգնության հնարավորությունները»:

Անդրադառնալով վճարովիության հիմունքներով պարբերաբար դատական ներկայացուցչության՝ միայն փաստաբանի միջոցով իրականացման օրենսդրական պահանջի և դատարանի մատչելիության իրավունքի միջև հարաբերակցությանը՝ Սահմանադրական դատարանն իր՝ 05.04.2016 թ.-ի թիվ ՍԴԴ-1263 որոշմամբ արձանագրել է, որ նման հարաբերակցությունը կարող է պայմանավորված լինել բացառապես դատական ներկայացուցչություն հայցող անձի ֆինանսական հնարավորություններով: Այնուհետև Սահմանադրական դատարանն անդրադարձել է օրենսդրի կողմից սահմանված երաշխիքներին՝ դատական ներկայացուցչություն հայցող, սակայն համապատասխան ֆինանսական հնարավորություններ չունեցող անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի ապահովման համատեքստում՝ արձանագրելով նաև

158. Մինչև 09.02.2018 թ.-ը գործող խմբագրությունը:

դատական ներկայացուցչության իրականացման հնարավորությունը փաստաբան չհանդիսացող գործունակ անձի կողմից, եթե դատական ներկայացուցչությունը չի կրում պարբերական բնույթ կամ վճարովի չէ: Ուստի ակնհայտ է, որ ոչ պարբերական և ոչ վճարովի հիմունքներով դատական ներկայացուցչություն իրականացնելու հնարավորության բացառումը քաղաքացիական դատավարությունում համահունչ չէ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 05.04.2016 թ.-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ արտահայտված դիրքորոշումներին, ինչպես նաև խնդրահարույց է արդյունավետ դատական պաշտպանության, դատարանի մատչելիության իրավունքների երաշխավորման տեսանկյունից՝ Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից անհրաժեշտ ծավալով որակյալ իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորությունների բացակայության պայմաններում:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնությունը հանրային պաշտպանության միջոցով, որի շրջանակներում անվճար իրավաբանական օգնությունը, ի թիվս անձանց մի շարք խմբերի, տրամադրվում է նաև անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև, բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց:

Սույն հետազոտության շրջանակներում Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի 11-րդ կետում նշված *բավարար եկամուտ* եզրույթի մեկնաբանման համար գործնականում որպես ուղենիշ են ընդունվում անձի ամսական եկամուտը, օրենքով սահմանափակված նվազագույն աշխատավարձի, ինչպես նաև նվազագույն սպառողական զամբյուղի չափերը: Դրան զուգահեռ, սակայն, յուրաքանչյուր դեպքում ցուցաբերվում է անհատական մոտեցում, մասնավորապես հաշվի

են առնում նաև անձի խնամքին գտնվող անձանց թիվը, վարձակալությամբ բնակվելու հանգամանքը, դիմողի և ընտանիքի անդամների առողջական վիճակը:

Թեև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի 11-րդ կետով սահմանված չափանիշները նախատեսում են անվճար իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ունեցող անձանց բավականին մեծ շրջանակ, և նշված չափանիշները իրավակիրառ պրակտիկայում ենթարկվում են լայն մեկնաբանության, այնուամենայնիվ, գտնում ենք, որ օրենքի մակարդակով հստակեցման կարիք ունեն *բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ* հասկացությունները՝ հնարավոր հայեցողական և ոչ իրավաչափ մեկնաբանությունն ու կիրառումը բացառելու նպատակով:

## Իրավակիրառ պրակտիկա/խնդիրներ

Հարկ ենք համարում նաև անդրադառնալ գործնականում անկա անվճար իրավաբանական օգնությանն առնչվող առանձին խնդիրներին արդյունավետ դատական պաշտպանության, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների ապահովման համատեքստում հաշվի առնելով դատական ներկայացուցչության իրականացմանն առնչվող օրենսդրական սահմանափակումները:

Այսպես, պետության կողմից ֆինանսավորվող անվճար իրավաբանական օգնություն տրամադրող միակ կառույցը Հանրային պաշտպանի գրասենյակն է, որի գործունեության արդյունավետությամբ է անմիջականորեն պայմանավորված պետության ստանձնած՝ որակյալ իրավաբանական օգնություն ապահովելու պարտավորության կատարումը: Հետևաբար Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից անհրաժեշտ ծավալով և որակով իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորության բացակայությունը անխուսափելիորեն հանգեցնելու է դատական ներկայացուցչության իրականացման օրենսդրական սահմանափակումների ոչ իրավաչափությանը:

Սույն հետազոտության շրջանակներում իրականացված հարցման հիման վրա՝ Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից

տրամադրվել են նախորդ երեք տարիներին առնչվող վիճակագրական տվյալներ՝ հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության մասով, ինչպես նաև տեղեկատվություն գործնականում առկա խնդիրների վերաբերյալ: Այսպես,

- մեկ հանրային պաշտպանի հաստիքին միջինը բաժին է ընկել.
  - 2018 թ.-ին՝ 152 քրեական գործ,
  - 2019 թ.-ին՝ 169 և
  - 2020 թ.-ին՝ 160 գործ,
- քաղաքացիական և վարչական գործերով յուրաքանչյուր հաստիքի բաժին է ընկել 702, 748 և 609 գործ՝ համապատասխանաբար 2018, 2019 և 2020 թթ.-ին:

Ըստ գրասենյակի հայտնած տվյալների՝ թեև ՀՀ նախագահի՝ 21.04.2009 թ.-ի թիվ ՆԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թթ.-ի ռազմավարական գործողությունների ծրագրից բխող միջոցառումների ցանկով<sup>159</sup> նախատեսվել է անվճար իրավաբանական օգնության շրջանակների ընդլայնման միջոցառումը, ըստ որի՝ նախատեսվում էր հանրային պաշտպանների հաստիքային թվաքանակը հասցնել առնվազն 75-ի մինչև 2010 թ.-ի մարտի 3-րդ տասնօրյակը, մինչ օրս Փաստաբանական պալատին հատկացված գումարը բավականացրել է միայն 59 հանրային պաշտպանների հաստիքների համար:

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջին տեղակալը սույն հետազոտության շրջանակում իրականացված հարցմանն ի պատասխան հայտնել է, որ գործող հաստիքներով գործերի՝ վերջին տարիներին գրանցվող աճի պարագայում մոտ ապագայում անհնարին կդառնան քրեական գործերով վարույթ իրականացնող մարմինների՝ ժամանակին կատարման ապահովումը և Հանրային պաշտպանի գրասենյակ դիմող բոլոր քաղաքացիներին քաղաքացիական, վարչական և սահմանադ-

---

159. Մանրամասն տե՛ս ՀՀՊՏ 2009.04.25/21(687) Հոդ.438, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=50926>:

րական գործերով անվճար որակյալ իրավաբանական օգնության ժամանակին տրամադրումը: Հանրային պաշտպանի գրասենյակն ի վիճակի չի լինի ամբողջությամբ կատարել իր առաքելությունը՝ որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը:

## Եզրակացություն

Թեև սույն բաժնում ներառված գործերով կայացված ՄԻԵԴ վճիռներից անմիջականորեն բխող օրենսդրական խնդիրները լուծվել են ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից համապատասխան որոշումների<sup>160</sup> ընդունման արդյունքում, առկա են անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովմանն առնչվող Էական խնդիրներ՝ անվճար իրավաբանական օգնության տրամադրման համատեքստում:

---

160. Թիվ ՍԴՈ-765, ՍԴՈ-1192, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1220 որոշումներ:

## ՆԻԿՈԼՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅՄԱՏԱՆԻ

[ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 74438/14]<sup>161</sup>

Նշված գործով կայացված վճռով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում այն հիմքով, որ դիմումատուն չի կարողացել հետամուտ լինել իր կողմից ներկայացված ամուսնալուծության և վտարման հայցին, ինչպես նաև իր գործունակությունը վերականգնելու նպատակով վարույթ հարուցել դատարանում, քանի որ ՀՀ օրենսդրությամբ դատարանի մատչելիության անվերապահ արգելք էր սահմանված անգործունակ անձանց համար: Իրավիճակն ավելի է վատթարացել շահերի բախման պայմաններում դիմումատուի որդուն որպես նրա խնամակալ նշանակելու արդյունքում: Դիմումատուին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտը հիմնված է եղել «ոչ արդիական» հոգեբուժական փորձաքննության վրա՝ առանց քննարկելու հոգեկան խանգարման աստիճանը:

## ՆԻԿՈԼՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅՄԱՏԱՆԻ

ՄԻԵԴ-ը, ի թիվս այլ խախտումների, արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում նաև ամուսնալուծության և վտարման գործով վարույթով դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտման հիմքով: Դատարանը մասնավորապես արձանագրել է, որ ներպետական օրենսդրությամբ անվերապահ արգելք էր դրվել կյանքի բոլոր ոլորտներում դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի նկատմամբ: Ավելին, ներպետական իրավական համակարգում չեն տարբերակվել հոգեկան խանգարում ունեցող անձանց անգործունակության տարբեր աստիճաններ, և չեն նախատեսվել տվյալ անձի անհատական կարիքներին համապատասխանեցված պաշտպանության միջոցներ:

---

161. Նիկոյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 74438/14, 2019 թ. հոկտեմբերի 3), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-196149>:



Ուստի երբևէ անդրադարձ չի կատարվել, և պատասխաններ չեն տրվել այնպիսի հարցերի, թե արդյոք դիմումատուն կարող էր հասկանալ ամուսնալուծության կամ վտարման նշանակությունը, և արդյոք կյանքի այդ ոլորտում նա կարող էր գործել ինքնուրույն, այդ թվում դատարանում իր իրավունքները պաշտպանել՝ առանց խոչընդոտելու արդարադատության պատշաճ իրականացումը կամ վնասելու իրեն կամ այլոց: Դատարանն արձանագրել է, որ ամեն դեպքում դատարանի մատչելիության սահմանափակումը արդարացված չի եղել գործի կոնկրետ հանգամանքներով: Դատարանը այս համատեքստում անդրադարձել է նաև շահերի բախման պայմաններում ինսամակալի նշանակման ինդիքին՝ արձանագրելով, որ ամբողջությամբ գործունակությունից և դրա հետևանքով նաև իր՝ դատարանի մատչելիության իրավունքից զրկված լինելով, դատարաններում իր իրավական շահերը պաշտպանելու միակ պատշաճ և արդյունավետ միջոցը կլինեն կոնֆլիկտներից զերծ ինսամակալությունը: Դատարանն արձանագրել է, որ ներպետական դատարանը դիմումատուի հայցից հրաժարվելու մասով պահանջն ընդունելու հարցում որոշում կայացնելիս չի իրականացրել անհրաժեշտ ուսումնասիրություն և վերահսկողություն, հետևաբար ամուսնալուծության և վտարման գործով վարույթն ավարտելը հիմնավորված չէր:

Միե՛հ-ն արձանագրել է, որ հոգեկան հիվանդության առկայությունը նույնիսկ լուրջ հիվանդության դեպքում չի կարող լինել գործունակությունից ամբողջությամբ զրկելը հիմնավորելու միակ պատճառը. դրա համար հոգեկան հիվանդությունը պետք է լինի այդ միջոցի համար հիմք համարվող «որոշակի տեսակի կամ աստիճանի»: Դատարանն արձանագրել է, որ Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված չէին այնպիսի իրավիճակների սահմանային կամ հարմարեցված լուծում տալու տարբերակներ, ինչպես դիմումատուի դեպքում է, և այս պարագայում տարբերակում է կատարված միայն ամբողջությամբ գործունակի և ամբողջությամբ անգործունակի միջև: Ուստի դատավորի կողմից ձևակերպված՝ բժիշկներին ուղղված հարցերը նույն ձևով չեն վերաբերել դիմումատուի հոգեկան հիվանդության «տեսակին և աստիճանին»: Արդյունքում հոգեբուժական փորձագիտական եզրակացության մեջ անհրաժեշտ մանրամասնությամբ չի վերլուծվել դիմումա-

տուհի անգործունակության աստիճանը, եզրակացության մեջ չի բացատրվել, թե որ գործողությունները դիմումատուն չի կարող հասկանալ և ղեկավարել: Դիմումատուի հոգեկան հիվանդության աստիճանը հստակ չէ, ինչպես նաև հստակ չեն նրա սոցիալական կյանքի, առողջության, նյութական շահերի, նրա հիվանդության հնարավոր հետևանքները: Դատարանի վճռով սույն գործով արձանագրվել են նաև մի շարք այլ խախտումներ, այդ թվում Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում:

## **Կառավարության գործողությունների հաշվետվություն (16.11.2020 թ.)<sup>162</sup> (հիմնական ընդհանուր միջոցներ)**

- Կառավարությունը շարունակաբար իրականացնում է համապարփակ միջոցառումներ, որոնք ուղղված են մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավմանը նրանց վերաբերող բոլոր որոշումների կայացման գործընթացներում:
- ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 07.04.2015 թ.-ի որոշմամբ հակասահմանադրական է ճանաչվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասը, ինչի արդյունքում յուրաքանչյուր անգործունակ ճանաչված անձ իր գործունակությունը վերականգնելու պահանջով դատարան դիմելու իրավունք ձեռք բերեց: Սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանվեցին անգործունակ անձանց իրավունքների երաշխավորմանն առնչվող մի շարք կարևոր սկզբունքներ:
- Դատական կարգով անգործունակ ճանաչված անձանց կողմից իրենց գործունակությունը վերականգնելու նպատակով դատարան դիմելու իրավունքն ամրագրվել է 2018 թ.-ի ապրիլի 9-ից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում: Գործող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթներով ամրագրվել է, որ առաջին ատ-

162. Մանրամասն տե՛ս [http://hudoc.exec.coe.int/eng/?i=DH-DD\(2020\)1061E](http://hudoc.exec.coe.int/eng/?i=DH-DD(2020)1061E):

յանի ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացուն անգործունակ ճանաչելու մասին դիմումը քննում է անգործունակ ճանաչվող անձի, նրա փաստաբանի ու խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ, ինչն իր հերթին ապահովում է շահերի բախումից զերծ խնամակալի նշանակման հնարավորությունը, քանի որ խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությունը թույլ է տալիս վերջինիս գնահատել անգործունակ ճանաչվող անձի և նրա հնարավոր խնամակալի միջև հարաբերությունների բնույթը: Ներկայացվել են Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված մյուս երաշխիքները այս գործերի քննության շրջանակում:

- «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համալիր ծրագրի» շրջանակում (2017-2021 թթ.) մշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի նախագիծ, որը սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական սկզբունքները:
- Ներկայացվել են նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդմանն ուղղված այլ միջոցներ:

## Օրենսդրական կարգավորումներ/խնդիրներ

Ելնելով *Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի* վճռի հիմնավորումներից՝ հարկ ենք համարում արձանագրել, որ անգործունակության ճանաչման առնչությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգավորումները նույն կերպ շարունակում են չհամապատասխանող մնալ Կոնվենցիայի պահանջներին այնքանով, որքանով դրանցում տարբերակում է կատարված միայն անձին ամբողջությամբ գործունակ կամ ամբողջությամբ անգործունակ ճանաչելու հնարավորության միջև՝ բացառելով հոգեկան խանգարման տեսակից ու աստիճանից ելնելով գործունակության սահմանափակման որևէ միջանկյալ ձևի ընտրությունը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նրա նկատմամբ սահմանվում է ինսամակալություն<sup>163</sup>: Մինչդեռ սույն գործով կայացված ՄԻԵԴ-ի վճռով շեշտվել է այն հանգամանքը, որ **դիմումատուի վիճակը պահանջել է նրա նկատմամբ պաշտպանության որևէ տեսակի միջոց, ուստի ներպետական դատարանը չի ունեցել այլ ընտրություն, քան ամբողջական անգործունակության կիրառումն ու դրա պահպանումն է. սա ամենախիստ միջոցն է և նշանակում է ինքնուրույնության լրիվ կորուստ կյանքի գրեթե բոլոր ոլորտներում:**

Կարևոր է նշել նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ամուսնալուծության և վտարման գործով դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտման (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում) արձանագրման համար որոշիչ է եղել ներպետական օրենսդրությամբ հոգեկան խանգարում ունեցող անձանց անգործունակության տարբեր աստիճաններ և տվյալ անձի անհատական կարիքներին համապատասխանեցված պաշտպանության միջոցներ նախատեսված չլինելու հանգամանքը: Հետևաբար հոգեկան խանգարման տեսակով և աստիճանով պայմանավորված՝ անձի գործունակության սահմանափակման միջանկյալ ձևի նախատեսումը ՀՀ օրենսդրությամբ ուղղակիորեն բխում է *Նիկոյանն ընդդեմ Հայաստանի* կայացված վճռի կատարմանը միտված ընդհանուր միջոցներից<sup>164</sup>:

163. Ինչ վերաբերում է Օրենսգրքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ քաղաքացու գործունակության սահմանափակմանը, ապա այս հիմքերը պայմանավորված են բացառապես ոգեից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը կյուրական ծանր դրության մեջ դնելու հանգամանքի հետ:

164. Ավելին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 07.04.2015 թ.-ի թիվ ՍԴՈ-1197 որոշմամբ սահմանված է եղել հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում անձանց գործունակության նկատմամբ անհամաչափ միջամտությունները բացառելու անհրաժեշտությունը՝ անձին «անգործունակ» կամ «սահմանափակ գործունակ» ճանաչելու հիմքերը առավել ամբողջական դարձնելու միջոցով: Արձանագրելով, որ դեռևս 2014 թվականի փետրվարի 27-ի ՀՀ Կառավարության «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»

Անձի գործունակության սահմանափակման միջանկյալ ձևերի բացակայությունը առավել խնդրահարույց է դառնում անգործունակ անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքն ապահովող իրավակարգավորումների համատեքստում: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ անչափահասների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց իրավունքները և օրինական շահերը դատարանում համապատասխանաբար ներկայացնում են նրանց ծնողները (որդեգրողները), խնամակալները կամ հոգաբարձուները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նրանք կարող են դատարանում ինքնուրույն ներկայացնել իրենց շահերը: Օրենքով նախատեսված դեպքերում գործի քննության ընթացքում նրանք ունեն իրենց շահերին առնչվող հարցերի վերաբերյալ լավելու իրավունք: Միևնույն ժամանակ անգործունակ ճանաչված անձինք կարող են ինքնուրույն դիմել դատարան միայն նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում<sup>165</sup>: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներից բխում է, որ դրանք են քաղաքացուն գործունակ ճանաչելու պահանջով դատարան դիմելու դեպքերը: Ուստի և, բացառությամբ վերոնշյալ դեպքերի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը չի ապահովում անգործունակ ճանաչված անձանց՝ անմիջականորեն դատարան դիմելու իրավունքը, ինչը գործունակության սահմանափակման միջանկյալ ձևերի, հոգեկան խանգարման տեսակի և աստիճանի նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերելու հնարավորության բացակայության պայմաններում կրկին հանգեցնում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակման խնդրին:

Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին, ապա այն սահմանում է հետևյալ իրավակարգավորումները անգործունակ ճանաչված անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքի ապահովման առնչությամբ: Տասնչորս տարեկան չդարձած

N 303-Ն որոշման 70-րդ կետով նախատեսվել էր հստակեցնել հոգեկան առողջության և (կամ) մտավոր խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու հիմքերը և մշակել անգործունակության գնահատման տարբերակված չափանիշները:

165. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը, 2-րդ հոդված, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասեր:

անչափահասների, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձանց իրավունքները և ազատությունները դատավարությունում ներկայացնում են նրանց օրինական ներկայացուցիչները՝ ծնողը, ինսամակալը կամ օրենքով նման իրավունք ունեցող այլ անձինք: Դատարանը կարող է անգործունակ ճանաչված անձին ընձեռել գործի քննության ընթացքում լավելու իրավունք: Վերոգրյալ իրավակարգավորումներից ելնելով՝ վարչական դատավարությունում ևս արձանագրում ենք անգործունակ ճանաչված անձի համար անձամբ դատարան դիմելու իրավունքի անհամաչափ սահմանափակման խնդիր՝ նույնական հիմնավորումներով:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում անդրադառնալ թիվ ՎԴ/0477/05/15 վարչական գործով<sup>166</sup> ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշմանը, որի ընդունման արդյունքում դատական պրակտիկայում որոշակի երաշխիքներ ստեղծվեցին անգործունակ ճանաչված անձի կողմից իր նկատմամբ ինսամակալ նշանակելու վերաբերյալ որոշումը դատական կարգով բողոքարկելու համար: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հոգեկան խանգարում ունեցող անձը պետք է ունենա անձամբ լավելու հնարավորություն՝ անգործունակ ճանաչվելու հետևանքով իր նկատմամբ ինսամակալություն սահմանելու վերաբերյալ գործերով իր տեսակետն արտահայտելու համար, քանի որ նշված որոշման կայացումը վերջինիս համար ոչ պակաս կարևոր է՝ հաշվի առնելով, որ իր իրավունքների և շահերի պաշտպանությունն այլևս պետք է իրականացվի բացառապես ինսամակալի միջոցով: Միաժամանակ նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ ինսամակալի նշանակումը դատական կարգով բողոքարկելու հնարավորություն ունեցող անձանց կազմում անգործունակ ճանաչված անձին չներառելու պայմաններում գործնականում չեն բացառվում այնպիսի դեպքերը, երբ այդ անձինք, որոշակի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պայմաններից ելնելով, չբողոքարկեն ինսամակալի նշանակումն այն դեպքում, երբ անգործունակ ճանաչված անձի շահն ուղղակիորեն թելադրում է այդպիսի բողոքարկում:

Հարկ ենք համարում արձանագրել նաև, որ թե՛ օրենսդրության և

---

166. Գ. Նիկոլյանի ընդդեմ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ինսամակալության և հոգաբարձության մարմնի:

թե՛ իրավակիրառ պրակտիկայի մակարդակում առկա են անգործունակ ճանաչված անձանց այլ հիմնարար իրավունքների իրացման հետ կապված Էական խնդիրներ, որոնց չենք անդրադառնում սույն հետազոտության շրջանակներում:

## Իրավակիրառ պրակտիկա/խնդիրներ

Սույն հետազոտության շրջանակներում իրականացվել է նաև դատական պրակտիկայի ուսումնասիրություն<sup>167</sup> Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից վճռի կայացման պահից՝ 03.10.2019 թ.-ից, մինչև 16.02.2021 թ.-ը՝ վճռով արձանագրված առանձին խնդիրների ամփայությունը/բացակայությունը գնահատելու նպատակով:

Այսպես, վճռով, ի թիվս այլ հանգամանքների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ դատարանի կողմից բժիշկներին ուղղված հարցերը չեն վերաբերել դիմումատուի հոգեկան հիվանդության «տեսակին և աստիճանին»: Արդյունքում հոգեբուժական փորձագիտական եզրակացության մեջ անհրաժեշտ մանրամասնությամբ չի վերլուծվել դիմումատուի անգործունակության աստիճանը, եզրակացության մեջ չի բացատրվել, թե որ գործողությունները դիմումատուն չի կարող հասկանալ և ղեկավարել:

Այսպես, ուսումնասիրված ժամանակահատվածում անձին անգործունակ ճանաչելու պահանջով դատարանները ստացել են 338 դիմում: Նշված դիմումների ուսումնասիրությամբ առանձնացվել է 166 գործ, որոնցով առկա է հրապարակված որոշում կամ նշում նշանակված փորձաքննության մասին, ինչպես նաև այն դիմումները վարույթ ընդունելու մասին որոշումներ, որոնցով դատարաններն անդրադարձել են անգործունակ ճանաչված անձին իրավական օգնություն տրամադրելու և/կամ նրա պարտադիր մասնակցությունն ապահովելու հարցին: Նշված 166 գործից 141-ով նշանակված է եղել դատահոգեբուժական կամ դատահոգեբուժական

---

167. Datalex դատական տեղեկատվական համակարգում ներառված տվյալների և ակտերի հիման վրա:

և դատահոգեբանական համալիր փորձաքննություն: Համապատասխան որոշումները հրապարակված են եղել 108 գործով, մյուս 33 գործով առկա են փորձաքննություն նշանակելու հիմքով գործի վարույթը կասեցնելու որոշումներ կամ առանձին տողով համարժեք այլ նշումներ:

Նշված 108 որոշումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ դատարանի կողմից փորձաքննությանը առաջադրվում են տարբեր ձևակերպմամբ երկու հիմնական հարցադրումներ՝

1. անգործունակ ճանաչվող անձի մոտ առկա՞ է որևէ հոգեկան խանգարում (հոգեկան հիվանդություն), թե՞ ոչ,
2. եթե այո, ապա տվյալ անձը դրա հետևանքով կարո՞ղ է հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, թե՞ ոչ:

Ուսումնասիրված գործերից 12-ով որպես հարցադրում հստակ նշվում է՝ անգործունակ է անձը, թե՞ ոչ/կարող է՞ ճանաչվել անգործունակ, թե՞ ոչ: Ուսումնասիրված գործերից 5-ով առաջադրվում է նշված երկու հարցերից միայն մեկը:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ դատարանի կողմից փորձագետին առաջադրվող հարցերի տեսանկյունից դատական պրակտիկայում փոփոխություն չի արձանագրվել, ինչը որոշակիորեն պայմանավորված է նաև ՀՀ օրենսդրությամբ գործունակության սահմանափակման միջանկյալ ձևերի սահմանված չլինելու հանգամանքով:

Ինչ վերաբերում է անգործունակ ճանաչվող անձի՝ դատաքննությանը մասնակցության ապահովման խնդրին, ապա 166-ից 49 գործով առկա են որոշումներ, որոնցով սահմանվում են անգործունակ ճանաչվող անձի պարտադիր մասնակցությունը և/կամ նրան իրավական օգնություն տրամադրելը: Սա, իհարկե, չի նշանակում, որ մնացած գործերով անգործունակ ճանաչվող անձինք վարույթներում չեն ներգրավվում: Գործին մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հաճախ հրապարակվում է միայն վճռում, ուստի նշված 49 գործերն առանձնանում են նրանով, որ դատարանը անմիջապես դիմումը վարույթ ընդունելու որոշմամբ



կամ դրան զուգահեռ առանձին որոշմամբ լուծել է անգործունակ ճանաչվող անձանց իրավական օգնություն տրամադրելու և/կամ դատաքնությանը նրանց մասնակցությունը պարտադիր սահմանելու հարցերը:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությամբ արձանագրվել է անձին անգործունակ ճանաչելու պահանջով դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակից *ընտանիքի անդամ* հասկացության ոչ միատեսակ մեկնաբանության և կիրառման հետ կապված խնդիրը: Այսպես, մի շարք գործերով վարույթ է հարուցվել շահագրգիռ անձի ազգականի կողմից ներկայացված դիմումի հիման վրա՝ նրա հետ համատեղ ապրելու փաստով պայմանավորված<sup>168</sup>: Առկա են նաև գործեր, որոնցով մերժվել է դիմումը վարույթ ընդունելը՝ նկատի ունենալով ՀՀ ընտանեկան օրենսգրքի կարգավորումները, քանի որ ընտանիքի անդամ են համարվել բացառապես անգործունակ ճանաչվող անձի ծնողները կամ զավակները, ընդ որում, դատարանը մանրամասն վերլուծությամբ պատճառաբանել է այլ ազգականի (քրոջ) համատեղ բնակվելու հանգամանքը բավարար պայման չհամարելու իր դիրքորոշումը<sup>169</sup>: *Ընտանիքի անդամ* հասկացության տարաբնույթ մեկնաբանումը և կիրառումը խնդրահարույց են անձին անգործունակ ճանաչելու ընթացակարգի օրինականության, ինչպես նաև տվյալ անձի իրավունքների և օրինական շահերի լիարժեք պաշտպանության տեսանկյունից:

## Եզրակացություն

Հետազոտության արդյունքում փաստում ենք, որ սույն բաժնում ներառված գործերով ՄԻԵԴ կայացրած վճիռներից բխող ընդհանուր միջոցների կիրառման խնդիր առկա է թե՛ օրենսդրական մակարդակում, թե՛ իրավակիրառ պրակտիկայում: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգավորումները անգործունակության ճանաչման առնչությամբ չեն համապատասխանում Կոնվենցիայի պահանջներին այնքանով, որքանով դրանցում

168. Մանրամասն տե՛ս ԼԴ/4358/02/19, ԱԿԴ2/1976/02/19:

169. Մանրամասն տե՛ս ԵԴ/42573/02/19, ԵԴ/8053/02/20, ԵԴ/31478/02/20:

տարբերակում է կատարված միայն անձին ամբողջությամբ գործունակ կամ ամբողջությամբ անգործունակ ճանաչելու հնարավորության միջև՝ բացառելով հոգեկան խանգարման տեսակից ու աստիճանից ելնելով գործունակության սահմանափակման որևէ միջանկյալ ձևի ընտրությունը: ՀՀ քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերը չեն ապահովում անգործունակ ճանաչված անձանց՝ անմիջականորեն դատարան դիմելու իրավունքը<sup>170</sup>, ինչը գործունակության սահմանափակման միջանկյալ ձևերի, հոգեկան խանգարման տեսակի և աստիճանի նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերելու հնարավորության բացակայության պայմաններում հանգեցնում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակման: Վճռի կայացումից ի վեր դատարանի կողմից փորձագետին առաջադրվող հարցերի տեսանկյունից դատական պրակտիկայում փոփոխություն չի արձանագրվել, ինչը որոշակիորեն պայմանավորված է նաև ՀՀ օրենսդրությամբ գործունակության սահմանափակման միջանկյալ ձևերի սահմանված չլինելու հանգամանքով: Դատական պրակտիկայում առկա է նաև անձին անգործունակ ճանաչելու պահանջով դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակից՝ *ընտանիքի անդամ* հասկացության ոչ միատեսակ մեկնաբանության և կիրառման հետ կապված խնդիր:

## Առաջարկություններ

1. Հստակեցնել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի 11-րդ կետով սահմանված *բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ* հասկացությունները՝ հնարավոր հայեցողական և ոչ իրավաչափ մեկնաբանությունն ու կիրառումը բացառելու նպատակով:
2. Ապահովել անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մեխանիզմների արդյունավետությունը՝ դատական ներ-

---

170. Բացառությամբ օրենքով սահմանված խիստ սահմանափակ դեպքերի:

կայացուցչության իրականացման օրենսդրական սահմանափակումների իրավաչափության ապահովման նպատակով:

3. Վերանայել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգավորումները անգործունակության ճանաչման հիմքերի վերաբերյալ՝ սահմանելով հոգեկան խանգարման տեսակից ու աստիճանից ելնելով գործունակության սահմանափակման միջանկյալ ձևերի ընտրության հնարավորություն:
4. Վերանայել անգործունակ ճանաչված անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքին առնչվող կարգավորումները՝ բացառելով իրենց իրավունքներին և շահերին առնչվող այլ խնդիրներով դատարան դիմելու կամ լսված լինելու իրավունքի անհամաչափ սահմանափակումները:
5. Իրավակիրառ պրակտիկայում ապահովել անձին անգործունակ ճանաչելու պահանջով դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակի վերաբերյալ միատեսակ մեկնաբանությունն ու կիրառությունը, ինչպես նաև փորձաքննության շրջանակներում ուսումնասիրության ենթակա հարցերի անհատակա-նացումը:

## ABSTRACT

The purpose of this study is to identify issues related to the implementation of the judgments of the European Court of Human Rights against Armenia in the cases where the Court found a violation of Article 6 of the European Convention on Human Rights.

Within the scope of the research a number of judgments delivered in respect of Armenia (as of October 2020) were highlighted, general measures undertaken by the state, as well as relevant legislation, law enforcement practice, responses to the inquiries referred to the competent authorities have been studied and analyzed. In a number of cases lawyers, as well as several judges were interviewed in order to assess the implementation issues in a more comprehensive way.

The study revealed problems at the level of legislation and law enforcement practice which lead to the recurrence of similar violations and hinder the proper implementation of ECHR judgments by the state. More importantly, the analysis of the situation and the description of the problems are finalized proposing specific recommendations which should contribute to preventing similar violations in the future.

**Keywords:** European Court of Human Rights, Convention, Article 6, right to a fair trial, witness, criminal procedural guarantees, compulsory enforcement of judicial acts, reasonable time, reasoning of judicial acts, free legal aid, people declared legally incapable, access to court.

## ՀԱՍՈՈՏԱԳԻՐ

Սույն հետազոտության նպատակն է բացահայտել և վեր հանել Հայաստանի նկատմամբ կայացված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարմանն առնչվող խնդիրները այն գործերով, որոնցով Դատարանը ճանաչել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:

Հետազոտության շրջանակներում առանձնացվել են Հայաստանի նկատմամբ կայացված<sup>171</sup> մի շարք վճիռներ<sup>172</sup>, ուսումնասիրվել են դրանց կատարման ուղղությամբ պետության ձեռնարկած ընդհանուր միջոցները, վեր են լուծվել վերաբերելի օրենսդրությունը և համապատասխան իրավակիրառ պրակտիկան, հետազոտության շրջանակներում իրավասու մարմիններին ուղարկված հարցումների պատասխանները: Առանձին դեպքերում հարցազրույցներ են անցկացվել փաստաբանների, ինչպես նաև որոշ դատավորների հետ՝ իրավակիրառ բնույթի խնդիրների համապարփակ վերլուծության շրջանակներում: Իրականացված ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի մակարդակում առկա այն խնդիրները, որոնք նպաստում են նույնաբովանդակ խախտումների կրկնմանը, խոչընդոտում են ՄԻԵԴ վճիռների պատշաճ կատարումը պետության կողմից: Առավել կարևոր է այն, որ իրավիճակի վերլուծությունն ու խնդիրների նկարագրությունն ամփոփվում են կոնկրետ առաջարկություններով, որոնք պետք է նպաստեն ապագայում համանման խախտումների կանխարգելմանը:

**Քանակի բառեր՝** Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Կոնվենցիա, 6-րդ հոդված, արդար

171. 2020 թվականի հոկտեմբերի դրությամբ:

172. Վճիռների կատարման վիճակին առնչվող վերլուծությունը կատարվել է անկախ Նախարարների կոմիտեի կողմից վերահսկողական ընթացակարգերի ավարտված կամ ընթացիկ լինելու հանգամանքներից:

դատաքննության իրավունք, վկա, քրեադատավարական երաշխիքներ, դատական ակտերի հարկադիր կատարում, ողջամիտ ժամկետ, դատական ակտերի պատճառաբանում, անվճար իրավաբանական օգնություն, անգործունակ ճանաչված անձինք, դատարանի մատչելիություն:

